# ՍԻՈՆ

## ԱՄՍԱԳԻՐ

### ԿՐՕՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏ. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՆՈՐ՝ ՇՐՋԱՆ 1956 Լ. ՏԱՐԻ

«سيون» مجلة ارمنية شهرية، دينية، ادبية، ثقافية، للغة والبيان

"SION„ an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

digitised by A.R.A.R.@

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Երես

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**
— Կրօնական դաստիարակութիւն 169

**ԿՐՕՆԱԿԱՆ**
— Մարդու խղճական արժէքը — ԴՐ. Ա. ՍԱՐԱՖԵԱՆ 173

Արձանագրութիւն Եպիսկոպոսական ժողովոյ 178

**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**
— Առանց բարկութեան — ԱՆՍԼ 189
— * * * — ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ 189
— Աղօթք — ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ 190
— Մոռնումենս — ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ 190
— Սպասում — ԶԱՒԷՆ Վ. Զ. 191
— * * * — ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ 191

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**
— Կորիւն եւ «Սամարացին» — Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ 192

**ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**
— Պապ Արշակունի — ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ 199

**ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ**
— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ — ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ 203

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ**
— Հայկական զարդարուեստ — Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ 208

**ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ**
— Ազատութիւն եւ հաւատք — Թրգմ. ԽՄԲ. 213

**Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**
— Հեռագիրներ 218
— Եկեղեցական-Բեմական 219
— Պաշտօնական 220
— Մրցանակաբաշխութեան Հանդէս Ժառ. Վարժ. եւ Ընծայարանի 221
— Ամավերջի Հանդէս Ամմանի Հերումեան Ազգ. Վարժարանի 222
— Ամավերջի Հանդէս Ս. Թարգմանչաց Վարժարանի 222
— Ձեռնադրութիւն Աբեղաներու 222
— Քահանայական ձեռնադրութիւն 223

**ՏԻՐՈՒՆԻ**
— Հանգիստ՝ Թէհմինա Մայրապետ Սարգիսեանի 223



ՍԻՈՆ-ի Տարեկան բաժանեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20

Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)



digitised by A.R.A.R.@

# ՍԻՈՆ

Լ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1956 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԹԻՒ 7-8


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

## ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

*Գովելի առաջադրութեամբ, Ամերիկաներէն մինչև Մերձաւոր Արևելքի զանազան երկիրները, բոլոր գաղութները գրեթէ առանց բացառութեան լծուած են դպրոցական կազմակերպչական աշխատանքներու. ի հարկէ տնտեսական պայմանները բարւոքելով, անկէ անդին, բարոյական, իմացական և ֆիզիքական կրթանքները ամրացնելու և հիմնաւորելու հետամտելով։*

*Ազգային–եկեղեցական մեր կազմակերպչական գործին մէջ շատ բան փոխուած է, զանազան գաղութներու մէջ մեր հաստատուելու օրերէն մինչև այսօր։ Եկեղեցիներ, դպրոցներ, միութիւններ, հայրենակցականներ շինած ենք, յանձնախումբեր, տիկնանց օժանդակ մարմիններ և այլ մարմիններ ճիգ չեն խնայեր յանձանձելու համար ձեռնարկներ՝ որոնք բարոյական–մշակութային նպատակ մը հետապնդելէ ետք կը ձգտին այսպէս կամ այնպէս նիւթական շահ մըն ալ ապահովել այս կամ այն բարենպատակ հաստատութեան։*

*Այս բոլորը լաւ, նոյնիսկ շա՛տ լաւ։ Մխիթարական կողմն է գուցէ մեր գաղթական կեանքին, որուն համար սովոր ենք ածականներ գործածել, պատկերաւոր բացատրութիւններ տալու համար։*

*Բայց երբ ընդհանուր ակնարկով մը դիտենք գաղութներու պատկերը, տրտում և խոցելի շատ մը տեղեր կը տեսնենք համայնապատկերին մէջ։ Մեր գոյութիւնը այլազան երկիրներու մէջ կը ճանչցուի իբրև «զուտ կրօնական համայնք». և կարծես արդարացնելու համար այդ անունն ու վերագրումը ամէն ճիգ ի գործ կը դնենք պառակտումներով, ազգային հարցերով, նորանոր խնդիրներ յարուցանելով զգացնելու մեր գոյութիւնը։*

*Միշտ որակում մըն է մեր Ս. Եկեղեցիին համար ըսել Ազգային Եկեղեցի։ Բայց այդ երբեք չի նշանակեր թէ մենք իւրաքանչիւրս իրաւունք ունի վերջին ըսելիք մը ունենալ անոր բարեկարգութեան, սահմանադրութեան և վերջապէս կաթողիկոսական ընտրութեան մէջ։ Գործածական եզրեր կան որոնք կը նմանին մաշած դրամներու և որոնց արժէքը դժուար կ՚ըմբռնուի։ Նախ տարրական իբրև պարտականութիւն, տիպար քրիստոնեաներ ըլլանք։ Ինչպէս ուրիշ*

digitised by A.R.A.R.@

ամէն բան աշխատանքով, ճիգով եւ որոշ զոհաբերութեամբ ձեռք կը ձգուի, այնպէս ալ ճշմարիտ քրիստոնեայ մը ըլլալը։ Բայց այս աշխատանքը վերին աստիճանի կարեւոր եւ կենսական, պէտք է սկսի տունէն, դպրոցին եւ եկեղեցին մէջ շարունակուելու համար։

Դպրոցներու մէջ այլեւս դասակարգ մը կը կազմենք իբրեւ մանր առեւտրական եւ արհեստաւոր։ Լոյսի ծարաւ մեր պատանիները երկրորդական կրթութենէ մը ետք, կը ձգտին ապահովել բարձրագոյն կրթութեան համար անհրաժեշտ միջոցները. վասնզի,

Ա.— Ամենուրեք կը փնտռուին եւ ի պատուի են մասնագէտներ։

Բ.— Մասնագիտութիւն մը ձեռք ձգելով տնտեսապէս անկախ կ'ըլլան։

Գ.— Աւելի լեցուն եւ խորունկ կեանք մը ապրելու համար անհրաժեշտ է որ հետեւին իրենց նախասիրութեանց եւ արուեստներու, ինչ որ կ'իրագործուի միայն նիւթական բարօր պայմաններու մէջ։

Դ.— Եւ վերջապէս մոռնան այն դառն պայմանները որոնց մէջ իրենց մանկութիւնը անցաւ։

Այսպիսի նպատակի մը իրագործման համար խելայեղ վազքի ընթացքին, բնական է որ ստուերի մէջ մնայ կրօնական դաստիարակութիւնը, իբրեւ աւելորդ բեռ մը։

Երկրորդաբար տակաւին, մեր երկրորդական եւ նախապատրաստական վարժարաններուն մէջ, ուսումնական ծրագիրը պէտք եղածէն աւելի խճողուած է կարգ մը անհրաժեշտ առարկաներու դասաւանդութեամբ, մասնաւորաբար մե՛ր կարիքները դիմաւորելու համար, ինչպիսին է օրինակ, օտար լեզուներու ուսուցումը. հետեւաբար կա՛մ ծրագրէն դուրս կը մնայ կրօնական–քրիստոնէական դասերու աւանդումը եւ կամ լաւագոյն պարագային նուազագոյն աստիճանին կը հասցուի անոր հանդէպ ուշադրութիւնը։

Ասոնցմէ ետք պէտք է աւելցնել նաեւ Քրիստոնէականի եւ Ս. Գրոց դասագիրքերու պատրաստութեան խեղճութիւնը եւ երբեմն ալ կարող ուսուցիչներու պակասը եւ դուք կ'ունենաք այն ատեն կրօնական դաստիարակութեան պակասին գլխաւոր պատճառները։

* * *

Կրօններու, ինչպէս նաեւ իմաստասիրութեան պատմութիւնը լաւագոյն ապացուցած են թէ մարդկային հոգին ծարաւը ունի պաշտամունքին. ան չի կրնար հեռու ըլլալ Աստուծմէ, վասնզի ինչպէս հայր մը կը սիրէ իր որդին, եւ փոխադարձաբար, նոյնպէս եւ Արարիչն ու արարածները։ Մարմինը կ'աճի սնունդով, իսկ հոգին՝ հաւատքով։ Նախապատմական ժամանակներէ ի վեր այս պարագան անհերքելի իրողութիւն մըն է, այն տարբերութեամբ որ դարաշրջաններու ընթացքին, պաշտամունքի առարկան ենթարկուած է փոփոխութիւններու։

Սիոնի էջերէն բազում անգամ կրկնած ենք այս իրողութիւնը։ Աշխարհի մէջ, մեր բնական շատ մը կարիքներուն քով ի վեր կրօնական ապրումին, զգացումին, պաշտամունքի եւ ծէսի ձեւին մէջ անոր արտայայտութեան անհրաժեշտութիւնը կեանքին անփոխարինելի, անյետաձգելի մէկ մասը կը կազմէ։

digitised by A.R.A.R.@

Բնականաբար, չի բաւեր հանդիսական պահերու, թերթերու սիւնակներէն, ամպիոններու վրայէն վկայութեան կանչել մեր երիցս երանեալ հայրապետները, մարտիրոսները, սուրբերը, մաքրակրօն եկեղեցականները, իշխանները, ապացուցանելու համար որ մտաւորական լոյսին հետ զուգորդուած, միշտ անոնք ունեցած ենք նաև հոգեկան ապրումին, լոյսին և վերջապէս հաւատքին, ամրօրէն կառչելով անոր։ Յիշեցէք մեր կրակէ բառերով աղօթքները, խնկապաբար մագաղաթները և վսեմին ձգտող մեր շարականները։ Սակայն կարևոր է նաև այսօ՛րը։

Ի՞նչ կ'ընենք այսօր։ Թերի մը մատնանշելը ինք իր մէջ արժէք մը կրնայ ըլլալ, այսուհանդերձ, այդ թերին սրբագրելը մեծութեան մը սկզբնաւորութիւնն է արդէն։

Ընկերային, հաւաքական, ինչպէս նաև անհատական մեր կեանքին մէջ երևան եկող ախտը, տկարութիւններն ու անհանդուրժելի համեմատութիւններու հանող պայքարը, արդիւնք է միայն կրօնական դաստիարակութեան պակասին։

Նախասիրութեան մը համար չէ որ կը կրկնենք և շեշտը կը դնենք այս անյետաձգելի և էական խնդրին վրայ։ Կ'ապրինք, միշտ մահուան երկիւղը ամուր բռնած մեր ենթագիտակից մտքին առջև, քաղաքական անստուգութեան և հազարումէկ տագնապներու և հեծութեանց մէջ։ Ասոնց վրայ քրիստոնէական վարդապետութեան վեհութիւնն ու անուշութիւնն է միայն որ գերագոյն մխիթարութիւնը կրնայ պարգևել մեր խռովակոծ երկինքին վրայ ծիածանի մը հանգոյն պարզուելով, հաշտեցնելու համար նախ մեզ մեր եսին և ապա մեր իրականութեան հետ։ Զգացա՞ծ էք բնաւ այն ներքին մեծ ուրախութիւնը, երջանկութիւնը որ մեղաւոր մարդունն է, երբ անդրադարձի առաջին արցունքի կաթիլին հետ կը սկսի, տառապագարդ գիշերուան մը զեղեցկութեան նման եկեղեցիի մը կամարներուն ներքև։ Տեսա՞ծ էք բնաւ կորստեան մատնուող մարդու մը ապաշխարանքը, երբ ծնկաչոք կ'աղօթէ։ Եւ կամ իր խոկումին մէջ մաքրուած, սրբուած անհատ մը։ Դիտեցէք մահամերձ մը որուն շրթներէն կը գլորին աղօթքի մը բառերը, ու դուք պիտի ըմբռնէք աղօթքին մեծազօր ազդեցութիւնը։ Որքան խորանաք Ձեր հաւատքին ու կրօնական գիտելիքներուն մէջ, ուղիղ համեմատութեամբ, այնքան կ'աւելնան անոր ներգործութիւնը, ճշմարտութիւնը, խորութիւնը, գեղեցկութիւնն ու աստուածային իմաստութիւնը։

Կրօնական դաստիարակութիւնը պէտք է սկսի մանկութենէն, ծնողական սկզբնական գուրգուրանքներուն հետ։ Վանքի ծուռ կամ թերի կրթութիւն մը հետագային կրնայ աղիտաբեր հետևանքներ ունենալ։ Մեր տարեկութիւններուն վրայ կ'ուզէինք աւելցնել նաև պարագայ մը որ արդէն իսկ դաստիարակչական և մանկավարժական ճշմարտութիւն մըն է։ Այսինքն տունն ու դպրոցը մանուկի մը կրթութեան համար, իրարու լրացուցիչներ պարտին ըլլալ։ Որոնց վրայ այս պարագային, Եկեղեցին, իր լրումին պիտի հասցնէ, պիտի պսակազարդէ այդ ուսուցումը, իր խորհուրդներով անմիջական հաղորդակցութեան մէջ դնելով անհատը իր Երկնաւոր Հօրը հետ։

Այլ սակայն, դժբախտաբար, ծնողքներ կան որոնք հաւատքէ պարպուած, չորցած ծառերու կը նմանին, պարպուելով կրօնական զգացումին և ապրումին

digitised by A.R.A.R.@

կենարար աւիշէն։ Տղաք, որքան ալ որ դաստիարակուին և կրթուին կրօնական ամուր և հաստատ հաւատքով, բայց տան մէջ մանաւորաբար և դպրոցէն դուրս ընդհանրապէս չգտնեն, նոյն ճշմարտութեանց, վեհ սկզբունքներու, իտէալներու համապատասխան կեցուածք և պատկառանք, անոնք ևս կը դառնան իրենց մեծերուն անբաղձալի վիճակին։ Վասնզի մարդկային է աւելի շուտ չարանալ և հակամէտ ըլլալ չարութեան քան թէ առաքինի և տիպար կեանք մը ապրիլ։ Մեծերուն օրինակը վարակիչ է։ Նոյնիսկ երբ վարժարաններուն մէջ ուսուցուի և ջամբուի կրօնական դաստիարակութիւն, բնական է որ երբ տղաքը հոն ուսուցուած սկզբունքներուն համաձայն կեանք մը չտեսնեն իրենց շուրջ, կը դադրին հաւատալէ իրենց ուսուցուածին, որովհետև անոնք կը մնան սոսկ տեսութիւններ, ինչպէս, օրինակ, գիտական և ուսողական տեսութիւններ, առանց գործնապէս ապրուած, զգացուած կեանքի և ներշնչումի։

Մեր վարժարաններու առընթեր կը գործեն նաև կիրակնօրեայ վարժարանները, որոնք ըստ ինքեան յաւելում մըն են կրօնական մեր դաստիարակութեան մեծ գործին և ընդհանուր ծրագրին. այնուհանդերձ առանձինն չեն կրնար դիմագրաւել այն թերին՝ որ կը յառաջանայ կրօնական–եկեղեցական նիւթերու անտեսումով կամ անկատար ուսուցմամբ։

Աւելորդ բառ մը չէ կրօնական դաստիարակութիւնը. եթէ մարդերը ուրիշ հետաքրքրութիւններ ունին կեանքի մէջ և կ՚արհամարհեն Ս. Գրոց ընթերցում և յաւիտենական ճշմարտութիւններու և աստուածային կատարելութեան ձգտում, պատճառ մը չէ ատիկա որ մենք ևս իյնանք ծիծաղելի կացութիւններու մէջ։

Անհրաժեշտ և էական պայման է կրօնքի ուսուցումը, առանց տարիքի և սեռի խտրութեան։ Այս շատ լուրջ խնդրին պէտք է անդրադառնան մեր վարժարաններու վարիչները և մանաւանդ կրօնականները, չթերանալով իրենց գործին մէջ և զգալով պատասխանատուութեան մեծութիւնը։ Կ՚անցնին հետաքրքրութիւնները, աշխարհիկ ցանկութիւնները, փառքերը, հարստութիւնները․ ինչ որ կը մնայ սակայն, այդ մեր կարճատև կեանքերուն առաքինութիւններն են և մեծագործութիւնները՝ որոնք միշտ ալ կը ներշնչուին կրօնական ապրումէն և զօրաւոր հաւատքէն։

Ի վերջոյ, քրիստոնէութիւնն է այն ճամբան որ կ՚առաջնորդէ մեզ մեր Տիրոջ, այս աշխարհէն վերջ և անդին ժառանգելու համար յաւիտենական կեանքը, որուն ժառանգորդները կրնանք ըլլալ միայն այս աշխարհի մէջ ապրած ըլլալով տիպար, առաքինի և քրիստոնավայել կեանք մը։

digitised by A.R.A.R.@

## ԿՐՕՆԱԿԱՆ

# ՄԱՐԴՈՒ ԻՍԿԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ

«Որչա՜փ եւս առաւել է մարդ քան զոչխար»
(ՄԱՏԹ. ԺԲ. 12)

Աւետարանական այս խօսքին մէջ երկու բաներ՝ մարդն ու ոչխարը, կը բաղդատուին իրարու հետ։ Ոչխարը ունի իր առաւելութիւնները, նոյնպէս մարդը ունի իր արժէքները։ Սակայն երբ զանոնք իրարու հետ բաղդատութեան դրուին, մարդը աւելի կը կշռէ բարոյապէս քան ոչխարը։ Հետեւաբար Սրբազան Մատեանը իրաւամբ կ'ըսէ. «Մարդը որչա՜փ աւելի է ոչխարէն»։

Ոչխարը Ս. Գրոց մէջ նուիրական կենդանիներէն մին է։ Ամէն կենդանի ունի իր համեմատական արժէքը, բայց ոչխարը անոնց մէջ, եթէ ոչ ամենաարժէքաւորը, գէթ արժէքաւորներէն մին նկատուած է։ Ոչխարին արժէքը կը կայանայ նախ՝ իր օգտակարութեան մէջ։ Անոր բուրդը ձմեռուան մեր տաքուկ հանդերձեղէններուն ատաղձը կը կազմէ, մորթը վաճառականութեան ու ճարտարարուեստի մէջ կարեւոր տեղ մըն է, իսկ միսը մեր սեղանները զարդարող համադամ կերակուրներուն փառապսակը կը հանդիսանայ։

Երկրորդ՝ ոչխարին արժէքը իր բնաւորութեան մէջ է։ Անիկա գայլի պէս գիշատիչ, աղուէսի նման նենգամիտ, օձի պէս թունաւոր և խոզի նման ցեխերու մէջ տապլտկող մը չէ, այլ օժտուած է անմեղութեամբ, հլութեամբ, հնազանդութեամբ և համբերատարութեամբ։

Անմեղութիւն, հլութիւն, հնազանդութիւն և համբերութիւն. այս չորս գեղեցիկ յատկութիւններուն պատճառաւ է որ ոչխարը Աստուածաշունչի մէջ խորհրդանշանը կը կազմէ արդարներուն, իսկ այծը՝ իր վայրագ բնաւորութեան համար մեղաւորները կը ներկայացնէ։ Ոչխարին բազմապիսի օգտակարութիւնը ցոյց տալու համար հրէից Թալմուտ գիրքը կ'ըսէ. «Մախէ՛ ագարակդ և ոչխար մը գնէ, բայց ոչխարդ ծախելով ագարակ մի գներ»։

Ոչխարները ընտանեկան են և խումբով կ'արածուին լեռներու ու դաշտերու վրայ։ Այս իսկ պատճառաւ, Սրբազան Մատեանին մէջ Աստուծոյ ժողովուրդը ոչխարի հօտին նմանցուած է։ Յիսուս, մեր փրկիչը, ինքզինքը քաջ հովիւ կ'անուանէ, և Իրեն հետեւողներուն ոչխար անունը կուտայ։ Ինչպէս կ'ըսէ. «Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ. 11)։ Ս. Գրոց մէջ այսպէս իբր նմանութիւն և օրինակ՝ ոչխարը յաճախ յիշուած է թէ՛ Հին և թէ՛ Նոր Ուխտի մէջ։

Ոչխարը իր այս առաւելութիւններովը սակայն չկրնար մարդու հաւասարիլ, որովհետեւ մարդը խորհող էակ է, իմացական, ընկերական, բարոյական ու հոգեւոր բարձր կարողութիւններով օժտուած՝ և իր ներկայ վիճակէն աւելի վսեմ էակ մը ըլլալու համար ալ տակաւին լի է շատ մը թաքուն ընդունակութիւններով։ Եթէ մարդ ոչխարէ մը աւելի արժէք կը ներկայացնէ, ուրեմն ի՞նչ բանի մէջ է անոր արժանիքը։

Ոմանք իրերը աշխարհիկ տեսակէտէ դիտելով մարդուն արժանիքը իր հարստութեան մէջ կը փնտռեն։ Ասիկա սակայն իրողութեան հետ չի համաձայնիր։ Քանզի եթէ մարդու մը արժանիքը իր նիւթական կարողութեամբը չափուի, այդ պարագային չքաւորները պէտք է արժանիքէ զուրկ համարուին, մինչդեռ աղքատներ կան որոնք աւելի բարձր արժանիք կը ներկայացնեն այսօր քան թէ շատ մը մեծահարուստ անձեր։ Ոմանք ալ մարդուն արժանիքը իր ստացած դաստիարակութեան մէջ տեսնելու կը ջանան։ Այս ալ դարձեալ սխալ է։ Որովհետեւ եթէ այդպէս ըլլայ, տգէտ ու անուս մարդիկ արժանիքէ զուրկ պէտք է համարուին, մինչդեռ տգէտ նկատուած մարդոց մէջ քիչ չեն անհատներ՝ որոնք աւելի վեհանձն են քան թէ համալսարանական կոչուած շատ մը մտաւորականներ։ Ուրիշներ ալ մարդուն արժանիքը իր ունեցած դիրքին ու տիտղոսին հետ կը կապեն։ Այս մտածելակերպը եւս հեռու է ուղիղ ըլլալէ։ Վասնզի եթէ ասիկա շիտակ ըլլայ, ընկերական բարձր դիրք չունեցող և կամ բարձր աստիճաններէ ու տիտղոսներէ զուրկ մարդիկ անարժէք պէտք է նկատուին։ Իրականութեան մէջ սակայն, հասարակ մարդոց մէջ յաճախ աւելի ար-

digitised by A.R.A.R.@

ժանիք ունեցող անհատներ կը գտնուին, քան թէ ընկերական, քաղաքական և եկեղեցական բարձր դիրքեր ու պաշտօններ ունեցող անձերու մէջ։

Այս արտայայտութեամբ, ի հարկէ, ըսել չենք ուզեր թէ հարստութիւնը, դաստիարակութիւնը, տիտղոսներն ու աստիճանները անարժէք բաներ են։ Ո՛չ երբեք։ Այլ կ'ուզենք շեշտել թէ մարդու մը արժանիքը ո՛չ դրամով, ո՛չ ուսումով, և ո՛չ ալ բարձր տիտղոսներով ու պաշտօններով կը չափուի, այլ իր ցոյց տուած վսեմ նկարագրով, ազնիւ վարք ու բարքով, և բարի ու օգտաշատ կենցաղով։ Այլ բառերով, մարդուն արժանիքը արտաքին բաներու հետ կապուած ըլլալէ աւելի ներքին է, տեսանելի ըլլալէ աւելի՝ անտեսանելի, և ֆիզիքական ըլլալէ աւելի՝ հոգեկան։ Այսուհանդերձ, մարդու իսկական արժանիքը մատնանշող կան շատ մը բանաւոր պատճառներ, որոնցմէ մի քանին կ'արժէ յիշել։

Ա. — Մարդ Աստուծոյ արարչագործութեան փառապսակը կը կազմէ եւ ասիկա ինքնին զօրացուցիչ պատճառ մըն է անոր արժէքաւոր էակ մը ըլլալուն: Երբ կ'ըսենք թէ մարդ Աստուծոյ արարչագործութեան փառապսակն է, ասով կ'ուզենք մատնանշել թէ նա իր Արարչին գլուխ գործոցն է։ Օրմանեան մեզի ժամանակակից հեղինակ մըն է, ունի մէկէ աւելի երկասիրութիւններ, բայց «Ազգապատում»ը իր գլուխ գործոցն է։ Այս ըսելով, իր գրած միւս գիրքերուն արժէքը կորած չենք ըլլար, այլ անոնց համեմատական գրական ու բարոյական արժէքը գնահատելով հանդերձ կը շեշտենք թէ Օրմանեան իր «Ազգապատում» գիրքին համար աւելի իմացականութիւն և ճիգ գործածած է։

Նմանապէս երբ կ'ըսենք թէ մարդ Աստուծոյ արարչագործութեան գլուխ գործոցն է, կ'ընդունինք նախ թէ Աստուծոյ ստեղծած ամէն ինչ լաւ է և արժէքաւոր, յետոյ կը մատնանշենք միաժամանակ թէ մարդը ստեղծելու համար Նա, իբրև ճարտարապետ, աւելի հոգածութիւն ցոյց տուած և աւելի զոհողութիւն ըրած է։

Ստեղծագործութեան արարքին մէջ մարդ բուն նպատակակէտն է։ Ճարտարապետ մը երբ կը ծրագրէ շէնք մը կառուցանել՝ նախ փայտէ կայան մը կամ բարձրաւանդակ մը կը շինէ, և ապա կը սկսի բուն շէնքի շինութեան։ Փայտէ և կամ տախտակէ կայանին արժէքը առժամեայ է, վասնզի բուն շէնքը չէ այն, այլ շէնքի մը նախապատրաստութիւնը, ինչպէս յառաջաբանը բուն գիրքը չէ, այլ գիրքին սկզբնաւորութիւնը։ Նմանապէս Աստուած ալ իր արարչագործութեան շրջանին մարդուն ստեղծագործութիւնը պահած է ամենէն վերջը։ Իբրև նախապատրաստութիւն ստեղծած է նախ անշունչ իրերը, յետոյ բոյսերը, ապա կենդանիները, և ամենէն վերջը մարդը։ Ահա՛ այս իսկ պատճառաւ մարդը կը կազմէ արարչագործութեան բարձրագոյն նպատակակէտը, փառքն ու պարծանքը։

Անշունչ իրերը ստեղծագործութեան մէջ նպատակ մը չէին, այլ նպատակակէտին հասնելու համար նախաքայլ մը. բոյսերը արարչագործութեան գլուխ գործոցը չէին կազմեր, այլ գլուխ գործոցը արտադրելու համար սկզբնաւորութիւն մը. նոյնպէս կենդանիներ ստեղծագործութեան նշանաբանը չեն եղած երբեք, այլ սոսկ նշանաբանի մը հասնելու միջոցը։ Արարիչը այս բոլորը ստեղծեց լոկ մարդուն սիրոյն համար, և կամ մարդը ստեղծելու գիտումով զանոնք գործածեց իբրև նախապատրաստութիւն։ Տիեզերքի մէջ չկայ բան մը որ մարդուն սիրոյն համար ստեղծուած չըլլայ. ամէն ինչ որ գոյութեան եկած է մեր օգտին ու երջանկութեան համար է։

Բնութեան մէջ անշունչ իրը թէև ունի իր կարևոր տեղը, բայց կրաւորական է անոր օգտակարութիւնը։ Բոյսը թէև արժէք մը կը ներկայացնէ, սակայն գիտակից չէ իր գոյութեան։ Կենդանին թէև արժէքաւոր արարած մըն է, բայց և այնպէս չի կրնար հակակշռել իր արարքները։ Իսկ մարդուն դիրքը ներգործական է բնութեան մէջ, գիտակից է նա իր օգտակարութեան, և կարող է զսպելու իր ոյժերը։ Ուստի մարդը աւելի արժէք կը ներկայացնէ այս ընդարձակածաւալ տիեզերքին մէջ քան միւսները՝ որոնք գոյութեան իրաւունք ստացած են պարզապէս մարդը յառաջ բերելու իրր նախապատրաստութիւն։ Երբ

digitised by A.R.A.R.@

մարդ գիտակցութեան գայ և զգայ իր այս բարձր դիրքը տիեզերքի մէջ, իսկոյն կը հրաժարի անասնական մակարդակի վրայ ապրուած գետնաքարշ կեանքէն և կը նըւիրէ ինքզինքը աւելի բարձր ու աւելի ազնիւ ապրելակերպի մը՝ որ պատիւ կը բերէ թէ՛ իրեն և թէ՛ իր Արարչին, որուն ստեղծագործութեան գլուխ գործոցն է ինք։

Բ. — Մարդ իր Արարչին պատկերով ստեղծուած է: Ասիկա ուրիշ պատճառ մըն է որ իրեն կը բերէ անոր ներքին արժանիքը։ Մարդ էակը միացումն է մարմինի և հոգիի։ Մարմինը կը բաղկանայ կարգ մը տարրերէ, որոնք են թթուածին, ջրածին, բնածուխ, բորակածին, կրաքար, փոսփոր, պոտասիոն, ծծումբ, սոտիըմ, քլորին, մէկնիզիըմ, երկաթ, և այլն։ Մարդուն արժանիքը, բնականաբար, իր ֆիզիքական կազմին մէջ չէ, այլ իր հոգեկան կարողութիւններուն մէջ։

Մարդու հոգին Աստուծոյ շունչն է, Անոր հոգիէն փրցուած կայծ մը։ Երբ Աստուած հինգ օր գործեց և վեցերորդ օրը իր արարչագործութեան գագաթնակէտին հասաւ և մարդը գոյութեան բերաւ, անոր տուաւ իր հոգիէն մասնիկ մը։ Ապա մարդը սկսաւ կրել իր վրայ իր արարչին պատկերը։ Մարդ մարմնով որքան աշխարհիկ է, նոյնքան իր հոգիով աստուածային։ Այո, մարդն է տիեզերքի մէջ այն եզական արարածը՝ որ կը կրէ իր վրայ Աստուծոյ պատկերը, ինչպէս նաև օժտուած է բարոյական և հոգեկան բազմաթիւ կարողութիւններով՝ որոնք անմահ են ու յաւիտենական։ Պղատոն՝ նկատի առնելով մարդկային հոգիին աստուածային ծագումը, մարդը այս աշխարհի մէջ աստուածներու յաջորդը կը համարէր։

Երբ Սուրբն Պօղոս, Յունաստանի մէջ, Արիսպագոսի բլուրին վրայ կեցած կը քարոզէր Աթենացիներուն, անոնց բանաստեղծներուն խօսքերէն կոչում ընելով ըսաւ թէ մարդ Աստուծոյ ցեղէն յառաջ եկած է (Գործք, ժէ. 28–29)։ Այսինքն, Աստուած և մարդ օտար էակներ չեն իրարու, այլ ազգակիցներ, արարիչ և արարած, հայր և որդի։

Մեր անմահ Եղիշէն, իր Թաղման Ճառին մէջ կ'արտայայտուի այս ուղղութեամբ հետևեալ բառերով. «Իշխանութեան տէր մարդիկ իրենց անունով արձաններ կը կանգնեն, և իրենց պատկերները կը նկարեն դրամի վրայ, որովհետև պատկերագիր նկարով է որ ոսկին կը մեծարուի ու կը յարգուի աշխարհի մէջ։ Ես՝ իմ կենդանի պատկերը մարդու կենդանի դէմքին վրայ նկարեցի, կ'ըսէ Աստուած։ Աշխարհի վրայ միայն մարդն է որ Աստուծոյ կը նմանի։ Աստուած մարդուն միայն կ'երևի. Աստուած երկրի վրայ մարդը միայն կը սիրէ. միայն Աստուած մարդասէր է և միայն մարդն է աստուածասէր։ Աստուած մարդու համար մարդացաւ և Աստուծոյ համար մարդը աստուածացաւ»(*)։

Եթէ այս է իրողութիւնը, ինչո՞ւ ոմանք փոխանակ Աստուծոյ պատկերը կրելու սատանայի՛ն դիմագիծը կը կրեն։ Իտալացի նշանաւոր նկարիչ Տը Վինչի (De Vinci) անգամ մը պատկեր մը գծեց որ կը ներկայացնէր ամենագեղեցիկ մարդու մը դէմքը։ Տարիներ վերջ ուզեց ամենատգեղ մարդու պատկերը նաև գծել, ուստի պտտեցաւ ասդին անդին և օր մը սրճարանի մը անկիւնը գտաւ մէկը որ կրնար օրինակ ըլլալ տգեղութեան։ Եւ այսպէս ունեցաւ երկու նկարներ, մէկը օրինակ գեղեցկութեան, իսկ միւսը՝ տգեղութեան։ Բայց վերջէն տեղի ունեցած քննութիւնները ցոյց տուին թէ այս երկու պատկերներուն տէրը միևնոյն անձն էր։

Մարդը թէև ունէր բարոյական ու հոգեկան փայլուն կարողութիւններ և գեղանի դէմք, սակայն երիտասարդ հասակէն ինքզինքը անառակութեան և մոլութիւններու այնքան յանձնած էր որ մեղքը իր իմացական ու բարոյական կարողութիւնները ջլատելէ զատ ֆիզիքական գեղեցկութիւնն ալ աւրած էր բոլորովին։ Եւ ահա գեղեցկութեան տիպար մը եղած էր այսպէս տգեղութեան օրինակ մը։ Նոյնը շիտակ չէ՞ր միթէ անառակ որդիին համար, երբ նա կորագլուխ ու կորաքամակ իր հօրը տունը վերադարձաւ. ի՞նչ էր մնացած իր վրան իր նախկին ազնուականութենէն։ Ոչինչ։

(*) Տե՛ս Լոյս Շաբաթաթերթը, Կ. Պոլիս, 1905, էջ 7։

*Մեղքը զինքը անճանաչելի ըլլալու աստիճան չարափոխած ու կործանած էր։*

*Այսօր միթէ մեր մէջ չկա՞ն մարդիկ՝ որոնք թէև հրեշտականման դէմքով ծնած են, բայց մեղքի երկարատև տիրապետութեան ներքև իյնալով այժմ սատանային դէմքը կը կրեն, և կ'ապրին այս աշխարհի մէջ իբրև անոր ներկայացուցիչները։ Մարդու այս սխալ կեցուածքը մեղանչում մըն է պարզապէս Աստուծոյ արարչագործութեան նպատակին դէմ։*

**Գ. — Մարդ Աստուծոյ արտայայտիչն է տիեզերքի մէջ:** *Մարդու արժանիքը բարձրացնող ազդակներէն մին ալ այս է։ Սաղմոսերգուն երբ բնութիւնը կը դիտէր, մեծ հիացումով բացագանչեց ու ըսաւ. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» (Սաղմ. ԺԹ. 1)։ Աստուած ոչ միայն տիեզերքի արարիչն է, այլ նաև անոր կեանքն ու շարժիչ ույժը։ Դիտեցէ՛ք երկինքն ու երկիրը, պիտի տեսնէք թէ համայն բնութիւնը լեցուած է Անոր փառքով, և ամէն ինչ Անոր գոյութեան կենդանի վկան կը հանդիսանայ։*

*Ինչպէս Ս. Գիրքը ծայրէ ի ծայր աստուածայայտնութիւն մըն է, նոյնպէս բովանդակ տիեզերքը Աստուծոյ անգիր աւետարանն է. հոն ամէն արարած իր Արարչին փառքը կը ծանուցանէ։ Աստուած թէև անչունչ իրի մը մէջ կ'արտայայտուի, ծաղիկի մը գոյնին ու գեղեցկութեան մէջ իր ներկայութիւնը աշխարհի կը ծանօթացնէ, թռչունի մը օդին մէջ յօրինած դայլայլիկներուն միջոցաւ կը յայտնուի, բայց այս յայտնութիւնը մասնակի է։ Աստուծոյ արտայայտութիւնը մարդու մէջ է որ աւելի պայծառ է և որոշ։*

*Երբ Յիսուս մարմին առաւ ու շրջեցաւ մեր երկրագունդին վրայ, չէր այլ ինչ բայց եթէ Աստուծոյ ամենակատարեալ մէկ արտայայտութիւնը։ Անկէ առաջ, Աստուած որևէ ատեն մէկու մը միջոցաւ այնքան յայտնուած չէր որքան յայտնուեցաւ իր Միածին Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի անձին մէջ (Եբր. Ա. 3)։ Աստուածայայտնութիւնը իր գագաթնակէտին հասաւ Յիսուսի կեանքին մէջ և այսպէս Նա օրինակ հանդիսացաւ մարդոց։ Եթէ մէկը Յիսուսին նայէր, զԱստուած կը տեսնէր Անոր կեանքին մէջ, ինչպէս Ինք ըսաւ. «Որ տեսեն զիս՝ տեսե զհայրն» (Յովհ. ԺԴ. 9)։ Յիսուս Աստուծոյ կեա՛նքին հայելին էր, կենդանի մէկ նամակը. մէկը որ Յիսուսի կեանքը կը կարդար՝ Աստուծոյ կեանքը ուսումնասիրած ու հասկցած կ'ըլլար։ Քանզի Նա էր Աստուծոյ իսկական պատկերը և արտայայտիչը։ Աստուած կ'ուզէ որ մեր մէջ ալ արտայայտուի, ինչպէս արտայայտուեցաւ իր Միածին Որդիին մէջ։*

*Քրիստոնեայ ըլլալ մեր Փրկչին հետքերուն հետևիլ և Անոր նման Աստուծոյ արտայայտիչը ըլլալ է։ Ահա՛ քրիստոնէական կրօնին մեզի տուած այս առանձնաշնորհումն է որ արժանիք կուտայ մարդուն, և կը բարձրացնէ անոր դիրքը կեանքի աշխարհին մէջ, իբրև իր Արարչին անգիր մէկ աւետարանը և կենդանի արտայայտութիւնը։*

*Էմըրսըն ի՜նչ հիանալի կերպով կը նկարագրէ մարդուն մեծութիւնը երբ կ'ըսէ. «Ո՛վ ճոխ ու բազմազան մարդ, դուն որ քու լսողութեանց և տեսողութեանց պալատին մէջ կը կրես ցերեկն ու գիշերը, և անչափելի ծիր կաթինը, քու ուղեղիդ մէջ Աստուծոյ քաղաքին յատակագիծը, և քու սրտիդ մէջ բարիի և չարի, արդարութեան ու անարդարութեան աշխարհներ կան»։*

*Ո՛վ մարդ, գիտակից ես քու այս առանձնաշնորհումներուդ։ Մի՛ գոհանար խոնարհ մակարդակի վրայ, գետնաքարշ միտումներով ապրուած կեանքէ մը. ատիկա անասնական է լոկ ու ոչխարի մը համար սահմանուած կենցաղ մը։ Քու կոչումդ է աւելի բարձր կեանք մը ապրիլ, Արարչիդ նմանիլ, և Անոր Միածին Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի լման հասակին բարձրութեան հասնիլ (Եփես. Դ. 13)։*

**Դ. — Մարդ Աստուծոյ գործակիցն է այս աշխարհի մէջ:** *Ասիկա նոյնպէս մարդուն արժանիքը մասնանշող ուրիշ կարևոր կէտ մըն է։ Ի՞նչ է Աստուծոյ գործը և ի՞նչ է Անոր գործակից ըլլալ։ Մարդկային կեանքի մէջ երկու զուգահեռական ույժեր կան՝ բա-*

digitised by A.R.A.R.@

րին և չարը։ Բարիին պաշտպան ըլլալ Աստուծոյ գործակից ըլլալ է։ Արդարութեան դատին ախոյեան կանգնիլ, որբին, որբեւայրիին, արկածեալին և կեանքի պայքարին մէջ դժբախտացածներուն օգնութեան հասնիլ՝ Աստուծոյ գործին մղում տալ է։ Շատ դիւրին է հոսանքէն քշուիլ և չարին գործակից դառնալ, բայց ասիկա ստորնացում է, բարոյական մակարդակէն վար իջնալ է։ Մեծութիւնը բարձրանալու և ուրիշները բարձրացնելու մէջ կը կայանայ։ Աստուած մարդուն այնքան արժանիք տուած է որ զայն Իրեն գործակից նշանակած է Իր թագաւորութեան սուրբ գործին մէջ։

Յիսուս, մեր կեանքի առաջնորդը, երբ աշխարհ եկաւ նոյն շաւիղէն ընթացաւ։ Յիսուսի ամէն մէկ խօսքը, արարքը, շարժումը Իր վրայ Աստուծոյ ներկայութիւնը և Անոր հետ Իր ունեցած գործակցութիւնը կը մատնանշէին։ Երբ Յիսուս Գողգոթայի վրայ կը տառապէր, Աստուած թէև մէկ կողմէն խորունկ ցաւ զգաց Իր Միածին Որդւոյն չարչարանքներուն համար, բայց միւս կողմէն, այդ չարչարանքներուն միջոցաւ Նա կրցաւ Իր կատարեալ սէրը ծանօթացնել աշխարհի։ Նա ինքզինքը Հօրը հետ այնքան նոյնացուց որ Անոր գործը Իր գործը եղած էր։ Մենք ես Աստուծոյ գործակիցները կ'ըլլանք երբոր հետեւինք մեր Փրկչին հետքերուն։ Քանի որ Աստուած տուած է մեզի այս առանձնաշնորհումը, ինչո՞ւ չվայելենք զայն։ Գահաժառանգ մը պէտք է իբրև գահաժառանգ ապրի։ Ցաւալի է սակայն ըսել որ այսօր որքա՜ն մարդիկ կան երկրագնդիս վրայ՝ որոնք Աստուծոյ գործակից չըլլալէն զատ ոչխարի մը չափ ալ օգտակարութիւն չունին մարդկութեան համար։ Ան որ իր Արարչին իբրև ներկայացուցիչը բարիին գործակից չէ այս աշխարհի մէջ՝ մեղանչած կ'ըլլայ բնութեան սկզբունքներուն և Աստուծոյ ստեղծագործութեան նպատակին դէմ։

Աստուծոյ կամքն է որ մարդիկ գնահատեն ճշմարտութիւնը, սիրեն արդարութիւնը և իրարու հետ ունենան շիտակ յարաբերութիւն, և որով վայելեն աշխարհի մէջ մտքի անդորրութիւն ու սրտի խաղաղութիւն։ Ինչպէս երկինքի մէջ նմանապէս երկրի վրայ Աստուած ծրագրած է որ տիրապետէ Իր կամքը, և այսպէս երկիրը վերածուի երկինքի։ Եւ այս աշխարհը փոխանակ տանջարան մը ըլլալու, ըլլայ երջանկարան մը, և ամէն ոք ապրի հոն երջանիկ ու բարեբաստիկ կեանք մը։ Այս է ահա Աստուծոյ ծրագիրը մարդոց համար։

Յիսուս աշխարհ եկաւ իրագործելու Աստուծոյ յղացած տիեզերական եղբայրակցութեան այս գեղեցիկ ծրագիրը։ Մեր ալ պարտականութիւնն է Աստուծոյ հետ գործակցիլ իրականացնելու համար այս ծրագիրը։ Ասով է որ կրնանք արդարացնել այս երկրագնտին վրայ մեր գոյութեան իրաւունքը։

Ի՞նչ է մեղքը. չէ ուրիշ բան բայց եթէ մեր բարոյական բարձր մակարդակէն վար իջնալ։ Ի՞նչ է փրկութիւն. չէ այլ ինչ բայց եթէ գիտակցիլ իբր մարդ մեր բարձրագոյն կոչումին, և իսկոյն հրաժարիլ մեղսալից կեանքէն և վերանալ դէպի այն վսեմ կեանքը՝ որ մեզի համար սահմանուած է Տիեզերքի Արարչին կողմէ։ Ասիկա կարելի է Յիսուս Քրիստոսի հետ միանալով և Անոր հետ շփման գալով։

Եթէ կը զգանք թէ Աստուծոյ արարչագործութեան գլուխ գործոցն ենք և Անոր պատկերովը ստեղծուած՝ փայլեցնենք այդ պատկերը մեր վրայ. առօրեայ մարդոց հետ ունեցած մեր բոլոր յարաբերութիւններուն մէջ։

Դր. Ա. ՍԱՐԱՖԵԱՆ

Ֆրէզնօ, Գալիֆ.

digitised by A.R.A.R.@

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՆԻՍՏ Բ.

*Նոյն օրը, յետ միջօրէի ժամը 5.30ին, ժողովը վերսկսաւ իր աշխատանքներուն: Վեհափառ Հայրապետի փափաքով եւ ժողովականներու միաձայն հաւանութեամբ, յարմար դատուեցաւ որ ժողովի այս նիստէն բացակային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Եպիսկոպոսները — Տ. Խադ Արք., Տ. Խորէն, Տ. Դերենիկ, Տ. Ղեւոնդ եւ Տ. Շաւարշ Եպիսկոպոսներ, նկատելով որ ժողովի այս նիստին խորհրդակցութեան նիւթն էր Անթիլիասի ընտրութիւնը: Ներկայ են մնացեալ 11 ժողովականները, ընդ նախագահութեամբ Վեհ. Հայրապետին՝ որ ժողովը բացաւ աղօթքով:*

*Ն. Սրբութիւնը հարցը դրաւ հետեւեալ ձեւով: «Թէեւ մեր օրակարգին վրայ է Մայր Աթոռի եւ Նուիրապետական միւս Աթոռներու փոխյարաբերութեան եւ գործակցութեան հարցին քննարկութիւնը եւ ծրագրի մը պատրաստութիւնը, եւ սակայն, նախ քան այս կարեւոր հարցը իր դրուած ձեւին մէջ քննելը. պարտինք անդրադառնալ այն անցուդարձերուն, որոնք տեղի ունեցան վերջերս Անթիլիասի մէջ»:*

*Ապա Վեհափառը յայտնեց, թէ իր ընտրութենէն վերջ իր փափաքներէն մէկը եղած է հանդիպում մը ունենալ մեր Եկեղեցւոյ քանի մը կարեւոր դէմքերու հետ. սակայն այլ եւ այլ պատճառներով նման հանդիպում մը Էջմիածնի մէջ անհնար եղած է կարգադրել, ուստի ինք ուզած է այդ նպատակով արտասահման ուղեւորել: Այս ուղեւորութեան նպատակներէն մէկն ալ եղած է մօտէն ծանօթանալ արտասահմանի նուիրապետական Աթոռներուն եւ ժողովուրդին: Ասկից զատ, կարգ մը գործնական հարցեր, կապուած Մայր Աթոռի նիւթական բարելաւման եւ հին վանքերու եւ եկեղեցիներու նորոգութեան հետ, անհրաժեշտ դարձուցած էին իր արտասահման այցելութիւնը: «Անթիլիասի Հայրապետական ընտրութեան անձամբ մասնակցելու մեր միակ շարժառիթը եղած է, ըսաւ Վեհ. Հայրապետը, պահպանել եւ ի հարկին պաշտպանել Հայաստանեայց Եկեղեցւոյ Միութիւնը, որ ստացուած լուրերու համաձայն վտանգուած կը տեսնուէր»:*

*Յաջորդող դէպքերը ապացուցին որ արդարացի եղած են Հայրապետի մտահոգութիւնները եկեղեցական միութիւնը պահպանելու մասին:*

*Վեհափառը եկած օրն իսկ առաջին առթիւ տեսակցած է Անթիլիասի Հայրապետութեան Տեղապահ Տ. Խորէն Եպս.ի հետ եւ յայտնած է անոր իր մտահոգութիւնը. Տ. Խորէն Եպս. ապահովցուցած է Վեհ. Հայրապետը թէ մտահոգուելու պէտք չկայ. Եկեղեցւոյ միութիւնը պահուած է եւ հակառակութիւն չկայ: Սակայն նոյն գիշերն իսկ ստացուած հաւաստի այլ տեղեկութիւններ եկած են հաստատել, որ Տ. Խորէն Սրբազանի պատկերացուցած կացութիւնը այնքան ալ համապատասխան չէր իրականութեան: Համաձայնութիւն չկար ոչ Միաբանութեան, ոչ կուսակցութեանց եւ ոչ ալ պետական շրջանակներու մէջ: Պարզուեցաւ որ իրապէս խառնակ վիճակ մը կը տիրէր առհասարակ ամենուրեք: Տեսնելով այս կացութիւնը, Հայրապետը փորձած է համերաշխութիւն եւ միութիւն ստեղծել: Փետրուար 14ին Անթիլիասի ընտրողական ժողովին ներկայ եղած է եւ նախ քան ժողովին բացումը կոչ ըրած է որ ժողովը յետաձգուի մէկ շաբաթով, որպէսզի ինք ժամանակ ունենայ ակնկալուած համերաշխութեան մթնոլորտը ստեղծելու համար աշխատանք տանելու, ապա ինք առանձնացած է: Ժողովը, սակայն, մասամբ միայն ընդունած է Վեհափառի առաջարկը. գի բացում եւ դիւանի ընտրութիւն կատարուած է, օրինական ընդունելով Հալէպի պատգամաւորութիւնը՝ որուն վաւերականութիւնը խնդրոյ առարկայ եղած է: Ժողովէն հեռացած են 12 հոգի, որոնցմէ երկուքը Կիլիկեան Աթոռին եպիսկոպոսներէն եւ միւսը Դամասկոսի Թեմակալ*

առաջնորդը: Վեհափառ Հայրապետի նախատեսութիւնը եղած է վերոյիշեալ առաջարկով առաջքն առնել պառակտման. սակայն ժողովը չանսալով Վեհափառի առաջարկին, արդէն իսկ պատճառ տուած է պառակտման:

Այս դէպքէն երկու օր յետոյ Ընտրողական ժողովի անդամներէն 4 հոգի եկած են Վեհափառի մօտ եւ ջանացած են արդարացնել առնուած քայլը: Այս առնչութեամբ երկու կէտեր եւս պատճառ եղած են խաղաղութեան խանգարման: Առաջինը եղած են այն ծայրայեղ յօդուածները՝ որոնք գրուած են դաշնակցական մամուլի մէջ Վեհափառի անձին դէմ. իսկ միւսը Զարեհ եւ Խորէն եպիսկոպոսներու անտարբեր կեցուածքը՝ այս անճահ յօդուածներու վերաբերմամբ:

Վերոյիշեալ 4 հոգինոց պատգամաւորութեան եւ Վեհափառի տեսակցութիւնը այն եզրակացութեան յանգած է, որ իրենք ըստ ամենայնի համաձայն գտնուած են Վեհափառին եւ ցաւ յայտնած եւ ներողութիւն խնդրած են վերոյիշեալ յօդուածներու համար, որոնք գրուած են իրենց կամքէն անկախ, եւ խոստացած են ձեռք առնել միջոցներ՝ նման լեզու չգործածելու ապագային: Ի տես այս կեցուածքին՝ Վեհափառը կրկին լաւատես դարձած է եւ անտեսելով ընտրողական ժողովի իր առաջարկին հակառակ շարժած ըլլալու իրողութիւնը՝ կրկին ձեռնարկած է համերաշխութիւն ստեղծելու իր ջանքերուն:

Այս նպատակով Վեհափառը լիազօրած է Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Տեղապահ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսը, որպէսզի երկու կողմերու հետ բանակցի համերաշխութեան գետին մը գտնելու համար: Վեհ. Հայրապետը անգամ մը եւս հաստատեց որ ինք երբեք կանխակալ կարծիքով Անթիլիաս չէ եկած. ինք որեւէ մէկը չէ ունեցած ի մտի որպէս թեկնածու, իր միակ նպատակն է եղած որ ընտրութիւնը կատարուի համերաշխութեամբ եւ խաղաղ պայմաններու տակ:

Սակայն, վերեւ ակնարկուած պատգամաւորութեան հետ տեսակցութենէն 24 ժամ չանցած, դաշնակ մամուլը իր հազիւ ցոյց տուած հաշտարար լեզուն փոխած է եւ կրկին անճահ արտայայտութիւններ եղած են Վեհափառի անձին եւ առաքելութեան նկատմամբ:

Ընտրութեան նախօրեակին տեղի ունեցաւ Եպիսկոպոսաց խորհրդակցական հաւաքոյթ մը, որու ընթացքին Վեհափառը տեղեկացուց որ իր հաշտարար ջանքերը եւ Եղիշէ Արք.ի բանակցութիւնը դժբախտաբար չտուին իր ակնկալած դրական արդիւնքը: Նոյն երեկոյին եղբայրական կոչեր եղան Տ. Զարեհ եւ Տ. Խորէն Եպիսկոպոսներուն, որ առաջնորդուելով Հայաստանեայց Եկեղեցւոյ Միութեան ոգիէն՝ իրենց ձեռքին մէջ գտնուած; բոլոր միջոցները ի գործ դնեն՝ խաղաղ պայմաններու տակ, համերաշխութեան մթնոլորտի մը մէջ եւ կողմերու փոխադարձ համաձայնութեամբ կատարելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութիւնը: Խաղաղասիրական վերջին այս կոչերը եւս անցան անօգուտ:

Վեհափառը մեկնեցաւ յաջորդ առաւօտ, Փետրուար 20ին, Եգիպտոս եւ ընտրութիւնը տեղի ունեցաւ ծանօթ պայմաններու տակ:

Ապա Վեհափառը տեղեկացուց որ երէկ իրեն ներկայացած են Տ. Խորէն եւ Տ. Ղեւոնդ Եպիսկոպոսները, ըսելու համար որ եկած են մասնակցելու Եպիսկոպոսական ժողովին՝ երկու պայմաններով. — ա) որ Ամենայն Հայոց Հայրապետը շնորհաւորէ Զարեհ Եպիսկոպոսի ընտրութիւնը, նկատելով զայն կատարուած իրողութիւն մը: Բաղաքական բնոյթ պարունակող ակնարկութիւններ եւս եղած են թէ Ամերիկեան կառավարութիւնը եւ տեղական պետութիւններ իրենց կողմն են. ցոյց տրուած է նաեւ սպառնալիքի հեռանկար, ակնարկելով Ամերիկայի անջատեալ հատուածի եւ դաշնակցական կուսակցութեան ազդեցութեան ներքեւ գտնուող թեմերուն:

Իրենց երկրորդ պայմանը եղած է, որ Անթիլիասի հարցը չյարուցուի Եպիսկոպոսական ժողովին մէջ:

Վեհափառի պատասխանը եղած է կարճ եւ կտրուկ, երկու պայմաններուն եւս: ա) Թէ չի կրնար շնորհաւորել Զարեհ Եպիսկոպոսը, քանի որ նա տակաւին կաթողիկոս

digitised by A.R.A.R.@

չէ, կաթողիկոսական օծում ստացած չըլլալով: բ) Չի կրնար խոստանալ որ Եպիսկոպոսական ժողովը չզբաղի Անթիլիասի հարցով: Ընդհակառակը, ինք այնպէս համոզուած է, որ Եպիսկոպոսաց ժողովը պիտի զբաղի այս հարցով: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ մէկ մասն է. ընդունելի չէ այն տեսակէտը որ այդ Կաթողիկոսութիւնը անջատ գոյութիւն մըն է, անկախ կամ վեր Եպիսկոպոսական ժողովէն: Վեհափառը եզրակացուցած է. «Մեր ցանկութիւնն է որոշ կեցուածք մը ցոյց տալ այն դէպքերու հանդէպ, որոնք տեղի ունեցան Անթիլիասի մէջ»:

Ցաւալի եւ ողբալի գտաւ մանաւանդ այն ոգին, որ երեւան եկաւ ընտրութեան ընթացքին: «Եկեղեցւոյ հետ կապ չունեցող ոյժ մը, քաղաքական կազմակերպութիւն մը, իր կամքը պարտադրեց ընդդէմ Էջմիածնին, Եպիսկոպոսական Դասուն եւ ժողովուրդի լայն զանգուածներու տրամադրութեան: Երեւոյթ մըն է սա, որուն հանդէպ վերաբերմունք մը անհրաժեշտ է ցոյց տալ: Սկզբունքը պէտք է փրկել: Կրնան տեղի ունենալ երեւոյթներ, որոնք վտանգաւոր ըլլան Մայր Աթոռին համար, բայց սպառնալիքները պէտք չէ ազդեն մեր վրայ: Պէտք է փրկել եկեղեցական հեղինակութիւնը:

Ժողովականները, իրենց բոլոր խորհրդակցութեանց ընթացքին շեշտեցին կացութեան լրջութիւնը, Հայաստանեայց Եկեղեցիի համար վտանգաւոր մէկ դարձուածքը եւ մեր նուիրապետական Աթոռներու եւ Եպիսկոպոսութեան կողմէ որոշ վերաբերմունք մը ցոյց տալու անհրաժեշտութիւնը:

Ամեն. Գարեգին Պատրիարք համադրեց ամէնքի միտքը հետեւեալ կերպով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մաս կը կազմէ Հայց. Եկեղեցւոյ: Երբ զեղծում մը կը պատահի կամ շեղում մը կը կատարուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մէջ, Հայց. Եկեղեցին չի կրնար անտարբեր մնալ: Հետեւաբար, Ամենայն Հայոց Հայրապետութիւնը, միւս նուիրապետական Աթոռները եւ Եպիսկոպոսական Դասը իրաւունք եւ պարտականութիւն ունին զբաղելու Կիլիկիոյ այս ընտրութեան հարցով. եւ ապա կարդաց բանաձեւ մը:

Ժողովին 15 վայրկեանի դադար տրուեցաւ, որպէսզի բանաձեւին վերջնական ձեւ մը տրուի: Ժամը 20ին ժողովը վերստին գումարուեցաւ: Տ. Գարեգին Պատրիարքի իր իսկ սրբագրած բանաձեւը վերստին կարդացուեցաւ եւ ժողովի հաւանութեան ենթարկուեցաւ: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց զայն, որ հետեւեալն է. —

Նկատի առնելով,

որ Հայաստանեայց Եկեղեցին, մի եւ անբաժան մարմին մըն է, իբրեւ միակ պետ եւ գլուխ ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ որպէս միակ կեդրոն Լուսաւորչահիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը,

որ Կիլիկիոյ Աթոռը մասնակի Հայրապետութիւն մըն է Լիբանանի, Սուրիոյ եւ Կիպրոսի այժմու սահմաններուն մէջ միայն եւ ենթակայ է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան **ի հոգեւորս**, անկախ ըլլալով վարչական եւ մատակարարական գործառնութեանց մէջ,

եւ որ տարւոյս Փետրուար 20ին Անթիլիասի Հայրապետանոցի դահլիճին մէջ կատարուած ընտրութիւնը զուտ միակողմանի եւ հատուածական բնոյթ մը ունեցած է, պատճառ դառնալով հաւատացեալ ժողովուրդի երկփեղկման եւ պառակտման, եւ հակառակ ըլլալով ընդհանրապէս քրիստոնէական եւ մասնաւորապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ սիրոյ եւ միաբանութեան ոգւոյն:

Եպիսկոպոսական ժողովս միաձայնութեամբ սոյն ընտրութիւնը ցաւով կը նկատէ **թերի և անընդունելի**:

Ապա ժողովը նշանակեց Յանձնախումբ մը, կազմելու համար վերոյիշեալ բանաձեւին տրամաբանօրէն հետեւող պայմանները՝ որոնց ընդունելութեամբ «թերի եւ անընդունելի» նկատուած ընտրութիւն մը պիտի դառնար ընդունելի: Այդ Յանձնախումբի անդամներն էին Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք, Երուսաղէմի Առաքելական Աթոռոյ Տեղապահ Տ. Եղիշէ Արք. եւ Տ. Շնորհք Եպիսկոպոս իբրեւ քարտուղար: Ժողովը փակուեցաւ ժամը 8.30ին, յաջորդ օրը ժամը 10ին գումարուելու որոշումով:

digitised by A.R.A.R.@

## ՆԻՍՏ Գ. 6 ՄԱՐՏ 1956

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը 11ին, Վեհ. Կաթողիկոսի աղօթքով: Ներ-
կայ էին բոլոր ժողովականները, բացի Տ. Խորէն եւ Տ. Ղեւոնդ եպիսկոպոսներէն, ժո-
ղովին նիւթն ըլլալով Կիլիկիոյ ընտրութեան հարցը: Սակայն նկատի ունենալով որ
Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Հայրը, Տ. Մամբրէ Արք. Սիրունեան եւ Տ. Մամբրէ
Արք. Գալֆայեան ստիպողաբար պիտի բացակայէին ժողովէն՝ որոշ ատենուան մը հա-
մար, յարմար դատուեցաւ որ այս առաւօտեան ժողովը զբաղի իր սովորական օրա-
կարգով, իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընտրութեան հարցը յետաձգուի յետ միջօրէի
նիստին:

Ըստ այսմ նկատի առնուեցաւ ժողովի օրակարգի առաջին կէտը.

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սահմանադրութեան մը կազմութիւն:

Վեհ. Հայրապետը նախ ներկայացուց Սահմանադրութեան կազմութեան հարցի
նախընթաց պարագաները: Սահմանադրութեան նախագիծ մը առաջին անգամ ներկա-
յացուած է 1945ի Ազգ.-Եկեղեցական ժողովին: Այդ ժողովին մէջ տեսնուած է, որ այդ
նախագիծը շատ թերի է, ուստի որոշուած է պատրաստութիւն դնել Գերագոյն Հոգե-
ւոր Խորհուրդին վրայ, որպէսզի վերամշակէ զայն եւ ուղարկէ թեմերը՝ ստանալու հա-
մար նաեւ անոնց թելադրութիւնները: Սակայն այս որոշումը չէ գործադրուած: 1955ի
Ազգ.-Եկեղեցական ժողովին մէջ որոշուեցաւ Սահմանադրութեան վերամշակման գործը
յանձնել նոր Գեր. Հոգ. Խորհուրդին: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը տակաւին այդ
աշխատանքը չէ կատարած: Վեհ. Հայրապետը ինք անձամբ զբաղած է այս նախագիծի
վերամշակման գործով, սակայն չէ կրցած լրացնել: Ապա Վեհափառը, նկատի ունենա-
լով գործի ծանրութիւնը եւ լրջութիւնը, թելադրեց որ կազմուի յատուկ մարմին մը
զբաղելու այս գործով եւ իր եզրակացութիւնը ներկայացնելու Գերագոյն Հոգեւոր Խոր-
հուրդին, սա ալ իր կարգին, զայն վերանկատառութեան ենթարկելէ յետոյ յղէ թե-
մերը, անոնցմէ եւս նկատողութիւններ ստանալէ ետք՝ տալ մեր Սահմանադրութեան
իր վերջնական ձեւը:

Ժողովը միաձայնութեամբ Յանձնախումբի անդամ որոշեց Երուսաղէմի Տեղապահ
Տ. Եղիշէ Արք.ը իբրեւ նախագահ, Տ. Տիրան Արք.ը, Տ. Նորայր Եպս.ը, եւ Տ. Դերենիկ
Եպս.ը իբրեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ:

Տ. Սերովբէ Եպս. դիտել տուաւ որ նոր կազմուելիք Սահմանադրութեան մէջ
մասնաւոր կերպով նկատի ունենալ պէտք է եպիսկոպոսական ժողովի գոյութիւնը:
Հայաստանեայց Եկեղեցւոյ որեւէ դաւանական եւ վարդապետական խնդիր հարկ է որ
նկատի առնուի Եպիսկոպոսական ժողովի մէջ եւ անկէ ետք միայն ներկայացուի Ազգ.
Եկեղեցական ժողովին եւ Ամենայն Հայոց Հայրապետին ի վաւերացումն:

Վեհափառ Հայրապետը գնահատելով վերեւ եղած նկատողութիւնը, աւելցուց
որ Սահմանադրութիւնը ունենայ յստակ կարգաւորութիւն, ուր որոշ կերպով ճշտուին
Գեր. Հոգ. Խորհուրդին, Եպիսկոպոսական ժողովին, Ազգ. Եկեղեցական ժողովին իրա-
ւասութիւնները եւ ստեղծուին օրինական առարկայական պայմաններ, առաջքն առ-
նելու համար այնպիսի անպատեհութիւններու՝ որոնք յաճախ կը սպառնան եղծել Հայ
Եկեղեցիի իսկական դիմագիծը:

Երկրորդ, այս Սահմանադրութիւնը ընդգրկէ իր լրութեանը մէջ Հայց. Եկեղե-
ցին, մէջն ըլլալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ անոր մէջ ճշտուին ի-
րաւասութեան եւ փոխյարաբերութեան սահմանները նուիրապետական Աթոռներու:

Որոշուեցաւ նաեւ որ Յանձնախումբը այս գործը աւարտած ըլլայ մինչեւ տար-
ւոյս Սեպտեմբեր ամսոյ վերջը:

Օրակարգի յաջորդ հարցն էր՝ Հայց. Եկեղեցւոյ Օրինագիրքի կազմութիւն: Դարձ-
եալ Վեհափառը հաստատեց, որ ներկայիս Հայց. Եկեղեցին ճշտուած կանոնագիր մը
չունի. եղած կանոնները չեն դասաւորուած. անոնցմէ ո՞ր մէկը գործադրելի է եւ ո՞ր
մէկը անգործադրելի, չէ ճշտուած:— Այս մասին եւս խորհրդակցութենէ եւ կարծիք-

digitised by A.R.A.R.@

*նէրու փոխանակութենէ յետոյ, ժողովս նկատի ունենալով որ կանոնագրի կազմութիւնը սերտօրէն առնչութիւն ունի Սահմանադրութեան կազմութեան հետ, որոշեց այս գործն ալ յանձնել միեւնոյն Յանձնախումբին, յանձնարարելով որ Կանոնագրի կազմութիւնը աւարտած ըլլայ 1957ի աշնան:*

*Օրակարգի յաջորդ հարցն էր Աստուածաշունչի տպագրութեան 300ամեակին առիթով Ս. Գրքի աշխարհաբար թարգմանութիւնը:*

*Վեհափառը տեղեկացուց թէ այս հարցը եկած էր նախ Պոլսոյ Ամեն. Տ. Գարեգին Պատրիարքին կողմէ, ինչպէս նաեւ Գալիֆորնիոյ Սան Ֆրանսիսկօ քաղաքէն ամերիկահայ Օրիորդ Լուիզ Նալպանտեանի կողմէ: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը զբաղած է այս հարցով եւ որոշած է այս տարի աշնան հրաւիրել համագումար մը հայագէտ եւ գրաբարագէտ բանասէրներու, թէ՛ հոգեւորական եւ թէ՛ աշխարհական, թէ՛ արտասահմանէն եւ թէ՛ Միութենական սահմաններէն: Այս համագումարը ծնունդ պիտի տայ Յանձնախումբի մը՝ որ պիտի կատարէ գործոց բաժանում, նկատի առնելով անոր հետ կապուած նիւթական հարցերը, հրատարակման վայրը եւ այլ յարակից պայմանները: Ս. Գրքի թարգմանութիւնը աւարտած պէտք է ըլլայ 1966 թուականէն առաջ:*

*Ապա անցողակի տեղեկացուեցաւ որ Պայպըլ Սոսայէթին որոշած է Աստուածաշունչը վերստին աշխարհաբարի վերածել, գործը արդէն իսկ մտած է իր գործնական ընթացքին մէջ:*

*Այս մասին եղած երկար խորհրդակցութեամբ եւ տեսակէտներու փոխանակութեամբ կը շեշտուէր որ թարգմանութիւնն ըլլայ թէ՛ Արեւելահայերէն եւ թէ՛ Արեւմտահայերէն բարբառներով, թարգմանութիւնը կատարուի նախ մէկ բարբառով եւ ապա վերածուի միւս բարբառին, առաջքն առնելու համար երկու անջատ թարգմանութեանց հետ կապուած դժուարութեանց եւ պահելու համար իմաստին նոյնութիւնը երկուքի մէջ ալ:*

*Առաջարկուեցաւ նաեւ որ գործին ղեկավարութիւնը ստանձնէ Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Հայրը, սակայն հարցին վերջնական եզրակացութիւնը յետաձգուեցաւ յաջորդ նիստին:*

*Ժողովը փակուեցաւ կէսօրէ յետոյ ժամը 2ին:*

## ՆԻՍՏ Դ.

*Ժողովը վերսկսաւ ժամը 5.15ին կէսօրէ յետոյ: Ներկայ էին, բացի Անթիլիասի եպիսկոպոսներէն, մնացեալ 11 ժողովականները, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, որ բացաւ ժողովը Տէրունական աղօթքով:*

*Նորին Սրբութիւնը յիշեցուց, թէ Յանձնախումբը պատրաստած է նախագիծ մը, ուր դրուած են այն պայմանները՝ որոնց յարգումովն ու գործադրութեամբը ժողովիս կողմէ «թերի եւ անընդունելի» նկատուած ընտրութիւնը պիտի դառնայ ընդունելի:*

*Ապա այդ պայմանները մի առ մի քննարկութեան ենթարկուեցան ժողովի կողմէ եւ վերջնական ձեւ մը առին հետեւեալ համաձայնագրին մէջ. —*

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Նկատելով, որ Տ. Զարեհ Ս. Եպս. Փայասլեանի վրայ կատարուած ընտրութիւնը յԱթոռ Հայրապետութեան Մեծի Տանն Կիլիկիոյ թերի է եղած, որով եւ անընդունելի, — Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. Շնորհազարդ Կաթողիկոսի եւ Ծայրագոյն Պատրիարքի նախագահութեան տակ, 1956 Մարտ 5-8ին, Եգիպտոսի Հայոց Առաջնորդարանի դահլիճին մէջ, ի Գահիրէ, գումարուած Եպիսկոպոսական ժողովս կ'առաջարկէ լրացնել այդ թերին հետեւեալ պայմաններով. —

digitised by A.R.A.R.@

Ա. — Տ. Զարեհ Արքազան պիտի ստորագրէ ուխտագիր մը, ուր ճշդուած պիտի ըլլան Կիլիկիոյ Հայրապետին դիրքը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հանդէպ, ինչպէս նաեւ իր Հայրապետական իրաւասութիւնները ու պարտականութիւնները:

Բ. — Կիլիկիոյ Հայրապետը պիտի ընդունի գերագահութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ որ ի Ս. Էջմիածին, ենթարկուելով ի ՀՈԳԵՒՈՐՍ — դաւանաբանական, վարդապետական եւ ծիսական խնդիրներու մէջ — այն ընդհանրական Կաթողիկոսութեան Նախամեծար Աթոռին, պահելով իր անկախութիւնը վարչական-մատակարարական գործառնութեանց մէջ:

Գ. — Կիլիկիոյ Հայրապետութիւնը պիտի ունենայ իր սեփական կանոնադրութիւնը, համաձայն Հայաստանեայց Եկեղեցւոյ ոգւոյն, սկզբունքներուն եւ կանոններուն, եւ տեղական պայմաններուն նկատառումով պատրաստուած Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ վաւերացուած «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ», ապահովելով Կիլիկիոյ Հայրապետական իշխանութեան արժանավայել դիրք եւ ճկունութիւն: Մինչեւ այն կանոնադրութեան պատրաստութիւնն ու վաւերացումը, պիտի առկախուի եւ գործածութենէ դադրի 1941ի կանոնադրութիւնը: Անոր փոխարէն, սակայն, պիտի կազմուի ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ մը, իբրեւ գործադիր մարմին, բաղկացած չորս եկեղեցական եւ չորս աշխարհական անդամներէ եւ ընտրուած Կիլիկիոյ Հայրապետութեան Միաբանական Ընդհանուր Ժողովէն: Սոյն Խորհուրդի նախագահն է Հայրապետը:

Դ. — Կիլիկիոյ Հայրապետը պիտի ունենայ իր Ընդհանուր Փոխանորդը, ընտրուած Միաբանական Ընդհանուր Ժողովէն:

Ե. — Կիլիկիոյ Հայրապետի ընտրութեան պիտի մասնակցի Մայր Աթոռը երկու ձայներով, մէկ եկեղեցական եւ մէկ աշխարհական, վերջինը Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներէն, եւ ընտրեալ Հայրապետի օծումը պիտի կատարուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամ անոր ներկայացուցչին ձեռքով եւ վեց եպիսկոպոսներու մասնակցութեամբ:

Զ. — Կիլիկիոյ Հայրապետը, բուն եկեղեցական-իրաւական կանոնաց, պիտի չկրնայ կատարել կամ իր Աթոռին եւ վիճակաւոր եպիսկոպոսներուն արտօնել կատարելու որեւէ ձեռնադրութիւն կամ ձեռնադրուած եկեղեցականներ ուղարկել Կիլիկիոյ Հայրապետութեան սահմաններէն դուրս, առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաւանութեան կամ յանձնարարութեան. իսկ քահանաներու ձեռնադրութեան եւ առաքման վերաբերմամբ Մայր Աթոռէն հաստատուած առաջնորդներու գրաւոր խնդրանքին: Հակառակ պարագային, ձեռնադրողին եւ ձեռնադրուողին նկատմամբ կը կիրարկուի կանոնական տրամադրութիւնը:

Է. — Ս. Պատարագի միջոցին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին անուան յիշատակութիւնը կը կատարուի Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր թեմերուն մէջ անխտիր, ինչպէս նաեւ Հայրապետական Մաղթանք յանուն Ս. Էջմիածնի եւ Ընդհանրական Հայրապետի: Նոյնպէս, այդ բոլոր թեմերուն մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան յիշատակութենէն անմիջապէս յետոյ, պիտի յիշատակուի նաեւ անունը Կիլիկիոյ Հայրապետին:

*Ժողովս միաձայնութեամբ ընդունեց այս համաձայնագիրը, եւ յաջորդ օրը ժամը 11ին գումարուելու որոշումով փակուեցաւ ժամը 7.30ին:*

## ՆԻՍՏ Ե. 7 ՄԱՐՏ 1956

*Ժողովը բացուեցաւ ժամը 11ին, Վեհ. Հայրապետի տէրունական աղօթքով: Ներկայ էին, բացի Կիլիկիոյ Հայրապետութեան եպիսկոպոսներէն, մնացեալ 11 ժողովականները:*

*Այս նիստի խորհրդակցութեան առարկայ էր դարձեալ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընտրութեան հետ կապ ունեցող համաձայնագրին վերջնական ձեւ տալու հարցը: Կրկին կարդացուեցաւ Ժողովին եզրափակիչ որոշումը Կիլիկիոյ Հայրապետութեան ընտրութեան մասին եւ ստորագրուեցաւ բոլորին կողմէ:*

digitised by A.R.A.R.@

Որոշուեցաւ մեր սոյն որոշումը հաղորդել Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր թաւցակայ եպիսկոպոսներուն, մէջն ըլլալով Կիլիկիոյ Հայրապետութեան եպիսկոպոսները։

Ապա ժողովի մասնակցութեան կանչուեցան Կիլիկիոյ Հայրապետութեան Տեղապահ Տ. Խորէն Եպիսկոպոս, Տ. Խադ Արքեպիսկոպոս, Տ. Դերենիկ, Տ. Ղեւոնդ եւ Տ. Շաւարշ եպիսկոպոսները։

Վեհափառը բացատրեց, թէ ժողովս քննութեան առաւ Անթիլիասի մէջ կատարուած ընտրութեան հարցը եւ, յետ կարծիքներու փոխանակութեան, միաձայնութեամբ եկաւ այն եզրակացութեան, թէ այդ ընտրութիւնը ԹԵՐԻ Է ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ։ Սակայն, բոլորին կողմէ ջերմ փափաք եւ ցանկութիւն յայտնուեցաւ, որ միջոցներ ձեռք առնուին՝ այդ թերի եւ անընդունելի ընտրութիւնը դարձնելու ԸՆԴՈՒՆԵԼԻ։ Այս նպատակով Եպիսկոպոսաց Ժողովը երկու նիստերու մէջ քննեց եւ միաձայնութեամբ կազմեց համաձայնագիր մը։

Այս համաձայնագրին մէջ երկու սկզբունքներ կը պաշտպանուին ամենայն վճռականութեամբ։ Առաջին. — Ստեղծել այնպիսի պայմաններ, որ Կաթողիկոսարանը ենթակայ չըլլայ արտաքին քաղաքական եւ կուսակցական ազդեցութեանց։ Երկրորդ. — Հնարաւոր չափով զօրացնել հեղինակութիւնը նոր ընտրուած Կաթողիկոսին։ Մենք, այս գործին մէջ այս եզրակացութեան հասնելով, վստահ ենք որ Կիլիկիոյ Աթոռին գերագոյն շահերը կը հետապնդենք եւ կ՚ուզենք բարձրացնել անոր հեղինակութիւնը յաչս մեր ժողովուրդին եւ օտար շրջանակներու։

Ապա Վեհափառը յանձնեց համաձայնագիրը Տեղապահ Տ. Խորէն Եպիսկոպոսին եւ յանձնարարեց, որ Կիլիկիոյ Աթոռին եպիսկոպոսները միասին ուսումնասիրեն զայն, եւ՝ եթէ հնար է, մինչեւ կէսօրէ յետոյ ժամը 5ին գրաւոր պատասխան մը հաղորդեն ժողովին։

Նորին Սրբութիւնը աւելցուց, որ օրակարգի մեր աշխատանքները պիտի շարունակուին, եւ Կիլիկիոյ Հայրապետութեան եպիսկոպոսները սիրով կը հրաւիրուին մեր վաղուան ժողովին։ Նիստը վերջացաւ կէսօրէ յետոյ ժամը 1ին։

## ՆԻՍՏ Զ.

Օրուան երկրորդ նիստը բացուեցաւ կէսօրէ յետոյ ժամը 5.30ին, Վեհ. Հայրապետի աղօթքով։ Ներկայ էին 16 անդամներ։

Վեհափառը նախ տեղեկութիւններ տուաւ օրակարգի նախորդ հարցերու — Սահմանադրութեան եւ Օրինագրքի կազմութեան եւ Աստուածաշունչի թարգմանութեան — մասին։

Աստուածաշունչի աշխարհաբար թարգմանութեան հարցը եզրակացութեան բերուեցաւ հետեւեալ որոշումով. — Գործին ղեկավարութիւնը յանձնել Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Գարեգին Արքեպիսկոպոսին, եւ լիազօրել զինքը կազմելու Յանձնախումբ մը, բաղկացած 5 անդամներէ, այս գործը գլուխ հանելու համար։

Օրակարգի 5րդ եւ 6րդ հարցերն էին՝ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանին զօրեղացումը, արտասահմանէն Ս. Էջմիածին հոգեւորականներ հրաւիրելու եւ աշակերտներ ընդունելու առաջադրութիւնը։ Այս կապակցութեամբ Վեհափառը յայտնեց թէ ծրագրուած է Գալիֆորնիոյ Առաջնորդ Տ. Շնորհք Եպիսկոպոսը հրաւիրել ստանձնելու տեսչութիւնը Հոգեւոր Ճեմարանին, եւ թէ՝ այս մասին եղած են նաեւ ապագայի անհրաժեշտ կարգադրութիւնները։ Բայց Ս. Էջմիածին տակաւին ուրիշ եկեղեցականներու եւս պէնք ունի, թէ որպէս լուսարարապետ Մայր Տաճարի, թէ որպէս խմբագրապետ «ԷՋՄԻԱԾԻՆ» պաշտօնաթերթին եւ թէ իբրեւ ընդհանուր շրջուն քարոզիչ թեմերու։

Հոգեւորականներէ զատ, Մայր Աթոռը պէտք ունի նաեւ աշակերտներու՝ Հոգեւոր Ճեմարանին համար։ Այս աշակերտները կրնան գալ Ս. Էջմիածին թէ՝ այնտեղ մնալու դիտաւորութեամբ եւ թէ՝ վերադառնալով՝ իրենց պատկան տեղւոյն մէջ ծառայելու նպատակով։ Վեհափառը, օգտուելով մեր Եկեղեցւոյ բարձրաստիճան հոգեւորականներու

digitised by A.R.A.R.@

ներկայութենէն, Հոգեւոր Ճեմարան աշակերտներ ուղարկելու այս հարցը յանձնեց անոնց նկատառման:

Վեհափառը յետոյ յայտնեց, որ Կիլիկիոյ Կաթ. Տեղապահ Տ. Խորէն եւ Տ. Ղեւոնդ եպիսկոպոսները այցելած են իրեն այս երեկոյ եւ հաղորդած են, որ ի վիճակի չեն այսօր կէսօրէ յետոյ ժամը 5ին իրենց գրաւոր պատասխանը տալ Եպիսկոպոսաց ժողովին կողմէ պատրաստուած ծանօթ համաձայնագրին: Անոնք հարկ կը զգան վերադառնալ Անթիլիաս՝ խորհրդակցելու Տ. Զարեհ Եպիսկոպոսի եւ այլոց հետ եւ ապա յայտնել իրենց վերաբերմունքը այս մասին:

Տ. Խորէն Եպիսկոպոս յաջորդ օրն իսկ մեկնեցաւ Անթիլիաս:

Օրակարգի յաջորդ հարցն էր՝ Ս. Էջմիածնի կողքին Հոգեւոր Կաճառի մը կազմութիւնը: Այսինքն, ստեղծել, տակաւ առ տակաւ, եւ ժամանակի ընթացքին, մարմին մը՝ կազմուած առհասարակ ծանօթ գիտնականներէ, ըլլան անոնք հայրենիքի մէջ թէ արտասահման, ծառայելու համար որպէս խորհրդատու՝ եկեղեցական, պատմական, դաւանաբանական, արուեստի եւ այլ հարցերու մէջ: Ժողովը միաձայնութեամբ իր համամտութիւնը յայտնեց այսպիսի մարմնի մը կազմութեան:

Ժողովը վերջացաւ ժամը 7.30ին:

## ՆԻՍՏ Է. 8 ՄԱՐՏ 1956

Ժողովը բացուեցաւ առաւօտեան ժամը 10.30ին՝ Վեհափառ Հայրապետի աղօթքով: Ներկայ էին բոլոր ժողովականները, բացի Տ. Խորէն եւ Տ. Վարդան եպիսկոպոսներէն, որոնք այս առաւօտ մեկնած էին քաղաքէս:

Ժողովի օրուան օրակարգի հարցն էր «ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ», զոր ներկայացուց Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Գարեգին Արքեպս. յատուկ գրութեամբ մը: Ներկայացուած հարցերու մասին եղան կարծիքներու փոխանակութիւններ, եւ ժողովը անոնցմէ իւրաքանչիւրի մասին եկաւ որոշ եզրակացութեան:

Ա. — Հոգեւոր Դաստիարակչական Հարց. — Ժողովս սկզբունքով ընդունեց եւ իր ցանկութիւնը յայտնեց՝ պատրաստել իրենց կոչումին համապատասխան եկեղեցականներ: Այս մասին եղան երկու գործնական առաջարկներ. — 1. — Բոլոր դպրեվանքերու մէջ ունենալ ուսումնական նոյն ծրագիրը՝ հնարաւորութեան սահմանին մէջ: 2. — Իբրեւ փորձ՝ կատարել ուսուցչաց փոխանակութիւն որոշ ժամանակի մը համար: Մինչեւ իսկ, եթէ հնար է, կազմակերպել աշակերտներու փոխադարձ այցելութիւններ մէկ դպրեվանքէն միւսը:

Առաջարկուեցաւ կազմել Յանձնախումբ մը, որ պատրաստէ ծրագիր մը եւ յանձնէ զայն Վեհափառ Հայրապետի նկատառման: Այս Յանձնախումբի անդամ նշանակուեցան Անթիլիասի Դպրեվանքի եւ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի Տեսուչները, գլխաւորութեամբ Տ. Տիրան Արքեպս.ի եւ մասնակցութեամբ Տ. Եղիշէ Արքեպս.ին:

Բ. — Կարգապահական Հարցեր. — Ժողովս որոշեց, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ հոգեւորականները չպատկանին ոչ մէկ կուսակցութեան:

Վանքերէ դուրս, թեմերու մէջ կուսակրօն քահանայ ձեռնադրուելիք անձը պէտք է նախ վանքի մը կողմէ Միաբան ընդունուի, երթայ այդ վանքը, ատեն մը ուսանի, ծառայէ եւ ենթարկուի վանական կարգապահութեան եւ ապա նոյն վանքին մէջ ալ ձեռնադրուի:

Ժողովս նկատեց, որ կարգ մը կանոնական թերիներ տեղի կ՚ունենան կամ ունեցած են, օրինակ. —

1. — Կարգ մը առաջնորդներ քահանաներ կը ձեռնադրեն այլ թեմերու համար, առանց պատկան թեմին հոգեւոր իշխանութեան հաւանութեան:

2. — Ձեռնադրեալ քահանաներ կ՚ուղարկեն այլ թեմեր, նոյնպէս առանց պատկան թեմին հոգեւոր իշխանութեան խնդրանքին կամ յանձնարարութեան:

3. — Վանքերէ եւ կամ թեմերէ կարգաթող կամ կարգալոյծ եւ կամ դասալիք

digitised by　　　A.R.A.R.@

հոգեւորականներ կը վերահաստատուին իրենց կարգերուն մէջ, առանց իրաւասու հոգեւոր իշխանութեանց հրամանին:

Ժողովը որոշեց, յիշեալ եւ նմանօրինակ պարագաներու մէջ, անսաստողներուն վրայ խստիւ կիրարկել Եկեղեցւոյ կանոնական տրամադրութիւնները:

Ժողովը Վեհ. Հայրապետին բարեհաճ նկատառման յանձնեց նաեւ Ամերիկայի անջատեալ եկեղեցիներու հարցը եւ խնդրեց որ վերջ մը տայ այս ցաւոտ հարցին հնարաւորութեան սահմանին մէջ:

Ժողովը վերջացաւ ժամը 1ին:

## ՆԻՍՏ Ը.

Ժողովը վերսկսաւ երեկոյեան ժամը 5ին՝ Վեհափառի աղօթքով: Ներկայ էին բոլոր ժողովականները, բացի Տ. Խորէն եւ Տ. Վարդան եպիսկոպոսներէն՝ որոնք մեկնած էին:

Կարդացուեցաւ Զ. նիստին ատենագրութիւնը եւ վաւերացուեցաւ:

Ժողովս զբաղեցաւ եկեղեցական տիտղոսներու հարցով եւ եկաւ այն ընդհանուր եզրակացութեան, թէ տիտղոսներու տուչութեան մէջ հարկ է ի գործ դնել աչալրջութիւն եւ աւագութեան, վարդապետութեան, ծայրագնութեան եւ սրբութեան տիտղոսները տալ միայն ստուգապէս արժանաւորներուն:

Ժողովս որոշեց մեր Ծիսարանը ենթարկել վերաքննութեան, առաջին հերթին զբաղելով մկրտութեան, պսակի եւ թաղման արարողութիւններով: Այս գործը յանձնուեցաւ Ամեն. Տ. Գարեգին Պատրիարքին, որ իր աշխատանքին արդիւնքը նախ պիտի ուղարկէ Երուսաղէմ եւ Անթիլիաս, եւ անոնց նկատողութիւնները եւս ստանալէ յետոյ՝ պիտի յղէ զայն Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ի վերջնական տնօրէնութիւն:

Սեղանի վրայ բերուեցաւ նաեւ սրբոց կանոնացման հարցը: Կարծիքներու փոխանակութենէ յետոյ, Վեհափառը եզրակացուց, որ այժմ այս հարցի մասին չենք կարող որոշման յանգիլ եւ հարկ է յառաջիկային նման ժողովներու նկատառման յանձնել զայն աւելի հանգամանօրէն:

Ժողովս զբաղեցաւ ուխտադրուժ եկեղեցականի կարգը վերստին տալու հարցով եւ եկաւ այն եզրակացութեան, թէ այն եկեղեցականները, որոնք կ՚ուխտեն կուսակրօն մնալ եւ յետոյ դրժելով իրենց ուխտը՝ աշխարհ կը մտնեն, այլեւս որեւէ պարագայի տակ չեն կրնար հաստատուիլ վերստին իրենց եկեղեցական կարգին մէջ:

Անհրաժեշտ տեսնուած ըլլալով ունենալ աստուածաբանութեան դասագիրք մը, համաձայն Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան, անոր պատրաստութեան գործը յանձնուեցաւ Տ. Տիրան Արքեպիսկոպոսին, որ՝ յետ գործի աւարտման՝ պիտի մատուցանէ զայն Վեհ. Հայրապետին ի տնօրէնութիւն:

Դարձեալ, որոշուեցաւ, որ ոեւէ անձի կողմէ պատրաստուած կրօնական դասագիրք կամ Քրիստոնէական՝ ենթարկուի պատկան Աթոռին կամ Թեմին եկեղեցական իշխանութեան քննութեան, հաւանութեան եւ վաւերացման:

Օրակարգի վերջին հարցն էր՝ յարաբերութիւն մշակել քրիստոնէական այլ եկեղեցիներու հետ:

Ժողովը, կարծիքներու փոխանակութենէ յետոյ, ցանկութիւն յայտնեց, որ մեր Եկեղեցին եւս մասնակցի զուտ կրօնական բնոյթ ունեցող Համաշխարհային Միջեկեղեցական ժողովներուն, Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ նշանակուած ներկայացուցիչներով:

Սեղանի վրայ բերուեցաւ նաեւ մեզի դաւանակից Ղպտի, Ասորի, Հաբէշ եւ Հնդիկ-Մալապար Արեւելեան քոյր Եկեղեցիներուն հետ յարաբերութեան խնդիրը: Ժողովս փափաք յայտնեց, որ նախապատրաստական աշխատանքներ կատարուին նոյն Եկեղեցիներուն հետ համագումար մը ունենալու համար 1960 թուականէն առաջ: Այս աշխատանքը յանձնուեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին: Երուսաղէմի Աթոռին Տեղապահը կամ Պատրիարքը տարուած աշխատանքներուն արդիւնքը պիտի հաղորդէ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի տնօրէնութիւն:

digitised by A.R.A.R.@

# ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՓԱԿՄԱՆ ԽՕՍՔԸ

Եպիսկոպոսական ժողովը լրացուցած ըլլալով իր աշխատանքները, Վեհափառ Հայրապետը նախ յայտնեց իր գոհունակութիւնը, որ ժողովը, կատարելապէս համերաշխ ու խաղաղ մթնոլորտի մը մէջ կարողացաւ նպաստաւորաբար լուրջ որոշումներ տալ ի շինութիւն Հայաստանեայց Եկեղեցիին: Եւ ըսաւ.—

«Ինչպէս ժողովին բացման առթիւ ակնարկեցինք, այս վերջին տարիներու ընթացքին տեղի ունեցան, գրեթէ անզգալաբար, այսպիսի Եպիսկոպոսական ժողովներ: Գահիրէի մէջ գումարուած Եպիսկոպոսական այս ժողովը, սակայն, եղաւ ինչպէս լիագումար, քանի որ անոր ներկայ էին Ամենայն Հայոց Հայրապետը եւ մեր միւս նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչները եւ գրեթէ բոլոր թեմական Առաջնորդները: Թերեւս սխալած չենք ըլլար, եթէ ըսենք, որ իսկական Եպիսկոպոսական ժողովի անունն ու պատիւը կը վերաբերի այս ժողովին: Եւ այս իմաստով, արժան է կոչել զայն *ԱՌԱՋԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ*.

Այս ժողովը երկու իմաստով ունեցաւ պատմական նշանակութիւն: Առաջին՝ իր *ոգիով, կեցուածքով եւ տուած որոշումներով* պահպանեց մեր Եկեղեցւոյ անկախութիւնը: Մեր Եկեղեցին միշտ ալ գտնուած է, եւ հիմակ ալ կը գտնուի վտանգներու առջեւ: Յաճախ ան, իր ներկայ կազմակերպչական ձեւին պատճառով, չէ կրցած պահել իր ամուր կեցուածքը զանազան հովերու առջեւ, շատ անգամ ենթակայ ըլլալով աշխարհական խմբակցութեանց ոտնձգութիւններուն: Այս իմաստով, մեր Եպիսկոպոսական ժողովը պահպանեց մեզի համար որոշ գիծ մը եւ մենք եպիսկոպոսներս մէկ մարմին կազմած՝ մեր գիծը ճշտեցինք եւ մեր խօսքն ըսինք: Մեր ոյժը մեր այս գիծին մէջ կը գտնուի: Ես իմ ոյժս ալ կը գտնեմ այս միութեան ոգիին մէջ: Անհրաժեշտ է, որ չխախտի մեր այս միութիւնը: Որքան ատեն կայ այս միութիւնը, չենք վախնար որեւէ վտանգէ: Միշտ սկզբունքն է որ յաղթանակած է ի վերջոյ եւ Եկեղեցին իր հեղինակութեան մէջ վերահաստատուած:

Երկրորդ, ամենուս մէջ երեւան եկաւ ցանկութիւն մը մեր Եկեղեցին դնելու վերակազմակերպման ճանապարհին վրայ: Մեր արտասահմանեան այցելութեան ընթացքին տեսայ դրական եւ բացասական երեւոյթներ: Բոլորս կը զգանք, որ մեր Եկեղեցին թերի եւ տկար կողմեր ունի, յատկապէս իր կազմակերպչական եւ վարչական մեքենային մէջ: Մեր ներկայ դժուարութեանց պատճառները վարչական այս տկարութեան մէջ են: Մեր Եկեղեցին զօրաւոր է իր անցեալով, իր հայրապետներով եւ իր սուրբերով: Նաեւ իր ստեղծած արժէքներով եւ իր յաղթական Եկեղեցիի հանգամանքով: Տկար է, սակայն, որպէս զինուորեալ Եկեղեցի: Զօրաւոր ենք նաեւ մեր հաւատացեալ ժողովուրդով: Զօրաւոր է մեր յաղթական Եկեղեցին. պէտք է զօրացնենք նաեւ մեր զինուորեալ Եկեղեցին, վերակազմելով եւ վերածաղկեցնելով զայն: Ես մեծ յոյս ունիմ, որ այս նպատակը պիտի կրնանք իրագործել եւ հասնիլ դրական արդիւնքի: Լիակատար յաջողութիւն ձեռք պիտի բերենք՝ Աստուծոյ ողորմութեամբ եւ Սուրբ Հոգւոյն զօրութեամբ:

Մեր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնը կը մատուցանենք Ամենապատիւ Պատրիարք Հօր, որ հակառակ իր յառաջացեալ տարիքին, յօժարութիւնը յանձն առաւ գալու նախ Անթիլիաս, Երուսաղէմ եւ ապա Գահիրէ: Երախտագիտական ապրումով առաջ նետուեցաւ, եւ ոչ միայն մեզ ուրախացուց, այլ նաեւ մեր հիացման առարկան դարձաւ՝ մեր Եկեղեցիին ծառայելու իր անձնուէր եւ զմայլելի հոգիով: Կը մաղթենք իրեն լիակատար առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ, որպէսզի երկար տարիներ առաջնորդէ Թիւրքիոյ մեր հոգեւոր զաւակները եւ իր շունչը հովանաւորէ մեր ժողովուրդը՝ բոլորիս կողքին:

Մեր գոհունակութիւնը կը յայտնենք նաեւ Երուսաղէմի Պատրիարքութեան Տեղապահ Տ. Եղիշէ Սրբազանին, որ նոյնպէս մեր Եկեղեցիի շինութեան եւ ծաղկումի ճամբուն վրայ մեզի գործակցեցաւ եղբայրօրէն եւ զինք բնորոշող իմաստութեամբ օգտակար եղաւ մեր խնդիրներու լուծման մէջ:

Շնորհակալութիւն նաեւ Տ. Մամբրէ Սրբազանին, Եգիպտոսի Հայոց բարեջան Առաջ-

digitised by A.R.A.R.@

Նորգին, որ իրեն յատուկ եռանդով եւ նուիրումով, ամեն միջոց ի գործ դրաւ, որպէսզի այս ժողովը կարելի ըլլայ գումարել այստեղ, Գահիրէի մէջ: Բոլորիս կողմէ մեր գոհունակութիւնը կը յայտնենք եւ կը մաղթենք իրեն առողջութիւն եւ գործոց յաջողութիւն:

Մեր գոհունակութիւնը կը յայտնենք եւ հայրական օրհնութիւնը կու տանք նաեւ Եգիպտահայ այս վիճակի Թեմական Իշխանութեան, որ առարկայական եւ նիւթական պայմաններ ստեղծեց մեր գործին յաջողապէս պսակումին համար»:

*Վեհափառը իր խօսքը վերջացուց, բարի ճանապարհ մաղթելով բոլոր գացողներուն եւ յոյս յայտնելով, որ շատ ժամանակ չանցած, դարձեալ հաւաքուելու առիթը կ'ունենանք Ս. Էջմիածնի մէջ:*

*Ապա խօսք առաւ Ամեն. Պատրիարք Հայրը եւ ըսաւ. «Երիտասարդ պաշտօնակից եղբայրներ զիս աւելի երիտասարդացուցին ու զօրացուցին: Նոյնն ըրաւ մեր սիրելի եւ երիտասարդ Հայրապետը, որ իմաստութիւնն ունի իբրեւ սպիտակ հեր, ըստ իմաստունին թէ՝ «Ալիք՝ իմաստութիւն մարդոյ են»: Մենք տեսանք այդ իմաստութիւնը իր կեցուածքին, խօսուածքին, զգացումներուն եւ գաղափարներուն մէջ: Եւ այդ իմաստութեան շնորհիւ էր որ պահպանուեցաւ գեղեցիկ ներդաշնակութիւնը մեր միջեւ, ստեղծելով ջերմ եւ քաղցր մթնոլորտ մը, ուր մեր բոլոր խորհրդակցութիւններն ու գաղափարի փոխանակութիւնները յանգեցան որոշ եզրակացութիւններու: Ունեցանք մեր մէջ բաղձալի միութիւնը, որ պէտք է ընդհանրանայ:*

*Մեր Եկեղեցւոյ համար կենսական էին այն բոլոր խնդիրները՝ որոնք եկան մեր սեղանին վրայ: Բայց ասկից յետոյ է, որ պիտի տեսնուի, թէ ինչ չափով պիտի կարողանանք վերածել զանոնք կեանքի: Անշուշտ մեր ջանքը պիտի ըլլայ միութեան այս մթնոլորտը դարձնել աւելի ծաւալուն, երաշխաւորելու համար, աւելի զօրաւոր կերպով, համերաշխ գործակցութիւնը մեր Աթոռներուն միջեւ:*

*Այս Աթոռներուն գլուխը կը գտնուի Ս. Էջմիածինը, մեր կրօնական կեանքի կեդրոնական վառարանը: Անկէ պիտի ճառագայթեն լոյս եւ իմաստութիւն բոլոր եկեղեցիներուն վրայ:*

*Կ'ապահովցնեմ ձեզ, թէ այս ներշնչումներով Թիւրքիոյ մեր համայնքն ալ կ'արդարացնէ իր կեցուածքը իբրեւ հաւատաւոր զաւակներ մեր Եկեղեցիին եւ որպէս հաւատարիմ քաղաքացիներ մեր երկրին»:*

*Յետոյ բոլորին անունով երախտագիտական զգացումներ յայտնեց Ն. Ս. Օծութիւն Շնորհազարդ Հայրապետին, մաղթելով քաջառողջութեամբ եւ արեւշատութեամբ կարողութիւն, որպէսզի բախտն ունենայ տեսնելու, իր շուքով եւ մեր գործակցութեամբ, փառաւորուիլը Հայաստանեայց Եկեղեցիին, «որուն սպասաւորներն ենք — ըսաւ — ամէնքս եւ ոչ թէ միայն իշխանաւորները»: Ապա հայցեց Նորին Սրբութեան օրհնութիւնը բոլոր ժողովականներուն եւ հայ ժողովուրդին վրայ:*

*Եւ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. Կաթողիկոս «պահպանիչ»ով մը օրհնեց բոլոր ժողովականները եւ համայն Հայ Ազգը: Եւ ժողովականներուն «Հայր մեր»ի միաբերան երգեցողութեամբ վերջ գտաւ այս պատմական Եպիսկոպոսական ժողովը ժամը 8.30ին:*

*Ժողովը ցրուեցաւ խիստ գոհ տպաւորութեան տակ:*

digitised by A.R.A.R.@

# ԱՌԱՆՑ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ

Մարդիկ եւ մէրս ուզեցին որ ես ըլլամ քաղցր ու հեզ,
Անձ մը առանց բարկութեան, առանց կիրքի եւ կռուի,
Մարդուկ մը մեղմ, հնազանդ, եւ կամքէ զուրկ՝ ընտանի
Մեծ կենդանի մը սիրուն որուն խնամքը անգամ

Պիտի իր սանձն ունենայ: Աստուածներու բարկութիւնն
Անարդարին դէմ առ դէմ ուտի հարկ է որ մեռնի.
Ըլլամ ես գամբռը մը մեծ միսին առջեւ անատամ,
Առանց փուշի ձուկ մը մեծ եւ օձ մ'որմէ խայթոցն իր

Քաշուած նետուած է իսպառ. անալիք ծով մը հսկայ,
Ձմեռ՝ առանց կրակի. գարուն՝ առանց զեփիւռի.
Սիրամարգ մը վերջապէս որ չունի թեւ ու փետուր:

Այս կենդանին անսովոր ո՞վ կը սիրէ, ո՞վ կրնայ.
Վանականին պէս այն խեղճ, նետած իր սուրբ վերարկուն,
Նետուած ուրեմն սրտերէն հաւատացեալ մարդերուն:

Ա.ՆԵԼ

* * *

Անգիր, ե՛ւ անյայտ, ե՛ւ անյիշատակ՝
Ամայի դաշտում մի գերեզման կայ, —
Ո՞վ է հող դառնում այդ լուռ քարի տակ,
Ո՞վ է լաց եղել այդ քարի վրայ:

Համր քայլերով դարերն են անցնում,
Արտոյտն երգում է իր գովքը գարնան,
Շուրջը ոսկեղէն արտերն են ծփում, —
Ո՞վ է երազել եւ սիրել նրան...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

# ԱՂՕԹՔ

ՄԵԿՆՈՂԻՆ

Տէ՛ր, շնորհէ իրեն կեանք, ճամբուն վրայ երազին,
Թող ոչ մէկ ցաւ գայ տանջել հոգին անոր՝ գիրկին մէջ
Օտարութեան, երբ դառնան դէմքերն անոնց՝ որ առին
Օր մը հասակ միասին, եղան արցունք, եղան սէր:

Տէ՛ր, շնորհէ իրեն կամք, խանդ ու կորով անըսպառ,
Որ հոգիին հեւքն իսկոյն, վայրկեաններուն իր անել,
Գիտնայ փոխել նուագի. որ պահերուն իր մինակ,
Սիրտն իր զգայ աւելի՛ լեցուած շունչով մը ընտել:

Ու հոգին, Տէ՛ր, որ այսօր իմն է, պահէ՛ անվտանգ,
Պահէ ամբողջ տակաւին քամիներուն դէմ վաղուան.
Հաւատաւոր, հեռագնաց ըրէ քայլերն իր պարման:

Իսկ երբ նետէ ժամանակն օր մը ստուերն իր դաժան,
Տէ՛ր, հեռացող սա տղուն խենթ աչքերուն հոգւոյն մէջ,
Մնայ թող միշտ հաւատքի իր բոցէն շող մը անշէջ:

ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ

## ՄՈՆՈՒՄԵՆՏ

(Հեկզամետր)

Կանգնած է ահա մետաղէ այս մոնումենտը. նայի՛ր. —
Մի մարդ է՝ աչքերը յառած դէպի հեռուները. դէմքին
Նստել է մի խոհ հանճարեղ, կերպարանքը խրոխտ է ու վե՛հ, —
Բայց ի՞նչ է կեանքում նա արել — անյայտ է այսօր ամէնքին:
Մարդիկ կան այդպէս մեր կեանքում: — Քայլում են հպարտ ամբոխում
Կանգնում են որպէս մոնումենտ, իսկ թէ ի՞նչ են արել — չգիտես: —
Քո դատարկ գլո՛ւխն է միայն այդ մարդկանց միակ պատուանդանը,
Յիմարութի՛ւնդ է միայն դարձնում նրանց մոնումենտ: —

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

digitised by A.R.A.R.@

# ՍՊԱՍՈՒՄ

Այսօր կը սպասեմ, քունին իմ բարի
Որ մոռնամ զոնէ կարօտքս մեծղի.
Այսօր՝ վասնզի անհանդարտ հոգիս
Կը նըմանի ճիշդ ծովուն կատաղի...։

Օ՜ պահանջքը մեծ փրկարար նինջի,
Զոր երբեք այսքան զգացած չէի..
Բայց ան կը փախչի, — նենգ խաղ նահանջի —,
Եկո՛ւր, որ այլեւս հոգիս խաղաղի...։

Ով ցա՛ւ կարօտի, նախ հծծիւն մեղմիկ,
Ապա ձիւնահիւս, անդուլ կոտտանքի.
Իրարու ձուլուած անուշ եւ լեղի,
Եւ գիշերին մէջ կրկնում անունի...։

Այսպէս դեռ երկա՜ր սպասեմ պիտի
Մինչեւ որ յոգնած ծովը հանդարտի.
Եթէ փրկարար նինջը միշտ փախչի,
Սպասէ վաղուան արեւին բարի...։

Ո՜վ հոգիս՝ քեզի, հազար հեղ չըսի՞...։

ԶԱՒԷՆ Վ. Զ.

* * *

Որսկանը ժայռին զարկեց մի եղնիկ,
Զորը գլորուեց իմ եղնիկը խեղճ,
Ցաւից դող առա, ինչպէս եղեւնիք,
Ա՜խ, որսկանն ասես իմ որդուն զարկեց...
Ու նզովեցի ես որս ու որսկան,
Բայց որսկանն ինքն էլ տխրեց այն ձորում,
Անզգայ մնաց սեւ ժայռը միայն,
Ա՜խ, դրանից է նա յաւերժ մնում.

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ԿՈՐԻՒՆ ԵՒ «ՍԱՄԱՐԱՑԻ»Ն

Հանդէս Ամսօրեայի նոր ստացուած թիւին մէջ — 1956, Յունուար–Փետրուար — Գեր. Հ. Ն. Ակինեան ստորագրած է յօդուած մը «Կորիւնի Վերակազմուած բնագիրն եւ անոր մասին արտայայտուած Նկատողութիւններն եւ Դատողութիւնները» վերնագրով, էջ 46–64։ Նկատի առնելով նիւթին կարեւորութիւնը եւ Գեր. յօդուածագրին ծանր թիւրիմացութիւնները, հարկ կը համարինք չափաւոր անդրադարձումով մը շօշափել կարգ մը կէտեր։ Մեր ձգտումն է «ձեռն ի ձեռն, զիրար լուսաւորելով, իրարու օգնելով, աննախանձ եւ աներկիւղ եւ ազգասիրաբար» յառաջ երթալ, ինչպէս կը փափաքի Գեր. յօդուածագիրը։

Գեր. Ակինեան իր յօդուածը կը սկսի բարի Սամարացիի պատմութեամբ, ինքզինքը դնելով այդ ազնիւ մարդուն տեղը, որ ձէթով եւ գինիով պատեց դժբախտ ուղեւորին վէրքերը։ Բայց յարգելի Յօդուածագիրը իր կարեկցութեան սահմանները չափազանց ընդարձակելով, վիրաւոր Կորիւնը դարմանելու իր բուռն նախանձախնդրութեան մէջ, կը ձեռնարկէ նաեւ վիրաբուժական գործողութեանց, բութ ու ժանգոտ դանակներով . . . ։

Իր վերոյիշեալ յօդուածին մէջ Գեր. Ակինեան նպատակ ունեցած է հերքել մեր այն նկատողութիւնները որոնք լոյս տեսած էին Սիոնի մէջ 1953ին։ Թէ կրցա՞ծ է յաջողութեամբ ի գլուխ հանել իր այդ առաջադրութիւնը, քննենք կէտ առ կէտ։

1. — Ասխանազեան. — Մենք պաշտպանած էինք այս ընթերցումը, նկատելով որ ատոր կը վկայեն ոչ միայն մեծ Կորիւնի բոլոր ձեռագիրները, այլ նաեւ փոքր Կորիւնը, եւ ասոնք գրական եւ ուղղակի վկայութիւններ են, մին ԺԵ. եւ միւսը «իրր ԺԲ. դարէն»։ Իր ծագման մէջ սակայն Կորիւնի վկայութիւնը կու գայ Ե. դարէն։ Գեր. յօդուածագիրը, Կորիւնի գրական վկայութիւնը անիրաւաբար ստելով, եւ Խորենացիի անուղղակի վկայութիւնը քմահաճօրէն թիւրելով, կը հանէ Յովհան Պատմաբանին, մեղադրելու համար զայն իբրեւ «զիւտ» ընող, մինչդեռ այդ յանցանքը ինքն իսկ կը գործէ Պատմաբանէն տաս դար յետոյ։

Քիչ մը աւելի մօտէն քննենք Գեր. յօդուածագրին քմահաճ եւ անընդունելի պատճառաբանութիւնները։ Ըստ Հ. Ակինեանի «Մ. Խորենացին, որ յառաջ բերած է տեղիքս [Պատուէր տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն եւ Ասքանազեան գնդին (Երեմիա ԾԱ. 27)] կը յիշէ միայն առաջինը. «Եւ այս հաւաստի՝ զոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ» (Խոր. Ա. 22), անտես թողլով «Ասքանազեան գնդին»(1)։ Խորենացին, սակայն, այդպիսի բան չէ ըրած։ Ահաւասիկ Պատմահօր գրածը. «Եւ զի արդարեւ զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն, վկայէ եւ Երեմիա մարգարէ ի բանս իւր, հրաւիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ. Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն եւ Ասքանազեան գնդին։ Եւ այս հաւաստի զոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ»։ Խորենացի միայն առաջինը, այսինքն թագաւորութիւնը չի յիշեր, ինչպէս կ'ուզէ հասկնալ Գեր. Ակինեան, եւ անտես չի թողուր Ասքանազեան գունդը, այլ ինչպէս մե՛ր ազգին կը համարի Այրարատեան թագաւորութիւնը, այնպէս ալ մե՛ր ազգին կը համարի Ասքանազեան գունդը։ Եւ այս շատ բնական եւ տրամաբանական է որ Հայոց թագաւորութիւնը ի՛ր բանակով հրաւիրուի ընդդէմ Բաբելոնի։ Ուրեմն Խորենացին ալ Ասքանազեան ազգ ըսելով կը հասկնայ Հայոց ազգ, ինչպէս ըրած էր Կորիւն, եւ Խորենացիին հետեւելով է որ Յ. Պատմաբան եւս մեր ազգը կը կոչէ իրաւամբ՝ Ասքանազեան։

Հետեւաբար զոյգ Կորիւնները, Խորենացին եւ Պատմաբանը ամուր բռնած կը պաշտպանեն Ասքանազեանը, եւ չեն թողուր որ բզքտուի այն՝ բութ գործիքներով։ Ուրեմն մեզի կը մնայ անվարան կրկնել թէ անընդունելի է «Զթորգոմայ», զոր Հ. Ակինեան իր կողմէ դրած է «ԶԱսքանեազեանոյն» տեղ, ոտնակոխ ընելով ձեռագիրներու միաձայն վկայութիւնը։

(1) Կորիւն, Վիեննա, էջ 67։

digitised by A.R.A.R.@

2. — Նաւակեաց. — Գ. Ֆնտգլեանի այս յաջող և իրաւացի սրբագրութիւնը կը փորձէ մերժել Գեր. Ակինեան, բերելով երեք օրինակներ ի նպաստ «նաւակեաց» բարդութեան։ Դիտել կու տանք սակայն թէ իր բերած օրինակներէն երկուքին մէջ կաց գրուած է առընթեր և մօտ նախադրութեանց վրայ, որոնց կարգին պէտք էր յիշուած ըլլար նաև ընդդէմ նախադրութեամբ յինուած ընդդիմակաց բառը, մինչդեռ նաւ գոյական է և Կորիւն գոյականի վրայ կը բարդէ կեաց և կը կերտէ աշխարհակեաց, զգաճակեաց, երկրակեաց, լեառնակեաց և վետակեաց։ Հետևաբար Գեր. յօդուածագրին յիշած բազաւորակացը կը մնայ կասկածելի, և չի կրնար բզքտել այն հուժկու փաստը որ կը կենայ անյողդողդ, պաշտպանելու համար Կորիւնի արդար նաւակեացը և Ֆնտգլեանի արդարացի սրբագրութիւնը։

3. — Հատուածի փոխադրութիւն. — Գրած էինք թէ այդ փոխադրութիւնը անհրաժեշտ չէ և ոչ ալ հիմնուած է ոևէ հաստատուն փաստի վրայ։ Գեր. Ակինեան յամառօրէն կը պնդէ. — Փոխադրութիւնը անհրաժեշտ էր, որովհետև կը շեղէր ըստ բովանդակութեան Ա. 9 հատուածէն եւ անմիաբան էր Ա. 10 հատուածին, բայց կը համաձայնէր Ժէ. 5ին. իմ պատճառներս տուած եմ Ներածութիւն, էջ ԽԳ – ԽԴ [2]։

Մեր քննութեան արդիւնքով յայտնի կը տեսնուի թէ փոխադրութիւնը ոչ միայն անհրաժեշտ չէ, ոչ միայն անհիմն է, այլ և սխալ է. որովհետև այդ հատուածին հոն ներկայութիւնը անհրաժեշտ է։ Քննենք Հ. Ակինեանի պատճառները, որոնք տրուած են Կորիւնի Ներածութեան մէջ։ Ահաւասիկ իր գրածը.

«Այս հատուածը հոս գտնուած էր Սկզբնագրին մէջ. Ագաթանգեղոսի խմբագիրը, որ նախորդ և հետեւորդ հատուածները փոխ առած էր Կորիւնէն, այս հատուածը զատելով զետեղած էր Փաւստոսի մէջ, Դ. 4, ինչ ինչ փոփոխութեամբ, իսկ Կորիւնի մէջ տեղահան ընելով փոխադրած է էջ 12 – 13։ Արդեամբք ալ անհամապատասխան է այն նախաբանին, որովհետև հոն Կորիւնի խօսքը սրբոց գովութեան նուիրուած է, իսկ հոս բարի օրինակի վրայ կը խօսի։ Հատուածս իր սկզբնական տեղը տեսած են Կոմիտաս կաթողիկոս և Համառօտին խմբագիրը»[3]։

Արդ ըստ Հ. Ակինեանի այս հատուածը իր սկզբնական տեղը տեսնողներէն մին է Կոմիտաս կաթողիկոս։ Բայց այն քանի մը տողերը, որ առնուած են Աստուածաշունչէն Կոմիտաս կաթողիկոսի Հաւատոյ Գիրքին մէջ, ոչ իսկ դոյզն չափով կրնան վկայել թէ ան Կորիւնի այս հատուածը տեսած է հոն ուր զայն կ'ուզէ տեսնել Հ. Ակինեան։

Դարձեալ ըստ Հ. Ակինեանի այսպէս «կ'ենթադրէ նաև Փաւստոսի հատուածը»[4]։ Սխալ կարծիք. Փաւստոսի հատուածը ոչ մէկ կերպով այդպիսի ենթադրութեան մը ոյժ կու տայ։

Այժմ կը մնան Ագաթանգեղոս և Սուտ Կորիւն. ասոնցմէ վերջինը միայն ի նպաստ է Ակինեանի ենթադրութեան, իսկ Ագաթանգեղոս բոլորովին հակառակ. որով այս վերջինին հնագոյն վկայութիւնը ի նպաստ Կորիւնի հարազատ բնագրին՝ կը չէզոքացնէ Սուտ-Կորիւնի յետնագոյն և յոյժ կասկածելի վկայութիւնը որուն սխալմամբ հետեւած է Հ. Ակինեան։

Համոզուելու համար թէ այդ հատուածը (Կոր. էջ 12) իր բնական և սկզբնական տեղւոյն մէջ կը գտնուի, կը բաւէ ուշադրութեամբ կարդալ Կորիւնի Նախաբանը։ Ան նախ կը հարցնէ. «Եթէ իցէ՞ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց» (էջ 8), և Աստուածաշունչէն բազմաթիւ օրինակներ բերելով կը ցուցնէ թէ սուրբերը գովուած են հոն, իբրև բարի օրինակ այլոց. և այսպէս «առեալ յերկուցունց համարձակութիւն ի գիր արկանել և զվարս առն արդարոյ» (էջ 13) կը ձեռնարկէ իր գործին, տալով մեզի ադամանդէ մատեան մը։

Իսկ թէ Հ. Ակինեանի վերակազմած Կորիւնին մէջ մեծաթիւ սխալներ կը վխտան, յիշենք մէկ քանի հատ եւ որոնց կը հանդիպինք քննութեան ենթարկուած այս կտորներուն մէջ։

Ժէ. 5, տող 52. — Կատարելոցն. — Սխալ գրչութիւն է Ագաթանգեղոսի մէջ,

---

[2] Հանդ. Ամս. 1956, էջ 49 – 50։

[3] Կորիւն, Վիեննա, էջ ԽԳ։

[4] Նոյն, անդ։

digitised by A.R.A.R.@

որ Կորիւնի միջոցաւ պէտք է ուղղուի և ըլլայ կատարելոցն, մինչդեռ Հ. Ակինեան ճիշդ հակառակն է ըրած։

Ժէ. 6, տող 73-74. — Առանց ճշտացուելոյ. — Ոչ մէկ առաւելութիւն ունի բնագրի առանց խուզելոյն վրայ։ Հ. Ակինեանի եզրակացութիւնը՝ ուստի B կարդալու է առա(նց հետազօտ)ելոյ, պարտաւորիչ չէ. նոյնը կրնայ կարդացուիլ նաև առա(նց խուզ)ելոյ, ինչպէս ունին հասարակ և քննական բնագիրները։

Ժէ. 7, տող 80. — ընդ աստուածախօսն կատարէ. — Նախընտրելի է հասարակ բնագրի ընդ Աստուած զխօսսն կատարէ, ինչպէս ունին նաև քննականները։ Հմմտ. Հռովմ. Ը. 26, ուր զոր կամքն յաղօթս՝ որպէս արժան իցէ ոչ գիտեմք», որուն կ'ակնարկուի յաջորդ 81րդ տողին մէջ, և ոչ թէ Ա. Կոր. ԺԴ. 36-38։

Ժէ. 7, տող 87-89. — Մեր կարծիքով նախընտրելի է կարդալ. ուր ընդ միմեանց բարեխօսելն, և ոչ եթէ առ բարձրագոյն ոք Միածնին կամ Հոգւոյն սրբոյ բարեխօսելն, գիտելի է»: Միջանկեալ նախադասութիւնը կը թուի թէ դուրս ինկած է Կորիւնի բնագրէն, գրչին սահումովը առաջին բարեխօսելն բառին վրայէն դէպի երկրորդը, մինչդեռ Ագաթանգեղոսի մէջ պահուած է փոքր այլայլութեամբ մը։ Այդ նախադասութիւնը Կորիւնէն ներս առնել հարկադրական է արդարև, վասնզի յաջորդ տողը այդպէս կը պահանջէ։

Ժէ. 8, Հատուածը Հ. Ակինեան սխալ տեղ դրած է, պէտք է տանիլ իր հարազատ վայրը, ինչպէս ըրինք վերև։ Հոս ալ առանց արդարացուցիչ ապացոյցի ներմուծուած է «յուսմունս պէսպէսս և յաստուածայինս մի դանդաչէք». պէտք է հոս դրկել զայն իր եկած տեղը, Սուտ-Կորիւնին ծոցը։ Հնագոյն վկան Փաւստոս ի նպաստ է Կորիւնի։

4. — Երանելի Վարդան. — Մենք գրած էինք թէ Մաշտոցի հայրը Երանելի Վարդանը, բանագրօսիկ ճիգով մը Հ. Ակինեան կ'ուզէ նոյնացնել Պապի հարճորդի Վրիկին հետ։ Գեր. Ակինեան կ'ըսէ. — Նոյնացուցած չեմ այլ «հաւանական» համարած։ Հաստատելու համար թէ «հաւանական» չէ որ հարճորդի Վրիկը եղած ըլլայ Ս. Մաշտոցի հայրը՝ Երանելի Վարդանը, կը բաւէ ուշքէ անցնել այն խախուտ շղթան որով Գեր. յօդուածագիրը կը ճգնի Ս. Մաշտոցը կապել հարճորդի Վրիկին։

Նախ և առաջ Հ. Ակինեան կը խլէ Մաշտոցի հօր երանելի մակդիրը, յետնադարեան ծառընտիրներու կասկածելի գենակցութեամբ, փոխարէնը տալու համար երևելի ածականը, ընդդէմ Ե. դարու Անանուն Ժամանակագրութեան. այս ձևով կ'ուզէ ճամբայ բանալ դէպի Վրիկ։

Եւ ապա կը սկսի անհիմն և երևակայական ենթադրութեանց փխրուն շղթան, այսպէս. «Այդ գիւղերուն թուին մէջ էր ճանաչաբար Հացեկացը ....։ Անելի ճանաչական կը տեսնեմ Վարդան Հացեկացին նոյնացնել Վրիկ Հացեկացւոյ հետ ....։ Փոքրիկն Վրիկ իր Հացեկացի մօր հետ ապրեցաւ անեալ ես Հացեկաց գիւղը ....։ Վրիկ առանց տարակուսի փաղաքշական անուն մը, կրճատուած ձևը Վարդան անուան։ Վրիկ ամուսնացաւ անեալ ես եւ ունեցաւ զաւակ յանձին Մաշտոցի»(5):

Գեր. Հ. Ակինեան այսպէս ճանաչականը նեցուկ ըրած կը սկսի քալելու փորձ կատարել. քիչ մը յառաջանալէ ետք ալ կ'առնէ և անեալ ես մը կը զետեղէ, և ապա առանց տարակուսի անոր վրայ կը կանգնի, հարճորդի Վրիկը առօք փառօք կ'ամուսնացնէ և ապա անոր աղուորիկ զաւակ մը պարգևելով՝ իսկոյն կը մկրտէ Մաշտոց։ Հոյակա՜պ և հրաշագեղ բանասիրութիւն արդարև ....։

5. — Պակիդաս =

6. — Ռոտասակ =

7. — Սատանայակուր. — Բնաւ չէինք կրնար երևակայել թէ մեր նկատողութիւնները հերքելու ձեռնարկող Գերյարգելին այսպէս կուր պիտի ըլլար սատանայի։ Հ. Ն. Ակինեան իր սխալ տեսակէտը պաշտպանելու համար օգնութեան կանչած է Գազանակուր և Գերեզմանակուր դատական օրինակները, առանց մտադիր ըլլալու անոնց իմաստին։ Մենք իբր համեմատութեան եզր մատնանշած էինք աստուածակիր բառը և աւելցուցած էինք թէ մեր կարծիքով նախընտրելի է սատանայակիր: Հաւանաբար սխալ գրչութեան արդիւնք է սատանայակուր: Արդ Գեր. Ակինեանի մէջբերած բա-

(5) Կորիւն, Վիեննա, էջ 70-71։

digitised by A.R.A.R.@

ներուն ձախողակ վկայութիւնը տեսնելէ ետք համարձակօրէն կը կրկնենք թէ սատանայակուր յայտնապէս սխալ գրչութեան արդիւնք է, իսկ սատանայակիր անպատճառ նախընտրելի է, վասնզի իր կողմն ունի վկաներու սա անգիմադրելի գունդը, բոլորն ալ Ոսկեդարէն. աշխարհակիր (գործածուած երիցս) և խաչակիր (Կորիւն), բարեկիր և օրինակիր (Մակ.), աստուածակիր (Ագաթ.)։

8. — Եպիսկոպոսական վիճակ. — Դեր. Հ. Ն. Ակինեան իր կատարած սրբագրութիւնը գովելով կը գրէ. «Այս թեթև սրբագրութեան, ուր մէկ գիր փոխուած է և երեք գիր աւելցուած, ոչ միայն Կորիւնի նախադասութիւնը քերականօրէն կ'ուղղուի, այլև չարադէտ ընթերցուածը, որ Կորիւնի հայրենիքը Մինդրելիա, կամ Սուանէթ և կամ Օսէթներու աշխարհը կը փոխադրէր, հետախաղաղ կը բառնայ ի միջոյ ...»(6)։ Եւ սակայն այս «թեթև սրբագրութեամբ» բարեացապարտն Կորիւն կը դրկուի թէ հայրենիքէ և թէ եպիսկոպոսութենէ, ի գոհունակութիւն քանիերորդ դարու անվաւեր «Սամուրացիօրին»։ Փառնիկ Ֆնտգլեանի փաստացի և ուժեղ նկատողութիւնները կը մնան իրենց արժէքին մէջ հակառակ Դեր. Ակինեանի կողմէ իրենց ստորադասուած կամ բոլորովին անտեսուած ըլլալուն։

9. — Ակումիս. — Դեր. Ակինեանի առաջարկած ընթերցումը՝ յաւուանիս յուղարկելոյ, փոխանակ Ակումիս անուն կոչելոյ բառերուն, գրչութեան տեսակէտէ բացարձակապէս անընդունելի է։ Իր սա բացատրութիւնը. — Կ'երևայ թէ Կորիւնի գրիչը իր գաղափար–օրինակի մէջ դժուարընթեռնելի ընթերցուածի մը հանդիպած է, զոր կարդացած է առ կոչի ակումիտոսի ազդեցութեան տակ «Ակումիտ անուն կոչելոյ» — ամենևին գոհացուցիչ չէ։ Եւ որքան ատեն որ Ակումիս հազուադէպ բառին Կորիւնէն ներս տարաժամ մուտքը գոհացուցիչ ձևով չէ բացատրուած, մենք ստիպուած ենք այդ բառը համարելու հարազատ և յիշեալ խօսքը հասկնալու ըստ այնմ, ինչպէս ըրած էինք արդէն։

Այդ կերպով Դեր. Ակինեան կը կարծէ թէ պիտի բախինք պէսպէս դժուարութիւններու, և կը թուէ երեք հատ։ Պատասխան. 1. — Հրաման ելանէր ... կոչելոյ պատմիչին բառերն են և ոչ թէ ուղղակի արքունական հրաւէր, որ պահանջէինք պատշաճ փափկութիւն։ 2. — Սուրբ Ակումիտը վայելուչ մեծարանքով Բիւզանդիոն հրաւիրելու պաշտօնը Թէոդոս կայսեր կողմէ կը տրուի Անատոլիոս Սպարապետին։ 3. — Ակումիտ անուն սուրբը ըսելով կը հասկցուի Ս. Մաշտոց։ Ակումիտ յատուկ անուն չէ, այլ Ս. Մաշտոցին տրուած մակդիր մը, իբր անքուն։ Գիտենք արդէն թէ մեծահռչակ Սուրբը յաճախ գիշերները կը լուսցնէր առատաւոր աղօթութեամբ։

Ի վերայ այսր ամենայնի հարկ է յիշել Դեր. Ակինեանի սա տողերն ալ. «Յամենայն դէպս այս տեղիքը սխալագրութիւն մըն է»(7), և ի մտի ունենալ այն կարելիութիւնը թէ Կորիւնի բնագրին այս հատուածը կրնայ լման հասած չըլլալ մեզի։

10. — Անընկալ բողոք. — Դեր. Ակինեան իր ըրած քմահաճ և անհիմն յաւելումները և տեղափոխութիւնները արդարացնել ճգնելով կը գրէ. — Բայց կը հարցնեմ թէ Սրբազանի «ըստ երևոյթին» լուսաբանութիւնն աւելի քմահաճ, աւելի անհիմն և աւելի անհեթեթ չէ՞(8) —։ Պատասխան. Քմահաճ չէ, որովհետև այդպէս է բնագիրը և այդպէս հասկցած են ուրիշներ ալ. օր. Գ. Ֆնտգլեան և Մ. Աբեղեան։ Անհիմն չէ, վասնզի ընկալեալ բնագրին վրայ հիմնուած է։ Անհեթեթ չէ, քանի որ այդպիսի վսեմ արարքի նախընթաց մը պատմուած է ուրիշ մեծ սուրբի մը մասին։ Ֆնտգլեան արդարև դիտած է որ «Ասի հազիւ թէ հաւատալի լինի», բայց իրաւունք չէ զգացած բնագիրը ըստ կամս փոխելու, որովհետև բանաւէրի մը քմահաճոյքը անսխալական վճռատու չէ։

11. — Աղուանները եւ Դորբերէն Այրուբեն. — Դեր. Ակինեանի այս հարցին շուրջ ընդարձակ խօսածները գրած էինք հրանալի, որոնց իբրև աղբիւր ծառայած էին «իր ենթադրութեանց տարրակը և միջնադարեան պահպանակ մը»։ Արդ Դեր. յօդուածագիրը անդրադառնալով մեր տողերուն կը գրէ. «Եթէ Սրբազանը իմ այս հաստատութիւնը երևակայութեան ծնունդ կը

(6) Հանդ. Ամս. 1956, էջ 51։

(7) Հանդ. Ամս. 1956, էջ 52։

(8) Նոյն, էջ 53-4։

digitised by A.R.A.R.@

համարի, հաճի գրական ապացոյցներով ճեր-ճել և ոչ անխտրաբար ճեճգճել»(9)։

Գեր. յօդուածագիրը ինքն իրեն իրաւունք տուած է մեզմէ պահանջելու գրական ապացոյցներ, մինչդեռ ինքն իր մասին բնաւ չէ զգացած այդ պարտքը. այսինքն իր տեսակէտը հիմնաւորելու համար գրական ապացոյցներ ունենալու հարկը։ Գեր. Ակինեան կը կարծէ թէ ենթադրութիւն ենթադրութեան վրայ կուտելով բան մը հաստատած է, մինչդեռ ոչ միայն ոեւէ հաստատուն բան կը պակսի իր գրածին մէջ, այլ հեղուկ անգամ չկայ, ամբողջովին կազային է և ցնդական։ Այժմ տեսնենք թէ Գեր. Ակինեան ինչ բան հաստատած է ինչ բանի վրայ։

Նախ առնենք Կորիւնի պատմածը. «Յայնմ ժամանակի եկեալ գիպէր նմա այր մի երէց Աղուան ազգաւ Բենիամէն անուն. և նորա հարցեալ և քննեալ զբարբարոս զբանս Աղուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս ըստ փերթապարգև կորովի ստացութեան իւրում . . .»։ Արդ Կորիւն գրած է. «եկեալ գիպէր նմա», առանց ճշտելու վայրը։ Գեր. Ակինեան ձեռքը տպրակին մէջ կը խօթէ և անմիջապէս դուրս կը հանէ այս չյիշուած վայրը՝ «Հռոմէական հողամաս»(10)։ Բայց նկատելով որ «հռոմէական հողամաս»ն ալ տակաւին շատ մութ է, քիչ յետոյ կը լուսաբանէ իր ընթերցողները գրելով. «Մաշտոց հռոմէական հողի վրայ կը գտնուէր, Կ. Պոլիս կամ Հայկական նահանգներու մէջ»(11)։ Նկատեցէք որ Գեր. յօդուածագիրը դեռ կը խարխափէ ընդարձակ տարածութեան վրայ։ Աւելի վարը պիտի տեսնենք որ կանգ պիտի առնէ Պոլսոյ մէջ, առաջնորդութեամբ իր ենթադրութեանց խարխուսի կրկներեւոյթներուն։

Կորիւն գրած էր. «առնէր ապա նշանագիրս Աղուաներէն լեզուին»։ Գեր. Ակինեանի «խորհրդածութիւնները կը ստիպեն» զինքը «ըսելու թէ Մաշտոց Վարդապետ քրիստոնեայ աղուան ժողովուրդի համար մասնաւոր այբուբեն չէ յօրինած»(12)։ Գրական ապացոյց ուզող Գեր. յօդուածագիրը ոչ միայն գրական ապացոյցներով չի խօսիր, այլ պատմիչին գրական վկայութիւնները կ'ուզէ թիւրել իր չնաշխարհիկ «խորհրդածութիւններուն» զօրութեամբ։

Վերադառնանք Գեր. Ակինեանի հետ Բենիամին երէցին, որ էր «աղուան յազգէ»։ «Եթէ սա Աղուանից աշխարհէն էր և գացած է Մաշտոց Վարդապետին, երբ նա կը գտնուէր ի կողմանս Յունաց, խնդրելու իր բարբարոս աղուաներէն լեզուի համար ուրոյն, ոչ-հայերէն նշանագիրներ, պիտի հարցնենք, թէ այդ երէցը իր խնդիրը ինչո՞ւ չէ ներկայացուցած Վարդապետին ա՛յն ժամանակ, երբ նա անձամբ գացած էր Աղուանից աշխարհը»(13)։ Պատասխանը շատ պարզ է. Մաշտոց Վարդապետ տակաւին Աղուանից աշխարհը չէր գացած։ Գեր. Ակինեան Կորիւնի հատուածները քմահաճօրէն տեղափոխելով արտառոց կացութիւն մը կը ստեղծէ և յետոյ կ'ուզէ նեղը ձգել Բենիամին երէցը։ Ահա այսպէս Գեր. Ակինեան Կորիւնի հատուածները անճահօրէն տարագրելով քաոսական վիճակի կը մատնէ Կորիւնի Պատմութիւնը, և կը ձեւացնէ այնպիսի թնճուկներ որոնք բանավէճները կը տանին աւելորդ ժամավաճառութեան, եթէ բարեմտութիւնը ունենան արժէք տալու իր այլընդայլոյ ենթադրութիւններուն։

Գեր. յօդուածագիրը անգամ մը ուղիղ ճամբէն դուրս գալէ և գառ ի վայր սայթաքելէ ետք ալ կանգ չ'առներ և կը գլորի հետզհետէ աւելի վար և ի վերջոյ կ'աւելցնէ. — Կը ստիպեն զմեզ այս խորհրդածութիւնները Բենիամին երէցը «աղուան յազգէ» ո՛չ աղուան նկատել և առհասարակ այդ «աղուան ազգը» ո՛չ աղուան ժողովուրդ համարել(14)։

Ըստ Գեր. Ակինեանի ուրեմն Բենիամին երէցը աղուան ազգէ չէր, հապա ինչ էր՝ Անհատակ իր հաստատումը. — Զարմանալի չէ ուրեմն, եթէ հաստատենք թէ նոյն երեւոյթը նաև Կորիւնի բնագրին մէջ տեղի ունեցած է, նախնական «աղաճ» և «աղաճերէճ» սրբագրուած է օրինակողներէն «աղուան» և «աղուաներէն»։ Ուստի Բենիամին երէց էր «աղան յազգէ» և խնդրած է գիր «աղաներէն» լեզուի համար։ Այս

(9) Նոյն, էջ 55։
(10) Հանդ. Ամս. 1948, էջ 322։
(11) Նոյն, էջ 324։
(12) Նոյն, էջ 335։
(13) Նոյն, էջ 339։
(14) Նոյն, էջ 341։

digitised by A.R.A.R.@

պատգամաւորութիւնը յանձնուած էր իրեն առանց տարակուսի բարձրագոյն կողմէ, այսինքն կամ ազգով ալան Արտաւուրի և կամ անոր որդւոյն՝ Ասպարի կողմէ, որոնք 420ին Կ. Պոլիս զինուորական բարձր դիրքեր գրաւած էին «բարբարոսական բանակին» մէջ, որ կազմուած էր յատկապէս Գոթերէ և անոնց հետ խառնուած Ալաններէ(15)։ Այսպէս ըստ Գեր. յօդուածագրին Ագուանը կ'ըլլայ Ալան, Ալանը՝ Ալան, Ալանն ալ Գոթ։ Գրծու գնաց։ Եւ արդարև քանի մը էջ կարդալէ ետք պիտի տեսնենք որ Մաշտոցին կը մօտենայ «Բենիամին երէց, ազգով ալան, լեզուով գոթ»(16)։ Այստեղ բանասիրութիւնը իր սահմաններէն դուրս կ'ելլէ և ոտնձգութիւն կը կատարէ աճպարարութեան կոչուածէն ներս։

Գոթական նշանագիրներու գիւտը ընդհանրապէս վերագրուած է Վուլֆիլա եպիսկոպոսին։ Գեր. Ակինեան, սակայն, տեսէք ինչ կը գրէ. — Այն իսկ, որ պատմագիրը (Փիլոստորգիոս) իր անչափ փառաբանելոյն զՎուլֆիլա զայն «աստուածացնելու» իսկ կը ձգտի, կասկած կ'արթնցնէ մեր մէջ, թէ արդեօք աւելախօսութեամբ իրեն չէ՞ վերագրած նաև գոթական նշանագիրներու գիւտն և Աստուածաշունչի թարգմանութիւնը(17)։ Այս կասկածն ալ որոշ նպատակի մը պիտի ծառայէ անշուշտ։ Եւ արդարև քիչ յետոյ մեր դիմաց կ'ելլեն սա տողերը. — Այս և նման խորհրդածութիւններ կը տանին զիս լքել այն ընդհանուր համոզումը, թէ Վուլֆիլա եղած ըլլայ գոթական այբուբենը հնարողն և գոթերէն Աստուածաշունչի մասերու թարգմանիչը իբր 370ին։ Եւ որովհետև հայ հրապարակի վրայ գոթական Այբուբեն, պէտք է ան նաև իր հնարողն ունեցած ըլլայ։ Եւ վասնզի այս Այբուբենը իր մէն մի մասերով յօրինուածական կառուցուածք մը կը ցուցադրէ, կ'ենթադրէ համապատասխան չափով զարգացած և հնարամիտ վարպետ մը։ Ո՞վ կրնայ է եղած ըլլալ ան։ Պատասխանը կու տայ ժամանակակից կենսագիր մը՝ Կորիւն վարդապետ . . . (18)։

Այս բոլորէն ետք անշուշտ զարմանալի չէ եթէ Գեր. Ակինեանի գրչէն դուրս գան նաև հետևեալ տողերը. — Զարմանալի է արդարև յոյն եկեղեցական պատմիչներու շրջահայեցութիւնը, որոնք Կ. Պոլիս նստած . . . իրենց շուրջը կատարուած դէպքեր կ'անտեսեն։ Կ. Պոլիս երեք Կովկասեան ազգերու լուսաւորիչ կ'այցելէ, երկու բարբարոս ազգերու համար սեպհական նշանագիրներ հնարողը անձամբ իրենց կու գայ, ամիսներով իրենց մէջ հիւր կը մնայ, նոյն իսկ իրենց քաղաքին մէջ երրորդ բարբարոս ժողովուրդի մը՝ Գոթերու համար այբուբեն կը հնարէ, և սակայն ոչ կ'իմանան և ոչ ալ կը հետաքրքրուին(19)։ Բայց ահաւասիկ քսաներորդ դարուն հայ բանասէր մը Վիեննա նստած կ'իմանայ թէ Մաշտոց Վարդապետ Կ. Պոլսոյ մէջ այբուբեն մը շինած է Գոթերուն համար։ Ո՜հ, ինչ սուր ականջներ, որոնք գրական ապացոյցներու տեղը կը բռնեն լսուլի . . . ։

Եւ այսպէս միջամտածային ենթադրութիւններով ճամբայ ելլող և օդային դղեակներ կառուցանող Գեր. բանասէրը ահա կը սկսի հաւատալ իր ենթադրութիւններուն և կը յայտարարէ. — Այժմ, երբ կ'ապացուցուի թէ այդ գոթական այբուբենի հեղինակը Մաշտոց է, ինքնին կը հետևի, թէ հնչիւններուն համապատասխան նշանագիրներ տրուած են հայ Մաշտոցէն, այնպէս ինչպէս հնչած են անոնք իր լսողութեան ալան Բենիամին երէցի արտասանութեամբ(20)։ Գեր. յօդուածագիրը կը սկսի կարծել որ արդէն իսկ ապացուցուած է թէ Մաշտոց Վարդապետն է հեղինակը գոթական այբուբենին։ Բայց կը ցաւինք ըսելու թէ իր քմածին խորհրդածութիւնները շատ հեռու են սեէ տարրական արժէք ունենալէ, և հետևաբար ոչինչ կ'ապացուցանեն գրականօրէն։

Շարունակելով իր տեսութիւնը Գեր. յօդուածագիրը կը գրէ թէ գոթերէն գրերու «ինչ ինչ անուններ շատ նման կը հնչեն հայ այբուբենի անուններուն»(21).

| | | | |
|---|---|---|---|
| օր. հայ. | դա | գոթ. | դաագ |
| » | մէն | » | մամ |
| » | պէ | » | պէրտրա |
| » | ռա | » | ռաէդա |
| » | տիւն | » | տիւզ, ևլն։ |

(15) Նոյն, էջ 455։
(16) Նոյն, էջ 478։
(17) Նոյն, էջ 470։
(18) Նոյն, էջ 475։
(19) Նոյն, էջ 477։
(20) Նոյն, էջ 488։
(21) Նոյն, էջ 492։

digitised by A.R.A.R.@

Մենք դժբախտաբար հոս աւելի մեծ տարբերութիւններ կը տեսնենք անուններու՝ քան թէ նմանութիւններ։

Քիչ յետոյ Դեր. Ակինեան կ'աւելցնէ. — Ըստ այսմ Բենիամին երէց, որ խնդրողն եղաւ գոթական նշանագիրներու, պէտք է նկատուի Աստուածաշունչի թարգմանիչն և գոթական գրականութեան հիմնադիրը(22)։ Այս կերպով Վուլֆիլայի ձեռքէն կը խլուի իր պսակը հազար հինգ հարիւր տարի ետք և կը տրուի Բենիամին երէցին։ Մեր շնորհաւորութիւնները՜։

Հիմա որ երկարօրէն քննեցինք Դեր. յօդուածագրին փաստերու մթերանոցը և հոն գտանք լոկ իր քմածին ենթադրութեանց ծանօթ տոպրակը, անցնինք իր այն միւս աղբիւրին, միջնադարեան առեղծուածային պահպանակին, որմէ քաղած է իր «գրական ապացոյցները», մեզի տալու համար մեծաշռինդ եզրակացութիւններ։ Այդ երեւելի աղբիւրը «Թուլթարք»ն է։ Քննենք քիչ մը։

Թուլթարքի «սկզբնագիր օրինակը, ինչպէս ինձ կը թուի գրուած էր գոթերէն տառերով մագաղաթի վրայ. նոյն ինքն գոթական այբուբենին հնարող Մաշտոց վարդապետի ձեռքով։ Բնագրին լեզուն եղած է հայերէն»(23)։ Եթէ կ'ուզէք՝ նորագոյն տարազով. «Կը համարիմ, թէ Մաշտոց երբ յանձնեց գոթական այբուբենը Բենիամինին, սա խնդրեց յիշատակի համար նոյն նշանագիրներով հայերէն օրհնէնք մը, որ պիտի ծառայէր Գոթ ժողովուրդին համար իբրև պահպանակ, գիր օրհնութեան»(24)։

Թուլթարքի տրուած օրինակին մէջ ոչինչ կայ հայերէն, բայց Դեր. յօդուածագիրը իր կախարդական արուեստով կը յաջողի հայացնել զայն, այսպէս. «Կը համարիմ սխալագրութիւն», «հաւանօրէն սխալագրութիւն», «կը համարիմ սխալաձեւ», «կ'ենթադրեմ նորաձևութիւն», «առանց տարակուսի սխալագրութիւն», եայլն(25)։ Այս բոլոր քաշքշուքները, քմահաճ փոփոխութիւնները, և անընդունելի ենթադրութիւնները կարդալէ ետք կը յանգինք այն եզրակացութեան թէ Թուլթարքի բնագրին լեզուն չէ եղած հայերէն, և թոյլատրուած չէ մեզի անոր հեղինակը անուանել Մաշտոց։

Դեր. Հ. Ակինեան տակաւին կ'աւելցնէ. «Հայերէն բնագրի գաղտական կնիքը աներկբայ կը հաստատէ մեր հաւատումը»(26)։ Բայց պէտք չէ մոռնալ թէ հայերէն գաղտական այդ բնագիրը պարզապէս յերիւրուած է 20րդ դարուն, և հետևաբար հեղինակը ինքն իրեն համար վկայած կ'ըլլայ թէ իր վկայութիւնը հաւաստի է։ Այս ալ չեղաւ. ասիկա գրական ապացոյց չէ, այլ գերագրական խաբկանք։

Աւելի չերկարելու համար այս հատուածը, յարգելի ընթերցողներուն կը թողում երթալ վայելել շատ համեղ այն հատուածները, որոնք կը զարդարեն Հանդէս Ամսօրեայի էջերը։

12. — Զհամագունակն. — Հ. Ակինեան Ագաթանգեղոսէն համարձակութիւն առնելով այս բառը մուցուցեր է իր յերիւրած Կորիւնի բնագրին մէջ, և մեր նկատողութեան հակառակելով կը հարցնէ թէ՝ ո՞ր ձեռագրական տուեալները կ'ակնարկուին։ Մենք յիշած էինք արդէն թէ Կորիւն ունի «հանգոյն նմին» բացատրութիւնը. իսկ խնդրոյ առարկայ հատուածին մէջ թէև Կորիւնի 1672ի ձեռագիրը միայն «հանգոյն» ունի, բայց 1774ի ձեռագիրը կը կարդայ «հանգոյն նմին»։ Հ. Ակինեան կը մերժէ այս ընթերցումը իբրև «բանասիրական սրբագրութիւն», կարծես թէ իր ըրածը ատկէ տարբեր բան մըն է։ Հնագոյն այդ «սրբագրութիւնը» նախընտրելի է նորագոյն իր կրկնասրբագրութենէն, քանի որ Ագաթանգեղոսին ալ կրնայ համարուիլ բանասիրական, եթէ կ'ուզէք բանաքաղական սրբագրութիւն։ Չմոռնանք որ Ցնագլեանի և Աբեղեանի նման բանասէրներ «հանգոյն նմին»ը նախընտրած են և տած իրենց հրատարակած Կորիւնի բնագիրներուն մէջ։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

(Մնացեալը յաջորդիւ)

(22) Նոյն, էջ 493։
(23) Նոյն, էջ 503։
(24) Կորիւն, Վիեննա, 1952, էջ 101։
(25) Հանդ. Ամս. 1948, էջ 504-505։
(26) Նոյն, էջ 505-6։

digitised by A.R.A.R.@

## ԳԻՏԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Աղեքսանդրիոյ մէջ, շատ մը կրօնաւորներ Արիոսի բաժններուն համաձայն գտնուեցան և ոգի ի բռին վիճաբանութեան մտան։ Արիոսի հակառակորդներ ալ ասպարէզ իջան, գլխաւորութեամբ քաղաքի եպիսկոպոսապետ Աղեքսանդրի, և մանաւանդ երիտասարդ սարկաւագի մը՝ Աթանաս (Athanasius) անունով, որ շատ չանցած հակա—Արիոսեան բանակի անվիճելի և քաջամարտիկ գլուխը պիտի ըլլար, Ուղղափառ Եկեղեցւոյ սիրական հերոսը և սուրբը։

Աթանաս (296 – 373) հակաճառեց թէ Քրիստոսի բնութիւնը աստուածային էր և Նոյնը Աստուծոյ բնութեան հետ։

Վէճը տաքցաւ։ Քիչ վերջ Արիոսեաններ Տարբեր բառի տեղ սկսան գործածել Նման բառը։ Քրիստոսի բնութիւնը Աստուծոյ բնութեան Նման էր, բայց ոչ Նոյն:

Եթէ Տարբեր-ը Նման-ի փոխել զիջողութեան համար եղած էր, Աթանասեանները բացարձակապէս մերժեցին այդ ալ։

Եպիսկոպոսապետը բանադրեց Արիոսը և Եկեղեցիէն վտարեց։ Այս կտրական քայլը բռնկուող վէճը ա՛լ աւելի հրահրեց։ Այդ օրէն Աղեքսանդրիայէն անդին ալ կը ծաւալէր արագօրէն։

Անտիոքի դպրոցէն՝ Արիոսի ընկերները անոր կողմը բռնեցին։ Եւ շատ չանցած քրիստոնեայ աշխարհը կլանուեցաւ այս կատաղի պայքարով, Նման-եաններ և Նոյն-եաններ։ (Երկու բառերու յունարէնը միմիայն մէկ գիրով իրարմէ տարբերելուն, հեգնական ակնարկներ եղան մէկ տառի համար այսքան կռիւ և արիւնհեղութիւն տեղի ունենալուն։ Homoiousia նման բնութիւն, Homoousia նոյն բնութիւն)։

Կոստանդին կայսրը միջամտեց, և Նիկիա քաղաքին մէջ գումարել տուաւ եպիսկոպոսներու մեծ ժողով մը, ուր եկան թէ Արիոսեաններ և թէ հակառակորդներ, և ուր հարցը միանգամ ընդ միշտ պիտի լուծուէր, և Եկեղեցիին վտանգուած խաղաղութիւնը վերահաստատուէր։

Կայսեր քրիստոնէական հաւատքը մակերեսային էր։ Նիկիոյ ժողովի օրակարգին ամենակարեւոր հարցի բնոյթի մասին հազիւ թէ լիակատար ըմբռնում ունենար։ Սակայն, Կոստանդին քաղաքագիտօրէն հաշիւ կ'ընէր թէ ընդհանրական մէկ անբաժան Եկեղեցի մը բովանդակ կայսրութեան մէջ մեծապէս պիտի սատարէր կայսեր ջանքերուն՝ պետութեան ամբողջութիւնը պահպանելու համար։

Եկեղեցւոյ պատմութեան այս առաջին մեծ ժողովին մէջ Արիոսեան եպիսկոպոսներ և Աթանասեաններ՝ օրերով վիճաբանեցան Քրիստոսի բնութեան այլեւ այնքան ծանրակշիռ հանգամանք ստացած խնդրի մասին։

Վերջ ի վերջոյ, Աթանասի տեսակէտը յաղթանակեց, և ժողովին որոշումը դատապարտեց Արիոսը։ Այս հանդիսաւոր որոշումը ծանօթ է մեր ամենուն, որովհետեւ ամէն կիրակի Պատարագի մէջ կը յիշուի, Հանգանակ Հաւատոյ։ .... և ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն յէութենէ Հօր, Աստուած յԱստուծոյ, Լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած ....»։

Ուրեմն Քրիստոս ունէր նոյն բնութիւնը, ինչ որ Աստուած ունէր։

Արիոս աքսորուեցաւ։ Իրեն հետեւողներն ալ միասին։

Բայց իր շարժումը, փոխանակ դադրելու կամ մեռնելու, ա՛լ աւելի նոր թափով մը վերսկսաւ արծարծուիլ և տարածուիլ։ Եկեղեցւոյ շրջանակէն դուրս ալ մտքեր սկսան յուզուիլ։ Նոյնինքն Կոստանդին կայսեր քոյրը պաշտպան կանգնեցաւ Արիոսեաններուն։

Քանի մը տարի վերջ կայսրն ալ միտքը փոխեց, և հաշտարար դիրք բռնեց Արիոսեան եպիսկոպոսներու հանդէպ։ Եւսեբիոս, Նիկոմիդիոյ եպիսկոպոսը, աքսորէն կանչուեցաւ 328ին, Նիկիոյ ժողովէն

digitised by A.R.A.R.@

երեք տարի վերջ։ Աթանաս աքսորուեցաւ 335ին։ Արիոս Պոլիս բերուեցաւ, եկեղեցի ընդունուելու համար։ Բայց արարողութենէն օր մը առաջ, փողոցը քալած ատեն, յանկարծ հիւանդացաւ, և քանի մը վայրկեանի մէջ մեռաւ (10)։

Իսկ Կոստանդին կայսրը մահուան անկողնի մէջ քրիստոնեայ մկրտուեցաւ Արիոսեան Եւսեբիոս եպիսկոպոսէն։

Յաջորդը, Կոստանդիոս կայսր, եթէ ինքզինքը բացէն ի բաց Արիոսեան չյայտարարեց, բայց եկեղեցական խնդիրներու մէջ Արիոսեան քաղաքականութիւն մշակեց։ Նիկիոյ ժողովին կարեւորութիւն չտուաւ, և Աթանասը ատելով կ'ատէր։

Իր օրով, Արիոսեան հերձուածը և ատոր շուրջ եռևեփող հարցերը այնքան հասարակ ժողովուրդի միտքն ու խօսակցութիւնն ալ վրդովեց։ Կոստանդիոս, անսահման յաւակնոտութեամբ, միջամուխ եղաւ պայքարին, որը ծառայեց հրդեհը աւելի տարածելու։ Բանդէտի հովեր առած, փառասէր և անգութ կայսրը, կրօնական հարցերու մասին կամայական վճիռներ տալու, և զանոնք բռնի գործադրել տալու մէջ գոհացում գտաւ։

«Քրիստոնեաներու պարզուկ և դիւրահասկնալի կրօնը», կը գրէ ժամանակակից պատմիչը, «Կոստանդիոս մթագնեց զառամած մտքի մը աւելորդապաշտութիւններով, և վարդապետական մանուածապատ և խըրթին վիճաբանութիւններով, փոխանակ լըրջօրէն աշխատելու որ համաձայնութիւն մը գոյանայ։ Ինք շատ մը վէճերու դուռ բացաւ, և երբ անոնք աւելի և աւելի տարածուեցան, Կոստանդիոս կռուազան բառերով սաստկացուց զանոնք։ Եւ մինչ ինք ուզեց ծէս ու վարդապետութիւն իր կամքին ուզած ձեւով կաղապարելու, եպիսկոպոսներու խումբեր Հասարակաց Սուրհանդակները գործածելով, կը վազվռտէին բազմաթիւ Սինոդներու, ինչպէս կը կոչեն զանոնք, և ան այսպիսով կը խանգարէր Սուրհանդակային կանոնաւոր երթեւեկը»(11)։

Կարծես այնքան բնակչութեան համար աւելի կենսական հարց գոյութիւն չունենար, բացի Քրիստոսի բնութեան ճշտումը։ Շուկայի թէ բաղնիքի մէջ, փողոցը կամ հրապարակներուն, ժողովրդային լայն խաւերու վիճաբանութեան միակ հրատապ նիւթը դարձաւ այդ։

Ունինք երկու վկայութիւններ, երկուքն ալ Ուղղափառեան։ Մէկը, երգիծական սրամտութեամբ — եզական երեւոյթ եկեղեցւոյ նշանաւոր և սրբացած Հօր մը մօտ։ Միւսը, յոռետես, գրեթէ ողբերգական։

Առաջինը, Գրիգոր Նիւսացի, Ս. Բարսեղի տաղանդաւոր եղբայրը։

«Քաղաքը (Կոստանդնուպոլիս) լեցուն է բազմութիւններով, որոնք անիմանալի հարցերու մասին վարդապետական հակաճառութիւններ կ'ընեն։ Փողոցները և շուկաները թատերաբեմը կը հանդիսանան հին հագուստ վաճառողներու, դրամափոխներու և նպարավաճառներու վիճաբանութեանց։ Եթէ իրեն հարցնես թէ քանի Օբոլի կ'ուզէ իր ապրանքին համար, ան կը պատասխանէ ճառելով Ծնեալի և Արարեալի վրայ։ Եթէ հացին գինը հարցնես, որպէս պատասխան պիտի լսես. 'Հայրը աւելի մեծ է քան Որդին, և Որդին ստորադաս է Հօրը'։ Եթէ հարցնես. 'Բաղնիքը պատրա՞ստ է'։ Պիտի լսես. 'Որդին ոչնչէ ստեղծուած էր'»։

Երկրորդը, Թէոդորէ եկեղեցական պատմիչը, որուն ամբողջ գիրքը Ուղղափառեան և Արիոսեան պայքարի դաժանութիւններով լեցուն է։

«Ամէն քաղաքի և ամէն գիւղի մէջ վէճեր և բանակռիւներ սկսան աստուածաբանական վարդապետութիւններու մասին...։ Անոնք ողբերգական թատերաբեմերու յարմար տեսարաններ էին, որոնց վրայ արցունք միայն կրնար թափուիլ։ Որովհետեւ այնքան հին օրերու պէս չէր, երբ եկեղեցին յարձակման կ'ենթարկուէր օտարականներէ և թշնամիներէ, այլ հիմա, միեւնոյն երկրի ժողովուրդները, որոնք մէկ տանիքի տակ կը բնակէին և մէկ սեղան կը նստէին, իրարու դէմ կը կռուէին, ո՛չ թէ նիզակներով, այլ իրենց լեզուներով»։

Ոչ միայն լեզուներով, այլ արիւնեն-

(10) Խորենացիին գոհունակութիւնը կը զգաս իր բառերէն, երբ այս մահը կ'արձանագրէ. «Այս ամբարիշտ Արիոսը արտաքնոցի մէջ ալ սատկեցաւ, ինչպէս իրեն արժանի էր» (Բ. 89)։

(11) Ammianus, XXI, 16, 18.

digitised by A.R.A.R.@

զութեամբ ալ։ Որովհետև հասկնալի էր որ այնքան յամառ և կատաղի վէճեր հազիւ թէ նախատական արտայայտութիւններով սահմանափակուէին։ Շատ անգամ բուռն փաստարկութիւններու օգնութեան կը հասնէին սուր ու դանակ։

Հռոմի աթոռի գահակալին ընտրութեան շուրջ մղուած պայքարին, Արիոսեաններ և Ուղղափառեաններ բախում ունեցան, որուն ընթացքին երեք հազար հոգի սպանուեցան։ Արիոսեան ընտրելին կարճ ատենուայ մը համար յաջողեցաւ։ Յաղթողները բռնադատեցին Ուղղափառեանները որ իրենցմէ Հաղորդութիւն առնեն, և երբ մերժուեցան, փայտի կտորով մը իւրաքանչիւրին բերանը բացին, և նշխարը կոկորդէն վար քշեցին։

–

Ահա Արիոսեան փոթորիկի այս ամենատաքիկ շրջանին էր, որ պատանի Պապ արքայազունը և իրեն ընկերացող հայ իշխանազուններ պատանդ կուգային խռովայոյզ մայրաքաղաքը Պոլիս։

Պապի պատանդ երթալու յաջորդող տարին Կոստանդիոս կայսր մեռաւ։ Ուղղափառեանները ուրախացան կարծելով թէ այլեւս իրենց հալածանքը վերջ պիտի գտնէր և Արիոսեան հերեսը կորսնցնէր իր թափը։ Ս. Յերոնիմոս այդ անհամբեր ուրախութեան լեզու կուտար. «Մեր Տէրը կ'արթննայ։ Ան փոթորիկին կը հրամայէ։ Գազանը կը մեռնի, և անդորրութիւնը կը վերահաստատուի»։

Եթէ իրապէս անդորրութիւնը տիրապետէր, կը փորձուինք ենթադրելու թէ Պապի ապագայ կեանքն ալ Հայաստանի մէջ կըրնար տարբեր ըլլալ։ Սակայն, բազմահմուտ Սուրբը կը սխալէր։

Շատ չանցած, Կոստանդիոսի յաջորդներէն Վաղէս կայսեր օրով, Արիոսեան յաղթական գերակշռութիւնը կայսրութեան արեւելեան մասը բոլորովին պիտի նուաճէր։ Եւ Պապը ու միւս հայ իշխանազունները Կոստանդիոսի օրով չսորվածը կամ ըմբռնածը, որպէս նորահաս երիտասարդներ, մոլի Արիոսեան Վաղէս կայսեր շրջանին պիտի սորվէին։ Եւ այդ պատճառաւ, տարիներ վերջ, Փաւստոսը՝ Ս. Յերոնիմոսէն շատ աւելի ատելավառ բառերով խարանէր դժբախտ Հայ Արքան։

## 3. ՅՈՎԻԱՆՈՍ — ՈՒՂՂԱՓԱՌ ԿԱՅՍՐԸ

Դառնանք աղէտահար Հռոմէական բանակին, Տիգրիսի ձախ ափին, թշնամի հողի վրայ, որ Յուլիանոս կայսեր յանկարծ սպանուելովը՝ անակնկալ ճգնաժամ մը կը դիմագրաւէր։

Յուլիանոս վերջինն էր Մեծն Կոստանդիանոսի ընտանիքին։ Ան իր կենդանութեան գահակից մը չէր նշանակած։ Եւ այժմ նոր կայսեր մը ընտրութիւնը ստիպողական անհրաժեշտութիւն էր, եթէ չէր ուզուեր որ անգլուխ մնացած բանակը բոլորովին քայքայուի, և հաւանաբար փճանայ Շապուհի զօրագունդերուն՝ օրըստօրէ կրկնապատկուող ասպատակային յարձակումներէն։

Զինուորական խորհուրդ մը, հապճեպով գումարուած, կայսր ընտրեց Յովիանոսը, Ուղղափառ քրիստոնեայ, որուն կրօնական տեսակէտի մասին պատեհութիւն կ'ունենանք խօսելու։

Ան 32 տարեկան էր, բնիկ Սերպիացի։ Եղած էր կայսերական անձնապահ գունդի պաշտօնեայ, միջակ կարողութեամբ մէկը, որ աւելի իր հօր, Կոմս Վառոնիոսի, վարկին և համբաւին համար յարգուած էր քան իր անձնական արժանիքին(12)։

Տեսքոտ արտաքինով, ընկերական, խընդումերես, հաճոյասէր և կապուտ-աչուի այս բարձրահասակ զինուորականը, այնքան բարձրահասակ, որ ընտրութենէն վերջ, դըժուարութեամբ իրեն հասակին յարմար կայսերական ծիրան պատմուճան կրցած էին գտնել(13), շնորհիւ իր ընկերներէն միայն բարձրաձայն իր անունը տալուն, կը յաջորդէր Յուլիանոսի, և անմիջապէս բանակցութեան կը սկսէր Շապուհի հետ, փրկելու Հռոմէական բանակը կործանումէ։

Պարսիկ թագաւորի տարիներէ ի վեր երազած ժամը հասեր էր։ Այժմ ինքն էր տէր տիրականը կացութեան. և, ըստ այնմ, չափազանց սուղ գին պիտի պահանջէ Յովիանոսէն՝ Հռոմէական բանակին անվնաս՝ Տիգրիսը անցնելով հեռանալուն համար։

Նորընտիր կայսրը աճապարանքի մէջ էր։ Իր բարեկամներն ալ կը ստիպէին որ շտապէր դաշնագրութիւն մը կնքելու Շա-

(12) Ammianus, XXV, 5, 4. Eutropius, X. 17.
(13) Ammianus, XXV, 10, 14.

digitised by A.R.A.R.@

պուհի հետ, եւ երթար Պոլիս, քանզի, կ'ըսէին անոնք երկչոտ կայսեր, եթէ չ'աճապարէ, Պրոկոպիոս զօրավարը, որ իբր թէ Յուլիանոսի կողմէ յաջորդ նշանակուած էր, կրնար ինքզինքը կայսր հռչակել, կրթնած իր հրամանին տակ գտնուող զունդերու հաւատարմութեան(14)։

Չորս օր տեւող բանակցութենէ վերջ դաշինքը կնքուեցաւ՝ երեսուն տարուայ համար։

Շապուհին պիտի յանձնուէր Տիգրիսի արեւելեան կողմը հինգ գաւառներ, Արզանենա, Մոկսենա, Զապդիսենա, Ռէյիմենի եւ Կորտուէնա (Աղձնիք, Մոկք, Տուղէք, Ռէյիմենի, Կորդուք)։ Նոյնպէս Սինկարա, եւ յոյժ կարեւոր ամրութիւն մը, Մօրօրում Դղեակ կոչուած։

Աւելին՝ Մծբին քաղաքը, Շապուհի տարիներու մղձաւանջը, այժմ ըստ դաշնագրի պայմանին պիտի տրուէր ահարկու թագաւորին(15)։

Մինչ, դաշնագրի համեմատ, Շապուհին տրուելիք հողամասերուն ամէնը իրենց բընակչութիւնով պիտի յանձնուէին, սակայն, Պարսիկ թագաւորը պայման կը դնէր որ Մծբին առանց իր քաղաքացիներուն պիտի յանձնուէր(16)։

Դաշնագրի ուրիշ մէկ պայմանն ալ, Հայաստանի համար խիստ չարաբաստիկ, որ Ամմիանոս «կործանարար եւ ամբարիշտ» կը կոչէ, յետ այնու, եթէ Արշակ թագաւոր, «մեր յարատեւ եւ հաւատարիմ բարեկամը», օգնութիւն խնդրէ Հռոմայեցիներէն Պարսիկներու դէմ, պիտի չստանայ եւ ձգուի իր բախտին։ Պատմիչը կ'ըսէ երկու պատճառով այս կ'ըլլար. Նախ՝ պատժելու Արշակը, որ Յուլիանոս կայսեր հրամանով Ատրպատականի Զիլիոկոմում գաւառը աւերեր էր, իսկ երկրորդ, ապագային, Շապուհ պատեհութիւն ունենայ անարգել յարձակումներ գործելու Հայաստանի վրայ(17)։

Երկու ժամանակակից պատմիչներ, Ամմիանոս եւ Եւտրոպիոս, որոնք այդ ատեն Հռոմէական բանակի մէջ կը ծառայէին, կ'ամաչեն այս նուաստացուցիչ եւ անպատուաբեր դաշինքը։ Եւ դար մը վերջ Զօսիմոս ալ կը միանայ իրենց։

Հռոմէական հողամասերու թշնամիին յանձնուիլը անլուր եւ աննախընթաց աղէտ մը կը նկատեն անոնք։ Ասանկ բան, կը գրէ Եւտրոպիոս, անցեալին մէջ, Հռոմէական կայսրութեան սկիզբէն ի վեր, 1118 տարի, չէր պատահած։ Թէեւ լեգէոնները երբեմն պարտութիւն կրած էին հոս հոն, եւ ստիպուած լուծի տակէն անցնիլ, բայց երբեք Հռոմէական հողամաս ոեւէ թշնամիի չէր ձգուած։ Այս դաշինքի պայմանները այնքան ալ վարկաբեկիչ պիտի չըլլար, եթէ կայսրը որոշած ըլլար, որ նեղ կացութենէն ազատուելուն պէս, պիտի մերժէ նոյն անարգ պայմանները, ինչպէս Հռոմայեցիներ ըրած էին անցեալ պատերազմներուն մէջ, եւ այդպիսով խաղաղութեան դաշինքը մերժած վաւերացնել(18)։

«Ո՜ պահապան Տիրուհիդ Հռոմէական աշխարհի, արդարօրէն կը քննադատեմ քեզ, որ, երբ փոթորիկներ հարուածեցին մեր երկիրը, դուն յափշտակեցիր ղեկը փորձառու ղեկավարի (Յուլիանոսի) ձեռքէն, եւ յանձնեցիր զայն անփորձ երիտասարդի մը, որ իր անցեալ կեանքի մէջ ոչ մէկ փայլուն գործ կատարած ըլլալուն համար, հիմա չկրնար պախարակուիլ կամ գովեստ ստանալ»(19)։

Մծբինի եւ անոր բնակիչներուն ողբերգութիւնը ցնցեց Միջագետքի եւ փոքր Ասիոյ ժողովուրդները։ Քանզի ամէնքը համոզում գոյացուցած էին թէ, օշտանց ամբողջ Արեւելքը Պարսիկներու գերիշխանութեան տակ կ'իյնար, եթէ այս քաղաքը իր նպաստաւոր դիրքով եւ անառիկ ամրութիւններով դիմադրած չըլլար անոնց»(20)։

Երբ լուրը Մծբին հասաւ, վայնասուն փրթաւ։ Ո՛չ թէ խուճապահար ժողովուրդի մը գլխիկորոյս իրարանցումը, այլ կատարուած անպատմելի անարդարութեան դէմ բողոքի խորունկ զայրոյթը։

Յովիանոս կայսր Մծբին եկաւ։ Բայց քաղաք չմտաւ, իբր թէ իր կնքած դաշինքի պայմանը յարգած ըլլալու համար, եւ վրանը դրաւ պարիսպէն դուրս։ Մծբինցիներու պատուիրակութիւն մը եկաւ աղաչելու որ իրենց քաղաքը չյանձնէ թշնամիին։

(14) Ammianus, XXV, 7, 10.
(15) Ammianus, XXV, 7, 9.
(16) Zosimus, 203.
(17) Ammianus, XXV, 7, 12. Փաւստոս, Դ. 21։ Փաւստոս դաշինքի Հայաստանի վերաբերեալ մասը կը ներկայացնէ այսպէս, կայսրն է որ Շապուհին կ'ըսէ. «Հայաստանի ներքին նահանգներէն ալ ձեռք կը քաշեմ. եթէ կարող ես՝ անոնց յաղթէ եւ քու իշխանութեան տակ նուաճէ, ես անոնց օգնութեան չեմ գար»։

(18) Eutropius, X, 27.
(19) Ammianus, XXV, 9, 7.
(20) Ammianus, XXV, 8, 14.

digitised by A.R.A.R.@

Ցիչեցուցին իրեն թէ իր կայսերական վարքին ամենամեծ անպատուութիւն պիտի ըլլար, երբ նկատի առնէր որ Կոստանդիոս, որ երեք անգամ պարսիկներու հետ պատերազմեցաւ, և ամէն անգամուն ալ կորսնցուց, դարձեալ Մծբինը պաշտպանեց։ Իսկ հիմա որ Հռոմէական բանակը Տիգրիսը ապահով անցեր էր, այլեւս պէտք մը չկար որ Յովիանոս՝ թշնամիին յանձնէր այս վիթխարի ամրարանը։

Կայսրը մերժեց։

Մծբինցիները, իրենց թանձրացող յուսահատութեան դէմ մաքառելով, Քաղաքային Ծերակուտի նախագահ Սաբինոսի ձեռքով աղերսագիր մը մատուցին Յովիանոսին։ Անոնք առանձինն պիտի շարունակէին պատերազմը Շապուհի դէմ՝ իրենց քաղաքի փրկութեան համար, իրենք Յովիանոսէն ո՛չ դրամ և ոչ ալ օգնական զինուոր կ'ուզէին։ Առանձինն պիտի պաշտպանէին քաղաքը, և երբ ազատէին զայն թշնամիէն, կրկին Հռոմէական հպատակութիւնը պիտի ընդունէին։

Յովիանոս մնաց անդրդուելի։ Մծբին պէտք է պարպուէր, և անոր բնակիչները գաղթէին մօտակայ Ամիտա քաղաքը (21)։

Յոյսերնին խորտակուած, այս քաջ ժողովուրդը պատրաստուեցաւ ձգելու իր հայրենի քաղաքը։ Անոնցմէ շատ շատերը մանուկներ էին այն երեք հերոսական դիմադրութեան, ուր գոռոզ Շապուհը պարտութեան մատներ էին։ Եւ այժմ, աղէտի այս պահուն, այդ յուզիչ յիշատակը թոյն կը թափէր իրենց դառնութեան բաժակին։

Քանինե՜ր անոնցմէ, ողբաձայն ոգեկոչեցին իրենց անվեհեր եպիսկոպոսը, Յակոբ, որ քանի մը տարի առաջ մեռած էր։ Օ՜ հրաշք մը, որ զինք դուրս բերէր իր դամբանէն, և անգամ մըն ալ պարիսպի աշտարակները դիմադրութեան վառարաններ դարձընէր հեթանոս արիւնկզակ բանակին դէմ։

Սրտաճմլիկ պատկեր մըն էր երբ Մծբինցիներ, ինչ որ կրնային տանիլ հետերնին, հրաժեշտ տուին իրենց քաղաքին։

Անոնք միասին Ամիտա տարին իրենց սիրական հովուին, Յակոբ եպիսկոպոսի, նշխարները (22)։

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԷՆ

Շարունակելի (17)

(21) Zosimus, 207 - 8.
(22) Փաւստոս, Գ. 10։

## ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

# ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

ԲԲ.

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ Վարդապետ

(1045 - 1129)

12րդ դարում Հայաստանում ծաւալուած գրական–մշակութային շարժման առաջին և ամենանշանաւոր դրօշակակիրներից մէկն է Յովհաննէս Սարկաւագ Վարդապետը, որ ապրել է և ստեղծագործել 11րդ դարի վերջերին և 12րդի սկզբներին։ Իր դարաշրջանում նա հռչակուել է որպէս մեծ գիտնական, իմաստասէր, պատմագիր, բնագէտ, փիլիսոփայ, բանաստեղծ, տոմարագէտ և, որ կարեւորն է, յայտնի է դարձել նաև իբրև երաժշտագէտ(*)։

Այս տաղանդաւոր մատենագրի կեանքի պատմութեան որոշ էջերը յայտնի չեն։ Միայն 13րդ դարի համբաւաւոր գիտնական և պատմագիր Վարդան Արևելցու երկում կարդում ենք հետևեալ կենսագրական սեղմ տողերը. «Էին և վարդապետք յայնմ ժամանակի՝ Յովհաննէս, որ և սարկաւագ՝ ի գաւառէն Փառիսոսայ ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլին մինչև ցարդ ի բանս իւր»։ Այս տողերը վկայում են, որ Յովհաննէս սարկաւագը ծնուել է «ի քահանայական ազգէ» Փառիսոս գաւառում։

Փառիսոսը, Արցախի գաւառը, բանասէր Մանուկ Աբեղեանի բացատրութեամբ, մի ժամանակ հանդիսանում է հայկական փոքրիկ քաղաքական մի կենտրոն և ունենում իր առանձին թագաւորները։ Դա այն շրջանն է, երբ զարգանում են հայ մատե-

(*) Յովհաննէս Սարկաւագի ուսումնասիրութեամբ զբաղուել են՝ Հ. Ղեւոնդ Ալիշան («Բազմավէպ» 1880 թ.), Մանուկ Աբեղեանը, Երուանդ Մինասեանը («Արարատ» 1901 թ.), Հ. Համազասպ Ոսկեանը, Պրոֆ. Աշոտ Աբրահամեանը։

digitised by A.R.A.R.@

նագրութիւնն ու եկեղեցական մշակոյթը, որոնք մանուկ Յովհաննէսի կրթութեան և նրա հայեացքների վրայ զօրեղ ազդեցութիւն են գործում։

Հայ բանասիրական գրականութեան մէջ թանկագին մի աղբիւր է նաև Յովհաննէս Սարկաւագ վարդապետի ինքնակենսագրութիւնը, որից պարզւում է, որ Յովհաննէս վարդապետը ո՛չ թէ Հաղբատցի է, այլ բնիկ Անեցի է։ Նոյն երևոյթն է ընդգծել Պրոֆ. Աշոտ Աբրահամեանը։ Ահա նրա տողերը. «Կարծուել էր, թէ Յովհաննէս՝ Հաղբատցի է, մինչդեռ յայտնի եղաւ, որ բնիկ Անեցի է, քահանայի որդի, իսկ մայրը նոյնպէս քահանայի աղջիկ։ Անիի մէջ հիմնած է մեծագոյն դպրոցները ... Անին ունեցել է ծաղկած մատենագրութիւն, որի հիմնադիրը հանդիսացել է Յովհաննէս Սարկաւագը»։

Մանկութեան շրջանում Անիի մտաւոր և գիտական շարժումը նրա հոգու վրայ խոր տպաւորութիւն է թողնում։ Սակայն, նրա ուսման համար սկսւում է մի նոր շրջան պատմական մի վանքում, ուր նա գիտութեան մէջ էլ աւելի խորանում է և կատարելագործւում։ Դա նշանաւոր Հաղբատն է։

12րդ դարում բուն Հայաստանում հայ մշակոյթի պայծառ կենտրոններ հանդիսանում են երկու հռչակաւոր վանքեր՝ Հաղբատն ու Սանահինը, որոնք կառուցւում են Բագրատունի աղքատասէր Աշոտ Ողորմած արքայի ժամանակ։ Այդ հանգամանքն է հաստատում մօտ 887 թուին գրուած (1622 թուին ընդօրինակուած) և այժմ Երուսաղէմի վանքում գուրգուրանքով պահուած թիւ 1455 ձեռագրի յիշատակարանը, ուր արձանագրուած են հետևեալ տողերը. «... Թագաւորէ Աշոտ ամս ԾԲ (52)։ Սա անցոյց զամենեքումք խաղաղ և այլն՝ ամենայն՝ զկաղս, զկոյրս, զգոլխս առ ինքն հաւաքէր և ճաշէր ընդ նոսա ի միում անաւթի։ Ի սորա աւուրս շինեցաւ Հաղբատ, և ժամ անցեալ՝ Սանահինն շինեցին»։

Այդ պատմական վանքերը շուտով դառնում են ո՛չ միայն ուսման, գիտութեան և գրականութեան առաջնակարգ օջախներ, այլև այնտեղ առանձին փայլ են ստանում գրչական ու մանրանկարչական արուեստները։ Ժամանակի վաստակաւոր գրիչներն արտագրում են նորանոր ձեռագրեր և հարստացնում են հայ մատենագրութեան և գրչական արուեստի գանձարանը։ Այդ թանկագին ձեռագրերից նշանաւոր է 1211 թուին, Հաղբատում, [illegible] րաձև, միջին երկաթագրով, Յակոբ [illegible] ձեռքով գրուած հաստ մագաղաթեայ ([illegible] կաշի) Աւետարանը, որի էջերը նուրբ վրձինով նկարազարդել է 13րդ դարի վարպետ նկարիչ Մարգարէն։ Գրչագրի նկարչական արժէքը Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանը գնահատել է այսպէս. «Այս ձեռագիրն ունի մանրանկարչական բարձր արուեստ և մեծարժէք է Հաղբատի դպրոցի գրչութեան ուսումնասիրութեան համար»։

Հաղբատի և Սանահնի վանքերում մանրանկարչական ու գրչական արուեստների հետ, ուշագրաւ նուաճումներ են ունում նաև հայ գրականութիւնն ու գիտութիւնը։ Թերևս այդ երևոյթներով էլ պէտք է բացատրել, որ այդ պատմական մենաստաններն այսօր հայ մշակոյթի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում։

Հնադարեան այդ վանքերի դերը Մանուկ Աբեղեանն իր «Հայոց Հին Գրականութեան Պատմութիւն» գրքում ընդգծել է այսպիսի բնորոշ տողերով. «Սանահնի ու Հաղբատի վանքերը, որոնք հիմնուած էին 10րդ դարում, վայելելով հայոց Բագրատունի թագաւորների, հետագայում նաև վրացի թագաւորների առանձին խնամքը, նուէրներով հարստացրել ու դարձրել էին ոչ միայն բազմաթիւ կրօնաւորների եղբայրանոցներ, այլ միաժամանակ նաև լուսաւորութեան կենտրոններ իրենց անուանի գրագէտ վարդապետներով։ Սկզբում Սանահնի վանքն է հռչակւում իր դպրոցով, գիտուն վարդապետներով, որոնցից Անանիա Սանահնեցին նշանաւոր է հանդիսացել իր գրական երկերով։ Սանահնից յետոյ սկսում է բարձրանալ Հաղբատի վանքը» (*)։

Ահա իր ժամանակի հռչակաւոր Հաղբատի վանքում Յովհաննէս վանականն ուսանում է, զարգանում և կատարելագործ-

(*) Հաղբատի դպրոցի մի այլ պայծառ, լուսաւոր և նշանաւոր դէմքն է Վարդան Վարդապետը (1195 թ.), որ հայ և յոյն եկեղեցիների միութեան խնդրում մասնակցութիւն է ունենում։ Ունի մեկնութիւններ։ Իբրև գիտուն և տիպար անձ, ժամանակակիցներից մեծապէս գնահատւում է։

digitised by A.R.A.R.@

ւում։ Դա այն դարաշրջանն էր, երբ Տուղրիլ և Ալփասլան վանդալները ծանր աւերներ էին գործում Հայաստանում։

Հաղբատի վանքում Յովհաննէս սարկաւագը նստում է «առ ոտս վարդապետաց» և հմտանում է իր ժամանակի եկեղեցական ուսման և գիտութիւնների մէջ։ Սովորում է նաև ճարտասանութեան և քերթողութեան արուեստները, միաժամանակ զարգացնում իր մէջ թաքնուած գրական ու գեղարուեստական յատկանիշները. «Ցաւաջագոյն տուեալ ի վարժս՝ երաժշտական հանգեր ուսմանց», կարդում ենք 1129 թւին գրուած «Վարք Հարանց» ձեռագրի յիշատակարանում։ Շուտով սարկաւագութեան աստիճան է ստանում և երկար ժամանակ մնում է իբրև սարկաւագ. այդ պատճառով էլ ստանում է սարկաւագ անունը, իսկ յետոյ նշանակւում է վանքի վանահայր։

Նշանակալից է մի երևոյթ։ Պատմական մենաստանում սարկաւագն ամբողջ էութեամբ նուիրւում է գրական-գիտական անխոնջ գործունէութեան և իր մատենագրական վաստակներով ո՛չ միայն նշանաւոր է հանդիսանում ու հռչակ վայելում, այլև բարձրացնում է Հաղբատի վանքի անունն ու համբաւը։

Նշենք և այն, որ նա իր լուրջ պատրաստութեամբ, խոր գիտութեամբ և մաքուր ու պայծառ կենցաղով իր ապրած շրջանում ժողովրդից սիրւում է և մեծ յարգանք վայելում։ Իր մտաւոր փայլուն ընդունակութեամբ նա սիրւում է նաև վրացի ժողովրդից։

13րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ նրան իր գիտութեան համար բարձր է գնահատում և շատ սիրում է նաև վրացի Դաւիթ թագաւորը (1087–1125 թ.) և նրա օրհնութիւնը խնդրում։ Նոյնպէս հայ պատմագիրները նրա պատրաստութիւնը բարձր են գնահատում և հիացմունքով են արտայայտւում նրա մասին։ Այդ տեսակէտից ուշագրաւ են Կիրակոս Գանձակեցու հետևեալ տողերը. «Շատերից գիտութեամբ մեծիմաստ և ամէն բանի մէջ հանճարեղ էր մաքով հարուստ Յովհաննէսը՝ Հաղբատում սարկաւագ կոչուած։ Նա շատ բան ուսումնասիրեց, Գրքերում բարի յիշատակ թողեց»։

Անիում մեծ հռչակ է վայելում նաև նրա հիմնած դպրոցը, ուր դասաւանդւում է մի շարք գիտութիւններ — փիլիսոփայութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, մաթեմատիկա, տոմար և աստուածաբանութիւն։ Թերևս ընդգծուած երևոյթներով էլ պիտի բացատրել, որ ժամանակի գրիչները նրան կոչում են «սքանչելանշան յերիցս երանեալ վարդապետ», «սուրբ վարդապետ», «երիցս երջանիկ վարդապետ», «իմաստասէր», «մեծի պուէտիկոս սարկաւագ»։

Իր վանական գործունէութեան շրջանում նա հայ մատենագրութեան նուիրում է կրօնական, գիտական, գրական, տոմարական, աստղաբաշխական, պատմական, խրատական, բնագիտական, փիլիսոփայական և բարոյագիտական բովանդակութեամբ բազմաթիւ երկեր, որոնք, մեծ մասամբ, անտիպ են, իսկ շատերն էլ կորել են։ Այստեղ գծենք մի պատկեր — «Աղօթագիրք և Տաղաչափականք», «Յաղագս Քահանայութեան», «Ընդդէմ Երկրաբնակաց»(*), «Պատմութիւն Տիեզերական», «Բան Արտօսր Առ Ուսումնասէր» և ուրիշներ, որոնք պարզում են 12րդ դարի լուսաւոր և գիտնական վանականի գրական դէմքը, միաժամանակ ցայտուն գաղափար են տալիս նրա հայեացքների և շօշափած նիւթերի մասին։

Սակայն, Սարկաւագի գրականութեան պատմութեան պատկերը գծելիս նշենք առանձնապէս մաթեմատիկայի և աստղագիտութեան նուիրած գիտական գործերը, որոնցից յատուկ ուշադրութեան արժանի է «Վասն Շարժման և Սասանութեան Երկրի» երկը, որ առանձին ուսումնասիրութեան նիւթ է դարձրել տաղանդաւոր բանասէր Լ. Մելիքսէթ-Բէկը («Տեղեկագիր» թիւ 1, Երևան, 1943 թ.)։

Կրօնական բնոյթ ունի «Յաղագս Քահանայութեան» երկը, ուր բացատրւում է քահանայութեան կոչումն ու էութիւնը և պարզաբանւում քահանայի ժողովրդի հանդէպ ունեցած պարտականութիւնները։

(*) Այս ձեռագրի յիշատակարանում կարդում ենք. «Այս բանք քերդողականք ասացեալ մեծի պուէտիկոսին սարկաւագին, որ ի տիեզերահռչաչակ ուխտին Հաղբատ, զոր ես նուաստս ան ի մանկունս եկեղեցւոյ»։

digitised by A.R.A.R.@

Ընդգծենք նաև փիլիսոփայական աշխատանքները, որոնցով յայտնի է նաև իբր մեծ իմաստասէր։ «Փիլիսոփաներ ուզում են — գրում է պրոֆ. Աշոտ Աբրահամեանը, — իբր իմաստասէր ճանաչել Նրան և կոչում են «Յովհաննէս իմաստասէր»։ Բացառիկ դէմք է իբր փիլիսոփայ։ Խմբագրել է յունական և ուրիշ փիլիսոփայական գործեր՝ Անիի համալսարանում։

Ուրոյն տեղ է գրաւում նաև «Աղօթագիրք և Տաղաչափականք», ուր խոր զգացմունքով պատկերում է Աստուծոյ հիասքանչ վեհութիւնն ու մեծութիւնը։ Այս ձեռագրի արժէքը Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեանը գնահատել է այսպէս. «Կարևոր ձեռագիր է այս՝ Յովհաննէս սարկաւագ վարդապետի հոգևոր բանաստեղծութեան ուսումնասիրութեան համար»։

Վաստակաւոր վանական մշակին պարտական ենք նաև հայկական տոմարի նորոգումը, կարգաւորութիւնը, որ նրա բանասիրական նշանաւոր աշխատանքներից մէկն է, որի շնորհիւ էլ մեզանում 1084 թուականից հաստատուեց անշարժ տոմարը՝ նահանջ տարիով։ Այս մասին ահա Կիրակոս Գանձակեցու վկայութիւնը. «...Սա շատերի փափաքած հաստատուն և անշարժ հայկական տոմարը սահմանեց շարժականի և անհաստատունի փոխարէն, որովհետև շատ իմաստուն մարդ էր»։

Անժխտելի իրողութիւն է, որ հայկական տոմարը մինչև 1084 թուականը շարժական էր։ «Մեր տասներկու ամիսները, — գրում է պրոֆ. Աշոտ Աբրահամեանը, — բաղկացած են 30 օրերից, որ անում է 360 օր և վրան աւելացրել են հինգ օր։ Բայց նահանջի մասին բան չկայ, որովհետև 365 օր և վեց ժամը չորս տարին մի անգամ նահանջ էր լինում և որոշ թերութիւն էր սա։ Միւս հարևան երկրների տոմարներին համապատասխան էր մերը։ Այդ վեց ժամ և յաւելումը այնքան շատացել էր, որ հասել էր մի տարուան տարբերութեան, որ դուրս է ձգւում։ Այս անհամապատասխանութիւնը հարթեց Յովհաննէս։ Նա շարժականից անշարժ դարձրեց մեր տոմարը»։

Ունի նաև մի այլ ուշագրաւ երկ — «Ծաղազգս անկիւնաւոր թուոց», որի մասին բնորոշ են պրոֆ. Աբրահամեանի հետևեալ տողերը. «Իր կարևոր գործերից մէկն է «Ծաղազգս անկիւնաւոր թուոց», որ թուաբանական և երկրաչափական մի խառնուրդ աշխատանք է։ Դա շատ հետաքրքրական մի գործ է ... որի մէջ կիրարկուել է բազմապատկութեան մի յատկանշական նոր ձև, որ շատ հետաքրքրական է»։

Յովհաննէս սարկաւագը գրել է մի այլ կարևոր և մեծարժէք երկ։ Դա սելջուկեան թուրքերի պատմութիւնն է, ուր նկարագրել է նաև Տուղրիլի վերջին տարիները, ինչպէս նաև Ալփասլանի ու Մելիքշահի ժամանակ կատարուած մայլ դէպքերը և հայ ժողովրդի թշուառ դրութիւնն ու նրա ծանր ապրումները, որոնց նա ականատես է եղել։ Այդ տեսակէտից էլ Սարկաւագի պատմութիւնը մեծ արժէք է ներկայացնում։ Սակայն, այդ թանկագին ձեռագիրն անհետ կորել է և միայն պատմագիր Սամուէլ Անեցու (Սարկաւագի աշակերտի) շնորհիւ մեզ հասել են որոշ հատուածներ, որոնց մէջ պատկերանում են վաստակաւոր վանականի ժողովրդասէր ոգին և հայրենասէր զգացումները։

Սարկաւագ վարդապետի գրական մի այլ գեղեցիկ յատկանիշը բանաստեղծական հարուստ ձիրքն է։ Նրա յօրինած ոտանաւորներից մեզ հասել է միայն «Բան իմաստութեան ... առ ձագն ... որ կոչի սարեկ» խորագրով քերթուածը, որ առաջին անգամ տպագրուեց 1847 թուին «Բազմավէպ»ում։ Այնտեղ վանական բանաստեղծը ջերմ լիրիզմով երգել է ու ներբողել բնութեան վեհութիւնը և իրական կեանքը, երգել է նաև բնութեան գեղեցիկ զարդը համարուող թռչուններից սարեկին, որի միջոցով արտայայտել է իր գեղարուեստական հայեացքը, թէ բանաստեղծական արուեստի աղբիւրը բնութիւնն է։

Քերթուածն իր կառուցողական արուեստով մի գեղեցիկ տրամախօսութիւն է, ուր հանդէս են գալիս ինքը՝ բանաստեղծը և սարեկ թռչունը։ Ոտանաւորի գրական արժէքը Մանուկ Աբեղեանն ընդգծել է այսպէս. «Այս մեծ (188 երկայն տողերով) քերթուածն իր ձևով ու բովանդակութեամբ մի նշանակալից նորութիւն է մեր հին գրականութեան մէջ։ Եթէ դա պատահմամբ փրկուած չլինէր կորստից, մեր նոր մտաւոր հոսանքի զարգացման տեսութիւնը թերի

digitised by A.R.A.R.@

կը ձեռք։ Եւ ո՞վ գիտէ՝ քանի՛ այդպիսի արժէքաւոր բանաստեղծութիւններ ոչնչացել են ... Նա արուեստը, ուրեմն և բանաստեղծութիւնը, նմանողութիւն է համարում բնութեան, և բնական ամենից բարձրն ու մաքուրը, ուստի և բանաստեղծը պիտի աշխատի նմանել բնութեանը»։

Աբեղեանի պարզած մտքերն ու լաւատեսութիւնը պրոֆ. Մ. Մկրեանն իր «Հայ գրականութեան պատմութիւն» գրքում (1951 թ., Երեւան) կրկնել է այսպիսի երանգաւորումներով «... Պօէմը միջնադարեան հայ գրականութեան նշանաւոր յուշարձաններից մէկն է ... արծարծւում էսթետիկայի բնագաւառին վերաբերող մի հարց. գեղարուեստական ստեղծագործութեան մի նոր տեսութիւն, որը պօէզիայի մէջ վաղ վերածնութեան դարաշրջանի արտայայտութիւններից մէկն է հանդիսանում։ Պօէմում արծարծւում է բնութեան և արուեստների փոխյարաբերութեան հարցը, ըստ որում առաջնութիւնը տրւում է բնութեան, կեանքին։ Բնութիւնը ամենից բարձրըն է ու մաքուրը և ամենքին հասկանալի, ուստի մարդիկ ստեղծագործելիս պէտք է հետեւեն բնութեանը, սովորեն բնութիւնից»։

Շարադրել է 800 տողերից բաղկացած մի այլ բանաստեղծութիւն։

Սակայն, մի հանգամանք էլ աւելի արժէքաւորում է Յովհաննէս Սարկաւագ Վարդապետի գեղարուեստական կերպարը։ Դա նրա երաժշտական ձիրքն է։ Նա յօրինել է ոչ միայն ձայներ, ներբողներ, տաղեր, աղօթքներ, այլև շարականներ։ Նրա արուեստին է պատկանում «Պայծառացան» շարականը, ուր գրուատւում է Ղեւոնդեանց նահատակութիւնը, միաժամանակ պատկերւում քահանայական կոչման վսեմութիւնը։ Շարականին առանձին գրաւչութիւն են տալիս կրօնական զգացումը, հայրենասիրական ոգին և քաղցր եղանակը, որ խոր տպաւորութիւն է թողնում։ Հայ հոգեւոր երաժշտութեան այս գանձի մասին պատմագիր Կիրակոս Գանձակեցին արձանագրել է այսպէս. «Սա գրեաց ձայնս ներբողականս ի մեծագոյն արքայն Տրդատ, ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ, արարչական Ղեւոնդեանցն քաղցր եղանակաւ և յարմար բանիւ, որոյ ըսկիզբն է այս՝ Պայծառացան այսօր եկեղեցեաց և նոցա ձայնս ներբողականս»։ Այս շարականն իր «քաղցր եղանակով» Յովհաննէս Սարկաւագին իրաւունք է տալիս հայ երաժշտութեան պատմութեան մէջ մի ուրոյն էջ գրաւելու։

Իր դարաշրջանում Սարկաւագը փայլում է նաև որպէս լաւագոյն մանկավարժ։ Նա պաշտօնավարում է ո՛չ միայն Հաղբատի վանքում, այլև «քաղաքամայրս Անի», ուր «Շուրջ բոլորեալ զմանկունս զիւրեաւ խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին և զխորին իրսն»։ Նա ամբողջ էութեամբ նուիրւում է իր ժամանակի նոր սերնդի լուսաւորութեան վեհ գործին և կրթում է ու դաստիարակում բազմաթիւ աշակերտներ, որոնք նոյնպէս նուիրւում են հայ մշակոյթին և զարկ տալիս ժամանակի հայ մատենագրութեանց զարգացմանը։ Նրա լաւագոյն աշակերտներից յայտնի է Սամուէլ քհնյ. Անեցին, որ հայ գրականութեան թողել է «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց»(Վաղարշապատ, 1893 թ.) խորագրով կարեւոր ժամանակագրութիւնը, որ գրել է Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսի յանձնարարութեամբ։

12-րդ դարի Հաղբատի վանքի հպարտութիւնը և հայ ժողովրդի պարծանքը կազմող այս տաղանդաւոր վանականն իր աչքերն ընդմիշտ փակում է, պատմագիր Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ, 1129 թուին և թաղւում պատմական մենաստանում, ուր նրա գերեզմանի առջև կանգ առնող ամէն մի հայ ուխտաւոր կարդում է իր տապանաքարի վրայ քանդակուած հետեւեալ բառերը. «Արձանս այս՝ սեփական է սոփեստոսի Սարկաւագին»։

Վաստակաւոր իմաստասէր վանականի հմայիչ անունը համր տապանաքարի վրայ փորագրուած է որպէս սոփեստոս, որ նշանակում է իմաստուն, գիտնական, ճարտասան, «փիլիսոփայ ուսուցիչ»։ Այդ գեղեցիկ յատկանիշներով նա այսօր պատուաւոր տեղ է գրաւում միջնադարի հայ գրականութեան և երաժշտական արուեստի պատմութեան մէջ։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շարունակելի՝ 7)

digitised by A.R.A.R.@

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏ

Այն բոլոր արտացոլումները, եզրակացութիւնները, ընդհանրացումները, դիտողութիւնները և ենթադրութիւնները, որ տրուած են ներկայ աշխատութեան մէջ, հիմնաւորուած են ոչ միայն հայկական զարդարուեստի պերճախօս ու հաւաստի բազմաթիւ փաստերով, այլև հայկական ժողովրդական բանահիւսութեան, դիցաբանութեան, կենսափորձային գիտելիքների, ծէսերի, հին պատկերացումների, հաւատալիքների և շատ ուրիշ բնագաւառների վկայութիւններով։ Ըստ որում, այս վերջիններից մէջ բերուած փաստերը ոչ միայն օգնում են զարդարուեստի մոտիվների բացատրութեան գործին, այլև շատ յաճախ իրենք են ստանում բացատրութիւն։

Ինչպէս սովորեցնում են դասական գործերը, համանման կենսապայմանների շնորհիւ ծնւում են նաև մտածողութեան համանման ձևեր եւ նրանց դրսեւորման համանման եղանակներ։ Ուստի, բնականաբար, ուրիշ ժողովուրդների զարդարուեստների համապատասխան ձևերն էլ պիտի ունենային հիմնականում այնպիսի ծագում ու բովանդակութիւն, ինչպիսին հայկական զարդարուեստի հիմնական մոտիվները։ Ներկայ աշխատութեան մէջ ձգտել ենք, հնարաւորին չափ, միշտ նկատի առնել այս նշանակալից ու խոշոր հանգամանքը։ Հրատարակուած զանազան ալբոմների, ժողովածուների, ուսումնասիրութիւնների մէջ գտնուող ճոխ ու առատ փաստերը համոզում են, որ իրօք, միւս ժողովուրդների զարդարուեստների, տարրերը կազմող զարդամոտիվներն իրենց միջազգային բնոյթով, ամենից առաջ, ծընունդ են այն կենսապայմանների, որոնց մէջ ապրել ու պայքարել են նրանց կերտողները։ Եւ այն բոլոր բացատրութիւնները, որոնք տրուած են հայկական զարդարուեստի հիմնական մոտիվներին, չեն բացառութեամբ, վերաբերում են նաև ուրիշ ժողովուրդների զարդարուեստների համապատասխան մոտիվներին։ Հենց այս աշխատութեան մէջ բերուած են բազմաթիւ փաստեր՝ բաբելական, ասորեստանեան, եգիպտական, խեթական, միտանիական, ուրարտական, չինական, հնդկական, յունական, հռոմէական, սկիւթական, բոսֆորեան, ռուսական, սլաւոնական, միջին-ասիական, կովկասեան և այլ ժողովուրդների զարդարուեստներից, որոնք մի կողմից՝ իրենք են բացատրութիւն ստանում, իսկ միւս կողմից՝ օգնում են հայկական զարդարուեստի հիմնական մոտիվների հետ կապուած և մեզ այստեղ հետաքրքրող հարցերի լուծմանը։ Աշխատել ենք, հնարաւորութեան սահմաններում, համապատասխան վկայակոչումներ կատարել նաև ուրիշ ժողովուրդների բանահիւսական, դիցաբանական, ծիսական և նման ուրիշ աղբիւրներից, որոնք բոլոր դէպքերում էլ միշտ ներդաշն են հնչում բարձրացուող և լուծուող հարցերի հետ ու մեծապէս նպաստում մեր առջև դրուած խնդիրների լուծմանը։

Պիտի նկատել, սակայն, որ ներկայ աշխատութեան համար բացառիկ նշանակութիւն են ունեցել յատկապէս հայկական միջնադարեան մանրանկարչութեան գանձերը, որոնք կազմում են աշխատութեան հիմքը և հանդիսացել են հեղինակի ելակէտն ու ուղեցոյցը։ Ուստի նպատակայարմար ենք համարել վկայակոչումների հիմնական մասը վերցնել այդ սկզբնաղբիւրներից, որոնցմով այնքան հարուստ են մեր միջնադարեան ձեռագրերը։ Թուղթըն ու մագաղաթը, վրձինն ու գրիչը, թանաքն ու ներկանիւթերը անհամեմատ շատ աւելի լայն հնարաւորութիւններ են ընձեռել մանրանկարիչներին՝ հարազատ մնալու ընդօրինակուող զարդամոտիվներին, քան, ասենք, թելն ու գազգահը՝ անկո-

digitised by A.R.A.R.@

ծագործին, կամ մուրճն ու բրիչը՝ քանդակագործին։ Մանրանկարչութեան նշուած առաւելութիւնը, յատկապէս ներկայ դէպքում, երբ վճռական նշանակութիւն ունի զարդամոտիվների նախնական, աւելի քան բնական տեսք ունեցող ձևերի յայտաբերումը, բացառիկ կարևորութիւն է ըստանում։ Բացի դրանից, ձեռագրերի աշխարհն ի վիճակի է եղել ի մի հաւաքել և մեզ հասցնել անհամեմատ մեծ քանակ կազմող զարդեր, քան զարդարուեստի որևէ այլ բնագաւառ։ Իսկ որքան մեծ է զարդերի քանակը, այնքան աւելի շատ կարևոր փաստեր կան այնտեղ։ Միւս կողմից, մանրանկարչութեան բնագաւառում, հէնց միենոյն մոտիվը հանդիպում է իր բազմապիսի ու բազմաքանակ վարիանտներով, սկսած նրանց պարզագոյն, բնական, նախօրինակին հարազատ ձևերից և վերջացրած ամենախրթին յարաբերութիւններով։ Այս հանգամանքը նպաստում է, որ ուշադիր համեմատութիւնների ու համադրութիւնների միջոցով մեզ հետաքրքրող հարցերն աւելի հեշտ լուծուեն։ Այդպիսի օրինակներից են վարսանդա-պտղային և հաւկիթա-սերմային, ինչպէս նաև չորս էլէմենտներին նուիրուած զարդամոտիվները, որոնց մասին խօսուած է ներկայ աշխատութեան առաջին երեք գլուխներում։ Մանրանկարչութեան հերթական առաւելութիւններից մէկն էլ այն է, որ ժամանակին այն իր մէջ է ընդգրկել զարդարուեստի միւս բոլոր բնագաւառների լաւագոյն մոտիվները, որոնք այսօր հեշտացնում են ինչպէս այդ բնագաւառների զարդամոտիվների, այնպէս էլ նրանց փոխադարձ առնչութիւնների ուսումնասիրութեան գործը։ Իրենց հնութեամբ եւս մանրանկարներն աւելի նախընտրելի են՝ միւս բնագաւառների համեմատութեամբ։ Ճիշդ է, հայկական մանրանկարչութիւնն աւելի երիտասարդ արուեստ է քան, ասենք, քանդակագործութիւնը, անկվածագործութիւնը, ևայլն, բայց միւս բնագաւառներից պահպանուած հին վկայութիւնները խիստ սակաւաթիւ են և առհասարակ իրենց ամբողջութեան մէջ չեն կարող հաւասարուել մանրանկարչութեան։ Էլ աւելի եղակի կարևորութիւն է ներկայացնում մանրանկարչութիւնը՝ իր գունագեղութեամբ, որովհետև գոյների միջոցով առաւել դիւրին է դառնում որոշել իր նախնական տեսքից հեռացած զարդի ինչ լինելը։ Այս առումով մանրանկարչութեանը մասամբ կարող էին հաւասարուել անկվածագործութիւնն ու որմնանկարչութիւնը, եթէ նրանցից պահպանուած հին նմուշներն այնքան աղքատիկ ու խունացած չլինէին։ Եւ վերջապէս, մանրանկարչական հին ժառանգութեան հետ ծանօթանալը, պահանջուող փաստերն անմիջապէս ձեռքի տակ ունենալը, նրանց հրատարակելն ու օգտագործելը աւելի հեշտ է քան միւս բնագաւառներինը։ Ահա այս և այլ պատճառներով է որ մենք մեր աշխատութեան մէջ



ընդգրկուած փաստերի հիմնական մասը վերցրել ենք հայկական միջնադարեան մանրանկարչութիւնից։ Այսուհանդերձ, միաժամանակ, մեծ ուշադրութիւն ենք նուիրել նաև միւս բնագաւառների փաստերին, որոնք, յաճախ, աւելի հին ու հազուագիւտ նմուշներ լինելով, եղակի և երբեմն էլ խիստ վճռական նշանակութիւն են ունեցել ներկայ աշխատութեան համար։

Ինչպէս պարզւում է, հայկական և ուրիշ ժողովուրդների հիմնական զարդաուրիշ ժողովուրդների հիմնական զարդամոտիվները հէնց այդ ժողովուրդների կողմից են ստեղծուել անխախտ կերպով, որպէս միջ պատմականօրէն անհրաժեշտ ու անխուսա-

փելի հետևանք՝ նրանց կեանքի, պայքարի և մտածողութեան։ Ծնուելով դեռևս նախնադարեան համայնական, անդասակարգ հասարակութեան ծոցում, այդ մոտիվների հիմնական մասն այնուհետև ևս շարունակում է ապրել ու յարատևել, աստիճանաբար զարգանալով ու հարստացնելով զարդարուեստի գանձարանը։ Նրանք միաժամանակ ենթարկուում են նաև էական փոփոխութիւնների։ Այդ փոփոխութիւնները պայմանաւորուած են եղել մի կողմից՝ հասարակական կեանքում և նրա շարժիչ ուժերի մէջ տեղի ունեցող համապատասխան փոփոխութիւններով ու իրադարձութիւններով, իսկ միւս կողմից՝ բնական, տեխնիկական պատճառներով։ Իրենց ծագման նախնական շրջանում նրանք իմաստաւորել են յատկապէս նախնադարեան երկրագործների և անասնապահների աշխատանքային կենսափորձում ձեռք բերած գիտելիքները, աշխարհայեացքը, ինչպէս նաև նրանց արտադրա – ընտանեկան հակացողութիւնների հետ կապուած կարևորագոյն ուժերի ու երևոյթների էութիւնը։ Նրանց այդ հասկանալի դերն ու նշանակութիւնը հետագայում, հիմնականում, խախտուում է, երբ երևան են գալիս դասակարգային յարաբերութիւնները։ Ստեղծուած նոր ուժերը կատաղի պայքար մղելով հին հասարակարգի դէմ, դաժան պայքար են ծաւալում նաև համապատասխան գաղափարաբանութիւնների ոչնչացման ուղղութեամբ։ Այդ պայքարի շնորհիւ հին գաղափարաձեւերը կամ զարդամոտիվները, հիմնականում, ստանում են նոր իմաստ կամ առհասարակ իմաստազրկւում են։ Հետագայում, այդ հին ձևերը նոր վերաբերմունքի են հանդիպում նաև յաջորդ Փորմացիաների ժամանակ։ Դրանց են գումարուում նաև բնական, տեխնիկական հանգամանքները, որոնց շնորհիւ, ի վերջոյ, հին ու երբեմն հասկանալի ձևերը, իրենց ճնշող մեծամասնութեամբ, դառնում են չըմբռնուած զարդամոտիվներ, իսկ փոքր մասով վեր են ածւում զանազան սիմվոլների։ Ընդորում, այս վերջիններն էլ որոշ ժամանակից յետոյ կորցնում են իրենց դերը, որից ետ մըղւում դէպի ընդհանուր չըմբռնուած ձևերը, իրենց տեղը զիջելով ուրիշ մոտիվների։ Դրանց թիւը զարդարուեստի հարուստ ժանանդութեան մէջ ի վերջոյ այնքան է փոքրանում, որ այլևս նրանք առանձին քանակ չեն կազմում։ Կորցնելով իրենց նախկին իմաստը, հին ձևերը, հիմնականում, ապրում, զարգանում են որպէս արդէն ճաշակի ու գեղեցկութեան հետ կապուած զարդաձևեր, և որպէս այդպիսիք՝ նրանք արժանանում են համընդհանուր ընդունելութեան։ Անգամ միջնադարեան սպանիչ քննադատութիւնն ու անողոք վերաբերմունքը, որոշ ժամանակից յետոյ (սկսած Ժ. դարից), կեանքում մղուող պայքարի շնորհիւ, տախպուած, տեղի է տալիս, և վանքերն ու աւետարանները, հոգևորական տարազն ու եկեղեցական սպասները, քրիստոնէական սիմվոլներից ու նկարներից աւելի շատ մեծ տեղ են յատկացնում հին զարդամոտիվներին։ Մեր միջնադարեան մանրանկարիչները, քանդակագործները և զարդարուեստի այլ մշակները ոչ միայն ընդօրինակում և վերարտադրում են հին ձևերը, այլև մեծ վարպետութեամբ մշակում ու զարգացնում են նրանց՝ հասցնելով աւելի բարձր աստիճանի և ստեղծելով աւելի հարուստ կոմբինացիաներ։ Հետագայում այդ չըմբռնուած ձևերի մասսայական գործածութիւնն առաւել մեծ չափերի է հասնում, որովհետև, ինչպէս Մարքսն է ասում, «Չըմբռնուած ձևը՝ ամենաընդհանուրն է և հասարակական զարգացման որոշ աստիճանի վրայ՝ կարող է գործածուել ամէնքի կողմից ...»։

Այսպիսով, տեսնում ենք, որ զարդարուեստի մոտիվները ըստ ժամանակագրական խորութեան նոյնպէս միատարր ու նոյնական չեն։ Նրանք տարբեր դարերում, տարբեր դասակարգերի կողմից տարբեր իմաստ ու նշանակութիւն են ունեցել և օգտագործուել են տարբեր նպատակներով։

Այն, ինչ որ այստեղ տրուեց ամփոփ կերպով, ներկայ աշխատութեան մէջ աւելի ցայտուն է դրսևորուած։ Ճիշդ է, շատ յաճախ կարիք չի եղել ամէն մոտիվի ու մոտիվախմբի կապակցութեամբ նշել այդ հանգամանքը, բայց միշտ, անհրաժեշտութեան դէպքում, այդ մասին խօսուած է, ուստի և ամբողջ աշխատութեան միջով՝ որպէս կարմիր թել, անցնում է նաև այդ հարցը։

Սոյն աշխատութեան մէջ բացատրուած

digitised by A.R.A.R.@

մոտիվների և նրանց հետ կապուած հարցերի շնորհիւ մեծապէս դիւրանում է նաև զարդարուեստի ներքին օրինաչափութիւնների յայտաբերման և նրանց էութեան ըմբռնելու գործը։ Այդպիսիներից են, օրինակ, ընդհանրացումների, ոճաւորման, զարդամոտիվների սիմետրիկ շարադրման, ձևի ու բովանդակութեան հարցերը ևլն., որոնց մասին նոյնպէս ընթերցողը ներկայ աշխատութեան մէջ կը հանդիպի նորանոր տեղեկութիւնների։

Ինչպէս նշուեց վերևում, այս գործում բացատրուող զարդամոտիվների և յարակից հարցերի շնորհիւ, հնարաւորութիւն է ստեղծուում հասկանալ նաև հայկական մշակոյթի միւս բնագաւառներից շատերի առջև կանգնած բազմաթիւ կարևոր հարցերի էութիւնը։ Այսպէս, օրինակ, զարդարուեստի մոտիվների մեծ մասը, որպէս ցուցուկ, պահպանել են նախնադարեան հաւատալիքների հետ կապուող հասկացողութիւնների հարուստ արձագանգներ, որոնք առատ նիւթ կարող են մատակարարել մեր նախնական շրջանի կեանքի ու մտածողութեան ուսումնասիրութեան գործին։ Այդ նիւթերն անհամեմատ աւելի անաղարտ են, քան բանաւոր կամ գրաւոր խօսքի միջոցով հասած վկայութիւնները և աւելի հարուստ են, քան միւս ճանապարհներով մեզ հասած փաստերը։ Այդ մոտիվների բացատրութեան միջոցով է որ հասկանալի են դառնում ճարտարապետական այնպիսի կոթողների ծագման հետ կապուած գլխաւոր հարցերը, ինչպիսիք են մատուռները, դմբէթները ևայլն։ Մեծ հնարաւորութիւններ են ստեղծուում առհասարակ նախնական մտածողութեան, աշխարհայեացքի, կենսափորձային գիտելիքների, բնափիլիսոփայութեան և այլ նմանների աւելի հանգամանալից ուսումնասիրութեան համար։ Յատուկ նշանակութիւն ունեն տարբեր գլուխներում ցրիւ եկած այն փաստերն ու նրանց բացատրութիւնները, որոնք վերաբերում են առհասարակ կրօնին և մասնաւորապէս քրիստոնէութեան։ Այս և բազմաթիւ այլ հարցեր, որոնց մասին խօսուած է ներկայ աշխատութեան մէջ, ցոյց են տալիս, թէ որքան վիթխարի նշանակութիւն ունի տուեալ ժողովրդի զարդարուեստի ուսումնասիրութիւնը՝ այդ ժողովրդի նիւթական ու հոգևոր մշակոյթի հետ կապուած հարցերը և նրանց ներքին օրինաչափութիւնները աւելի լրիւ ըմբռնելու տեսակէտից։

Անդրադառնալով ազդեցութիւնների և փոխ–ազդեցութիւնների հարցին, պէտք ասել՝ ինչպէս չի կարելի տուեալ ժողովրդի մշակոյթի ու զարդարուեստի ծագումը կապել ուրիշ ժողովուրդների հետ, այնպէս էլ չի կարելի ժխտել այն բարերար կամ պարտադիր փոխ–ազդեցութիւնները, որ առկա են տուեալ ժողովրդի մշակոյթում և արդիւնք են ժողովուրդների բազմադարեայ շփումների, քաղաքական յարաբերութիւնների, ինչպէս նաև նուաճումների ու զաւթումների։ Այս հարցում յաճախ ցուցաբերուած է ոչ ճիշդ մօտեցում և այնպիսի փորձառութիւն, որը գիտականօրէն չի կարող իրեն արդարացնել։ Այլ բան է հնարաւորութիւնը, այլ բան՝ իրականութիւնը։ Այժմ, երբ պարզուած է զարդարուեստի հիմնական մոտիվների էութիւնը, և այն, որ իւրաքանչիւր ժողովուրդ պատմական անհրաժեշտութեամբ պիտի ստեղծէր իր զարդարուեստը՝ նշուած մոտիվներով և իրեն յատուկ ոճով ու առանձնայատկութիւններով, այլևս անհեթեթութիւն է դառնում նրա մշակոյթը համարել փոխառական, և խիստ դժուար՝ ցոյց տալ այն ճշմարիտ ազդեցութիւնները, որ կապուած են նրա հետ։ Այս վերջին, կարևոր հարցը պահանջում է բազմակողմանի ու հանգամանալից ուսումնասիրութեան ենթարկել տուեալ ժողովրդի զարդարուեստը, ծանօթ լինել նրա բոլոր բնագաւառներին, այդ բնագաւառների պատմութեանն ու առանձնայատկութիւններին ամբողջապէս, ապա նոյնքան մանրակրկիտ կերպով ծանօթանալ միւս ժողովուրդների զարդարուեստներին, և պատմական համապատասխան տուեալների հիման վրայ խօսել փոխ–ազդեցութիւնների խնդրի մասին։ Բնականաբար, մենք այդ հարցով այստեղ զբաղուել չէինք կարող։ Միայն, մի քանի դէպքերում, մատնանշել ենք, թէ ինչպէս որոշ մասնագէտներ կոպիտ սխալներ են թոյլ տուել այդ ուղղութեամբ։

Ինչպէս նշուեց, հայկական զարդարուեստին նուիրուած առանձին ուշագրաւ գործեր չեն եղել, որոնց վրայ հարկ լինէր մանրամասնօրէն ծանրանալ։ Ինչ վերաբե-

digitised by A.R.A.R.@

րում է հայկական արուեստի տարբեր բնա- գաւառներին նուիրուած գրականութեանը, արա այն, ինչ առնչուել է զարդարուեստի հետ, արա, հիմնականում, նուիրուած է եղել զարդամոտիվների հրատարակութեանն ու նկարագրութեանը, մի հարց, որը դուրս է մեր ծրագրից։ Եւ եթէ ներկայ աշխա- տութեան մէջ միաժամանակ նաև այդպիսի գործ է կատարւում, արա դա մեզ հետա- քրքրող հարցերի քննութեան անխուսափելի և ցանկալի հետևանքն է։ Ինչ վերաբերում է առհասարակ հայկական և ուրիշ ժողո- վուրդների զարդաձևերի ծագման և բո- վանդակութեան վերաբերեալ եղած զանա- զան ենթադրութիւններին, կարծիքներին ու տեսակէտներին, արա դրանց էական մասին անդրադարձել ենք նիւթի շարադ- րութեան ընթացքում։

Թիւրիմացութիւններից խուսափելու նպատակով, հարկ ենք համարում նշել, որ մենք այստեղ քննութեան առարկայ չենք դարձրել զարդարուեստում հանդիպող բոլոր մոտիվները։ Բաց են թողուած մաս- նաւորապէս բնական տեսարանների ռեալա- կան վերարտադրութիւնները, յատուկ սիւժէ ունեցող նկարները, պատմական և գեղար- ուեստական ստեղծագործութիւններից առ- նուած տեսարաններին նուիրուած պատ- կերները և այլն։

Բացի դրանից, մենք նպատակ չենք ունեցել խօսել առհասարակ զարդարուեստի բոլոր արժանիքների և առանձնայատկու- թիւնների, նրա կատարման տեխնիկայի, արուեստի և ուրիշ կարևոր հարցերի մա- սին։ Այդ խնդիրներին անդրադարձել ենք միայն այնքանով, որքանով որ նրանք առնչուած են եղել մեր առջև դրուած խնդիրների լուծման հետ։ Անգամ այնպիսի հարցեր, որոնք կապուած են զարդար- ուեստի զարգացման ներքին օրինաչափու- թիւնների հետ և աւելի հասկանալի են դառնում ներկայ աշխատութեան մէջ քըն- նարկուած նիւթերի հետ ունեցած կապակ- ցութիւնների շնորհիւ, շօշափուած են միայն ընդհանուր գծերով։ Նոյնը կարելի է ասել նաև շատ ուրիշ կարևոր հարցերի մասին, որոնց ամբողջացումը և խորացումը առան- ձին գործ է։

Ներկայ աշխատութեան մէջ մենք յա- ճախ գործ ենք ածում նաև Տուրքիկ ժողո- վուրդներ դարձուածքը, որի տակ չպիտի հասկանալ բոլոր ժողովուրդներին, որովհե- տև մենք, բնականաբար, ի վիճակի չենք եղել ծանօթանալ բոլոր ժողովուրդների զարդարուեստների հետ։ Ուրիշ ժողովուրդ- ներ ասելով, այստեղ նկատի են առնուած այն ժողովուրդները, որոնց զարդարուեստ- ների որոշ նմոյշների հետ ծանօթացել ենք զանազան հրատարակութիւնների միջոցով և որոնցից համապատասխան վկայակոչումներ են կատարուած ներկայ աշխատութեան մէջ

Ժողովրդական բանահիւսութեան, ծէ- սերի և այլ նման աղբիւրների մէջ, ինչպէ- յայտնի է, պահպանուած են լինում վա- ղեմի ժամանակների հետ կապուած բաւա- կանաչափ մնացուկներ, որոնք մեծապէս նպաստում են այդ վաղեմի ժամանակների կեանքի և մտածողութեան ուսումնասիրու- թեանը։ Միաժամանակ յայտնի է նաև, որ այդ մնացուկները հետագայ ժամանակնե- րում կամ չեն պահպանուել՝ իրենց հին ի- մաստով, կամ ընկալուել են փոխաբերա- բար, ստանալով նոր նշանակութիւն, գա- ղափարաբանական նոր բովանդակութիւն, որն ուղղակի կերպով այլևս չի առնչուել հին ժամանակների պատկերացումների հետ։ Ներկայ աշխատութեան մէջ օգտագործուած համապատասխան փաստերը քննելիս, մենք միշտ նկատի ենք ունեցել այս պարզ ճըշ- մարտութիւնը, որի մասին յաճախ կատա- րել ենք նշումներ՝ այդ փաստերն օգտա- գործելիս, իսկ երբեմն էլ, կրկնութիւնից խուսափելու նպատակով, այդպիսի նշում- ներ չենք կատարել։ Նոյնը կարելի է ասել նաև զարդարուեստի մոտիվների ճնշող մե- ծամասնութեան և յատկապէս մանրանկար- չութեան բնագաւառից մէջբերուած նշում- ների մասին։ Ելնելով մեր աշխատանքի նպատակից ու բնոյթից, ձգտել ենք հան- գամանօրէն ծանրանալ համապատասխան վկայութիւնների հետ կապուող հին ըմբըռ- նումների վրայ, չմոռանալով նաև այն նոր իմաստն ու նշանակութիւնը, որ ստացել են նրանք հետագայում։

Հարկ ենք համարում նշել նաև այն դժուարութիւններից մի քանիսի մասին, որոնց հանդիպել ենք սոյն աշխատութիւնը շարադրելիս։ Այստեղ, ամենից առաջ, նկատի ունենք համապատասխան փորձի ու գործի բացակայութիւնը և հակասական

digitised by A.R.A.R.@

կարծիքների այն բազմաշփոթ վիճակը, որը հեշտութեամբ կարող է մոլորեցնել հետա-քրքրողներին։ Մեծ դժուարութիւն է յարուցել նաև համապատասխան փաստերի հրատարակութիւնների անբաւարար գրու-թիւնը՝ թէ՛ ըստ բնագաւառների և թէ՛ ըստ ժողովուրդների։ Նոյնը կարելի է ասել նաև ժողովրդական հին բանահիւսութեան, գիտաբանութեան, ծէսերի, կենսափորձային գիտելիքների, հաւատալիքների, պատկե-րացումների, տօնահանդէսների, պարերի, խաղերի, ազգա-սպորտային վարժութիւն-ների և այլ բնագաւառների նիւթերի հա-ւաքման եւ ուսումնասիրութեան աշխա-տանքների մասին։ Ինչպէս կը տեսնի ըն-թերցողը, մենք յաճախ զբաղուել ենք ոչ միայն նաև այդպիսի փաստերի հաւաքմամբ (ձեռագիր ու տպագիր աղբիւրներից), այլև նրանց որոշ մասի մեկնաբանութեամբ, և ապա միայն՝ նրանց օգտագործմամբ։

Տեխնիկական զգալի դժուարութիւն-ների ենք հանդիպել համապատասխան նկարների ընտրութեան, ընդօրինակման և նրանց հրատարակման աշխատանքների ժամանակ։

Որոշ դժուարութիւնների ենք հանդի-պել նաև մի շարք մասնագիտական բառա-տրակերպերի և դարձուածքների բացակա-յութեան պատճառով. ասենք, անհրաժեշ-տութիւնից մղուած, դիմել ենք որոշ բա-ռերի այնպիսի բարդումների, ինչպիսիք են. «զարդարուեստ», «վարսանդա-պտղային», «ծաղկա-պտղային», «հատիկա-սերմային», «հատիկա-էլէմենտային», «կենդանա-բու-սական», «բուսա-կենդանական», «ծննդ-գոյգ», «ստար ձեռքին» եայլն, որոնք այս-տեղ միանգամայն արդարացնում են իրենց։

Ընթերցողը ներկայ աշխատութեան մէջ, անշուշտ, կը գտնի նաև բացեր, թե-րութիւններ, որոնց մասին կատարուած դիտողութիւնները շնորհակալութեամբ հաշուի կ'առնուեն մեր հետագայ աշխա-տանքների ընթացքում։

Ս. Ծ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

(Վերջ)

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏՔ

Պէրթրընտ Ռասըլ, քսաներորդ դարու իմաստասէր-ներէն ամենէն նշանաւորն է, եւ արդէն իսկ [illegible] համ-բաւ մը եւ միջազգային փառք մը կը վայելէ:

Այս յօդուածը առնելով **Տրամաբանութիւն եւ Խորհրդապաշտութիւն** գործէն, կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, ցոյց տալու համար արդի գիտունի մը եւ իմաստասէրի մը կեցուածքը երեւոյթներու հանդէպ՝ որոնք միշտ ալ զբաղեցուցած են մարդկային միտքը:

Յատկանշական է դիտել աշխարհն ու հոն քալող մարդկային կեանքը, այդ կեանքը յուզող մեծ երեւոյթ-ները, գիտունի մը աչքով: Հետեւելով անոր դատումնե-րուն, պիտի տեսնենք որ անոնք միշտ ալ ուղղամիտ հա-ւատացեալի մը խօսքերը չեն, վասնզի հեղինակը գիտու-թեան մարդն է եւ երկար ժամանակէ ի վեր գիտութեան եւ կրօնքին միջեւ խրամատ մը բացուած ըլլալով, անոնց ճամբաները կը բռնեն խոտոր ընթացք ունենալ:

ԽՄԲ.

*Արարչագործութեան պատմութիւնը ը-նելով, Մեֆիստոֆել այսպէս պատմեց Տօքթ. Ֆաուստին, երբ ան իր սենեակին մէջ կ'աշ-խատէր։*

*«Հրեշտակներու խումբերուն անվերջ գովերգները կը սկսէին ձանձրալի դառնալ, ի վերջոյ. Տէրը արժանի չէ՞ր միթէ այդ գո-վասանքներուն։ Ինք չէ՞ր որ անսպառ ու-րախութիւն պարգեւած էր անոնց։ Աւելի լաւ պիտի չըլլա՞ր պաշտամունք և գովերգ-ներ ունենալ արարածներէ, որոնք տառա-պանքի մէջ ըլլային։ Ներքնապէս ժպտե-ցաւ Աստուած. և որոշեց որ մեծ այս տռամը բեմադրուի աշխարհի վրայ։*

*Անհամար դարերով երկինքի տակ մի-գամածային գունդը անպատակ կերպով թաւալեցաւ միջոցին մէջ։ Վերջապէս անի-կա սկսաւ ձեւաւորուիլ, եռացող ծովերը եւ կիզանուտ լեռները գիզուեցան եւ սեւ ամպերէն տեղատարափ տաք անձրեւներ թափեցան կարծրացող երկրին մակերեսին վրայ։ Ու կեանքի առաջին բջիջը շարժիլ սկսաւ ովկէանին խորը, և բոյսերը երեւա-ցին ու անտառներ կազմեցին, հրէշային կենդանիներ մէջտեղ եկան՝ կռուելով, գի-բար յօշոտելով ջնջուեցան։ Երբ տռամը մաս առ մաս կը քակէր իր արարները,*

կենդանիներէն առաջ եկաւ մարդը, մտա-
ծելու կարողութեամբ, բարիին և չարին
գիտութեամբ եւ պաշտամունքի անյագ
ծարաւով։ Եւ մարդը տեսաւ թէ ամէն ինչ
անցաւոր է այս խենթ, հրէշային աշխար-
հին մէջ, և թէ տեւելու համար պայքար
է հարկաւոր, և վերջապէս քիչ են հաճոյ-
քի վայրկեանները մահուան անխուսափելի
թեւին տակ։

Ապա մարդը ըսաւ. «Մեզի անծանօթ
նպատակ մը կայ, միայն թէ կարենայինք
գտնել զայն, վասնզի պէտք է պաշտել
բան մը, և տեսանելի այս աշխարհին մէջ
պաշտամունքի արժանի ոչինչ կայ»։ Մարդը
յայնմհետէ մէկզի կեցաւ պայքարէն, վըս-
տահելով որ Աստուած պէտք է ներդաշնա-
կութիւն մը դրած ըլլայ աշխարհին մէջ՝ զոր
պէտք է անհրաժեշտաբար դուրս բերել
քաոսէն՝ մարդկային միջոցներով....։ Ու
երբ քալեց իր բնազդներու ճամբէն, զոր
Աստուած դրած էր իր մէջ իր նախահայր
կենդանիներուն միջոցաւ, մարդը կոչեց
զանոնք մեղք, և Աստուծմէ ներում խըն-
դրեց։ Բայց տարակուսեցաւ իրեն ներում
շնորհելու իրողութեան, մինչև որ իրեն
համար ստեղծեց աստուածային նպատակ
մը՝ որով աստուածային զայրոյթը պիտի
խաղաղէր։ Ու տակաւին տեսնելով որ ներ-
կան չար է, աւելի եւս չարացուց զայն, որ-
պէսզի այդ ձեւով լաւագոյն ապագայի մը
կարելիութիւնը ապահովէր։ Շնորհակալու-
թիւն յայտնեց Աստուծոյ, հաճոյքներ կա-
րենալ վայելելու իր կարողութեանը հա-
մար։ Եւ Աստուած ժպտեցաւ, ու երբ տե-
սաւ որ մարդը կատարեալ եղաւ անձնա-
զոհութեան և պաշտամունքի մէջ, ուրիշ
մոլորակ մը ղրկեց երկնքին վրայ որ իյ-
նալով, մարդոց մոլորակը փշրեց ...
յայնժամ ամէն բան դարձեալ վերածուե-
ցաւ միգամածի ....։

«Այո, մրմռաց Ան, աղուոր խաղ մըն
էր, դարձեալ պիտի ուզեմ անոր բեմա-
դրութիւնը»։

Այսպէս իր մեծ գիծերուն մէջ, և նոյն
իսկ աւելի անիմաստ կերպով է որ գիտու-
թիւնը կը ներկայացնէ մեզի Աշխարհը և
Արարչագործութիւնը։ Ուրեմն այսպիսի աշ-
խարհի մը մէջ մեր իտէալներն ու գաղա-
փարները պիտի կաղմուրին։ Մարդը ուրեմն
արդիւնքն է պատճառներու՝ որոնց վախ-
ճանը չէր նախատեսուած սկիզբէն, և իր
ծագումը, աստիճանական զարգացումը,
յոյսերը, վախերը, սէրերը, հաւատալիք-
ները ուրիշ բան չեն եթէ ոչ հիւլէներու
պատահական մէկտեղում, թէ ոչ մէկ կրակ,
հերոսութիւն, մտածում և զգացում կըր-
նան տեւականացնել անհատին կեանքը գե-
րեզմանէն անդին։ Ուրեմն դարերու աշխա-
տանքները, և «արուեստի գործերը», բո-
լոր զոհողութիւնները, ներշնչումները, բո-
լոր պայծառափայլ հանճարները ճակատա-
գրուած են շիջումի, մոլորակային դրու-
թեան հսկայ մահացումին հետ, և ամբողջ
մարդկութեան իրագործումը անխուսափե-
լիօրէն պիտի թաղուի փլատակ տիեզերքի
մը մոխրակոյտին ներքև։ Սակայն մարդը,
անտեղիտալի յուսահատութեան առջեւ,
քրիստոնէական հաւատքով զինուած, կըր-
նայ դիմագրաւել վիշտը, անձկութիւնը.
մահուան սարսափը կը չքանայ Քրիստոսի
անհուն և խորունկ սիրոյն մէջ լուծուելով։

* * *

Ինչպէս, օտար և անմարդկային այս-
պիսի աշխարհի մը մէջ, ուժասպառ և
անօգնական մարդը պիտի կարենար պահել
իր հաւասարակշռութիւնը, պիտի չյուսա-
լըքուէր, եթէ իր հետ չունենար Տիրոջ
խոստումը, հաւատքն ու սէրը։

Տարօրինակ խորհուրդ մըն է Բնութիւ-
նը, ամենազօր, բայց կոյր. միջոցին մէջ
անհատնում իր թաւալումներուն ընթաց-
քին, վերջապէս զաւակ մը ծնաւ իր ծոցէն
որ ենթարկուեցաւ իր ուժին, բայց որ օժ-
տուեցաւ տեսողութեամբ, չարին և բարիին
գիտութեամբ, և իր կոյր Մօրը գործերը
դատելու կարողութեամբ։ Հակառակ Մահ-
ուան՝ որ նշանն ու կնիքն է ծնողական հա-
կակշռին, Մարդը ազատ է. կարճ իր տա-
րիներուն ընթացքին, քննելու, քննադա-
տելու, գիտնալու և ստեղծելու։ Այս աշ-
խարհին մէջ միայն իրեն է որ կը պատկանի
այս ազատութիւնը, և հոս ահաւասիկ ե-
րեւան կուգայ իր գերակայութիւնը այն բո-
լոր անհանդարտ ուժերուն միջև որոնք կը
ղեկավարեն իր անհանդարտ կեանքը։

Նախամարդը, վայրենին, մեզի նման
կը զգար բնութեան առջև իր անկարողու-
թիւնը, բայց Ոյժէն տարբեր բան մը չէր

digitised by A.R.A.R.@

գաններով, անոր մատուցանելիք իր յարգանքը, երկիւղը, առանց փնտռելու և հարցնելու թէ բնութեան ուժերը արժա՞ն էին իր պաշտամունքին։ Pathetique այլ սոսկալի էտագնապներու և փայլրապութեանց, մարդկային զոհերու երկար պատմութիւնը, նախանձոտ աստուածներու բարկութիւնը ոգոքելու համար մի միայն ի գործ դրուած։ Անշուշտ, այն օրերուն մարդը կը հաւատար թէ ինչ որ իրեն համար թանկ արժէք ունէր, ազատօրէն նուիրելով աստուածներուն, արեան ծարաւը պիտի յագեցուցած ըլլար, և աւելին պիտի չի պահանջուէր իրմէն։ Այսպիսի կրօնք մը էապէս ստրկական ենթակայութիւնն էր։ Քանի որ գաղափարաց անկախութիւնը չէր իշխեր անոնց շուրջ, բնութեան ուժերը կը պաշտուէին միայն, հակառակ անոնց պատճառած անսահման ցաւերուն։ Այսպէս էր նախամարդը, քանի որ Աստուածային Յայտնութիւնը իր շնորհները չէր ծիածանած տակաւին մարդուն սրտին մէջ։

Բայց աստիճանաբար, երբ մարդը սկսաւ կազմակերպուիլ, բարոյական հասկացողութիւնը խրոխտ ընթացք մը առնելով քալեց անոր կեանքին հետ, իտէալ կեանք մը սկսաւ զգալի ըլլալ և պաշտամունքն ալ հետեւաբար ուրիշ ձեւով կատարուեցաւ։ Ոմանք կը փնտռէին աւելի բարձր մակարդակի մը վրայ հաւատքին ծաղկումը, բայց գիտակցաբար կը մերժէին, պաշտելով սոսկ բնութեան վախազդեցիկ այլ կենարար ուժը։ Այսպիսի բան մը կայ Եհովայի՝ Յոբին տուած պատասխանին մէջ, երբ փոթորիկին մէջէն կը խօսի Ան։ Աստուածային Ոյժն ու գիտութիւնը կ'երեւին մեր աչքերուն առջև, բայց ոչինչ կը տեսնենք երկնային բարութենէն և ողորմութենէն։ Այսպէս են նաև բոլոր անոնք որոնք նոյնիսկ մեր օրերուն, կը հիմնաւորեն իրենց բարոյական հաւատալիքը «գոյատեւման պայքարին» մէջ։ Կեանքը պայքար է, կ'ըսեն անոնք. և կը յաղթեն անո՛նք միայն՝ որոնք ուժով են։ Կան ուրիշներ, որոնք բարոյական իրենց հասկացողութեան համար այնքան խորթ և ընդվզեցուցիչ այս տեսակէտին դէմ ուրիշ դիրք մը կ'որդեգրեն հաւատալով որ երեւութապէս չար այս աշխարհը կրնայ ներդաշնակուիլ և ըլլալ բարի և առաքինի աշխարհ։ Ահաւասիկ, այսպէսով երեւան կու գայ ամենազօր այլ բարի Աստուածը խորհրդաւոր միութեան մը մէջէն։

Բայց իրականութեան մէջ աշխարհը բարի չէ, և երբ այս մտածումը կ'ունենանք, գերի ըլլալու նշոյլ մը, պզտիկ սատանայի մը պէս կը մտնէ մեր մէջ որմէ պէտք է մաքրենք զմեզ։ Վասնզի ամենուրեք և հանապազ պէտք է խոստովանիլ Մարդուն մեծութիւնը, ազատելով զայն այնքան որքան կարելի է անմարդկային ուժի տիրապետութենէն։ Մէյ մը որ գիտնանք թէ բնութեան ուժերը չար են, անօգնական հիւլէի մը կը վերածուինք աշխարհին մէջ, — աշխարհ, որ զուրկ է այդ գիտութենէն, վասնզի մարդը զինուած է բարիի և չարի գիտութեամբ։ Հոս ահաւասիկ կը սկսի նոր ժամանակներու մեծագոյն խնդիրներէն մէկը։ Երկու հակընդդէմ ճամբաներէն մէկուն ընտրութիւնը։ Ի՞նչ պաշտել. — Ո՞ւժը թէ Բարութիւնը։ Սխալ ընտրութիւնը տեսանք թէ մարդկութիւնը երկու համաշխարհային պատերազմներու, աննախընթաց աղէտներու առաջնորդեց, վասնզի ուժը, նիւթին պաշտամունքը, Չարին պաշտամունքն է էապէս։

Ուժին պաշտամունքը, որուն վարժեցուցին մեզ Carlyle և Nietzsche և ամբողջ militarism-ի սերունդ մը, արդիւնքն էր աններդաշնակութեան և գաղափարներու պայքարին։ Ինչե՞ր ըսէք չի զոհեցինք կոյր ուժին ․․․։ Ի վերջոյ պէտք է ընդունինք որ մեզի ծանօթ այս աշխարհին մէջ, շատ մը բաներ կան որոնք այլապէս աւելի լաւ պիտի ըլլային. և այն բոլոր իտէալները որոնց կը կառչինք չեն իրականանար և չեն փթթիր նիւթին իշխանութեան մէջ։ Պահենք մեր յարգանքը ճշմարտութեան, գեղեցկութեան և տիպար կատարելութեան հանդէպ. ատիկա մեր պարտականութիւնն է իբրեւ Աստուծոյ որդիներ՝ վասնզի, պատգամն է մեր Տիրոջ, — կատարեալ ըլլալ։ Թէև մարդկային մեր տկար միջոցներով դժուար իրականանալի, բայց և այնպէս փրկութեան համար անհրաժեշտ պայման։ Եթէ ուժը չար է, ի բաց վանենք զայն մեր հոգիներէն։ Հո՛ս, ասոր մէջ կը կայանայ մարդուն բուն ազատութիւնը։ Նախախնամող Աստուած, բարութեամբ ստեղծեց աշխարհը, և մեր երկնաւոր Հայրը պաշտելը, մեր ներքին կեանքին ամենէն մաքուր, խորապէս

digitised by A.R.A.R.@

ապրուած և վայելքի անստգիւտ վայրկեան-ները կը պարգեւէ մեզի։

Ամէն օր, մեր գործին, մեր կամեցողութեան, մեր փափաքներուն մէջ ենթակայ ենք արտաքին ույժերու տիրապետութեան, բայց մտածումով, ձգտումով ազատ ենք, ազատ՝ չար մարդերէն, ազատ՝ փոքրիկ այն մոլորակէն որուն վրայ կը սողանք, ազատ՝ նոյնիսկ երբ կ'ապրինք. մահուան բռնութեան ներքև։ Այս ուրեմն սորվինք որ հաւատքին ույժը, մեզի տեւապէս բարի և առաքինի կեանքի մը տեսլականը կը պարգեւէ, որպէսզի, այդպիսի կեանք մը ապրինք։ Հետևաբար, երբ կ'իջնենք մեր կայքէն գործի և իրական աշխարհին մէջ, միշտ ունենանք այդ տեսլականը մեր առջև։

Գիտենք որ աշխարհին մէջ Չարը կը տիրապետէ, երբ առաջին անգամ իրականն ու գաղափարականը, հակառակ իրողութիւնները իրար բաղխին, ընդվզումի կատաղի ոգին ոտքի կը կանգնի մեր մէջ. Նոր օրերու աստուածները արհամարհելու կատաղի ոգին անհրաժեշտութիւն մը կը դառնայ պահպանելու համար մեր ազատութիւնը։ Տարրական այլ բացարձակ պահանջք, վեր ելլելու համար մեր կեանքի գարշ հաշիւներէն, օրերու տիղմէն, ճախրելու համար ազատ և մաքուր մեր հաւատքի երկնքին մէջ ու հասնելու վսեմին, հասնելու Աստուծոյ։ Արհամարհել գիտնանք Պրոմէթեան յամառութեամբ մեզի թշնամի աշխարհը որ իրեն կը քաշէ, անոր պատճառելիք աղէտը աչքի առջև ունենալով մերժենք աշխարհի չարը, որովհետև օր մը անոր խոնարհիլը անխուսափելի կ'ըլլայ։

Բայց բարկութիւնն ու զայրոյթն ալ քրիստոնէական հասկացողութեամբ գերութիւն են, վասնզի կը պարտադրեն որ մեր մտածումները տեւապէս չար աշխարհով մը զբաղին, և փափաքին կողանքին մէջ, որմէ ծնունդ կ'առնէ բաժանումը, տեսակ մը համոզում կայ որուն պէտք է յաղթել գիտնալ։ Զայրոյթը գերութիւնն է մեր մտածումներուն, բայց ոչ մեր փափաքներուն։ Ստոյիկ ազատութիւնը ոչ թէ մտածումը այլ փափաքներն է որ գերի կ'ընէ։ Մեր փափաքներուն չքացումով երեւան կուգայ հրաժարելու առաքինութիւնը։ Միւս կողմէ, մեր մտածումներուն ազատութեամբ, երեւան կուգայ արուեստի և գեղեցկութեան տեսլականը, որուն միջոցաւ կրնանք յաղթահարել աշխարհը։

Թէև հրաժարումներու անհրաժեշտութիւնը ապացոյցն է Չարին գոյութեան, այնուամենայնիւ Քրիստոնէութիւնը իր վարդապետութեան վեհութեամբ և քաղցրութեամբ աւելի է քան Պրոմէթեան իմաստութիւնը։ Պէտք է ընդունինք որ մեր փափաքներէն շատերը, ըլլալով բնական, թէև երբեմն անկարելի — բարի են ըստ էութեան։ Երիտասարդներուն համար, իրենց փափաքներուն հրայրքին մէջ, ամէն բան իրականանալի կը թուի։ Մինչ՝ մահուամբ, հիւանդութեամբ, սնանկութեամբ, և կամ պարտականութեան ձայնով պէտք է իւրաքանչիւրս սորվինք թէ աշխարհը մեզի համար չէ, և թէև մեր փափաքները գեղեցիկ են ու բարի, սակայն մեր բախտը երբեմն կ'արգիլէ մեզ անոնց հասնիլ։

Քաջութեամբ պէտք է մեր յոյսերուն մոխիրը բռնենք մեր ձեռքերուն մէջ, ու չտանջուինք անոնց խղճախայթերէ։

Կրաւորական հրաժարումները իմաստութիւն չեն սակայն. վասնզի միայն հրաժարումով չէ որ մեր իտէալներուն պաշտամունքին տաճարը կրնանք կանգնել։ Այս տաճարի գեղեցկատիպ պատկերը յաճախանք մը կ'ըլլայ մեր աչուըներուն առջև իբրև երաժշտութիւն, իբրև ճարտարապետութիւն, իբրև մտածում, և վերջապէս իբրև գեղեցիկ մայրամուտի մը մէջ մեռնող բանաստեղծութեան կախարդութիւն։ Եւ յաճախ գեղեցկութիւնը կը շողայ հեռու վիշտին ու տառապանքին ցաւերէն։ Այսպիսի յղացքով մը հետեւաբար երկնքին տեսիլքը կը դրոշմուի մեր հոգւոյն մէջ։

Ներշնչումներ կան և անստգիւտ վայրկեաններ, որոնք ծագում կ'առնեն մեր մէջ առանց մեզքի միջամտութեան. բայց հոն հասնելէ առաջ պէտք է անցնիլ մթութենէ մը, քարանձաւէ մը. անոր մուտքը Յուսահատութիւնն է, և սալայատակին վրայ լքուած յոյսերու գերեզմաններ կան։ Հոն՝ անձը պէտք է մեռնի . . . հոն՝ իղձերը անընտել ու անյագ տենչանքները պէտք է մահացուին, որովհետև այդպիսով միայն հոգին կրնայ ազատագրուիլ ճակատագրին տիրապետութենէն։ Անձնազոհութեան այս

digitised by A.R.A.R.@

անձաւէն դուրս իմաստութեան լոյսը կը շողայ, որուն ճառագայթներէն նոր ուրախութիւն մը, ներշնչում մը, կը լեցնեն ուխտաւորին հոգին։

Բոլոր արուեստներէն Ողբերգութիւնը ամենէն աւելի յաղթականն ու հպարտն է. վասնզի անոր մայրաքաղաքը թշնամիին երկրին մէջն է, անոր աշտարակներէն, սիւներէն եւ ամրութիւններէն ամէն ինչ կը փրցուի. անոր պարիսպներէն ներս ազատ կեանքը կը շարունակուի, մինչ մահուան, ցաւի եւ յուսահատութեան թափօրը կ'անցնի ու ճակատագրին սարսուռ պաշտօնեաները այդ քաջ քաղաքին բնակիչներուն կը ցուցադրեն գեղեցկութիւններ։ Երջանիկ են հոն ապրող մարդիկը, ամէն բան տեսնելուն համար։ Պատիւ, քաջ ասպետներուն որոնք, անհամար դարերու պատերազմներէն ետք, հրաւիրած են մեզի ազատութեան օդին։

Ողբերգութեան գեղեցկութիւնը ամենուրեք տեսանելի է մեր կեանքին մէջ. մահուան պարագային, ցաւի գալարումներուն ներքեւ, եւ անվերադառնալի ու անհետացած անցեալին մէջ։ Խորհուրդ մը կայ, խօլոր երկիւղ մը, հսկայութեան զգայնութիւն մը, խորութիւն մը, գոյութեան անպատ խորհուրդը, որուն մէջ, ցաւի անիմանալի զուգաւորմամբ մը տառապեալը կը կապուի աշխարհին՝ ցաւին թելերով։ Ներշնչումի այս պահերուն կը կորսնցնենք անհիւթական բաղձանքները, կը մոռնանք պզտիկ հաճոյքներու համար մեր պայքարները, մանր հոգերը, հազարումէկ տագտուկները որոնք թէեւ մակերեսային, այնուհանդերձ առօրեայ կեանքը կը կազմեն։ Մեր նեղ հորիզոնը բարեկամութեան լոյսով լուսաւորուած կը տեսնենք։ Մեր տագնապներուն ալեկոծման մէջ պահ մը կը խաղաղինք։ Մարդիկ բնութեան ույժերուն դէմ առանձին են, բայց կը պայքարին իրենց հոգիով, ու աշխարհի հոգը անգամ չէ թէ մարդիկ տարիներով սնուցած են յոյսեր ու վախեր։ Այսպիսի պայքարի մը մէջ յաղթանակը ճշմարիտ մկրտութիւն մըն է՝ մարդկային գոյատեւման գեղեցիկ յաղթանակին սկիզբը։

Հոգիին եւ աշխարհի Զարին բաղխումէն առաջ կուգան ժուժկալութիւն, իմաստութիւն եւ բարութիւն, եւ ասոնց ծնունդով նոր կեանք մը կը սկսի։ Մահը, եւ անցեալը, ներապրիլ, զգալ մարդուն փոքրութիւնն ու անոր միջոցներուն սակաւութիւնը, զանոնք գիտնալ եւ ապա յաղթել կը նշանակէ։

Ահաւասիկ թէ ինչու Անցեալը կախարդական ոյժ մը ունի։ Անոր անշարժ եւ լուռ պատկերներուն գեղեցկութիւնը կը նմանի աշնան երեկոյեան մը ջինջ հմայքին, երբ տերեւները մեղմիկ շունչով մը կ'իյնան ոսկեայ փայլով մը երկնքին դէմ փայփլելէն։ Անցեալը չի փոխուիր. կեանքին տենդէն ետք խաղաղութեամբ կը քնանայ ան. հոն տենչանքներն ու մանր փառասիրութիւնները, ճիգն հաշիւները, փոքրոգութիւնները կը նուազին, բայց միայն գեղեցիկ եւ յաւիտենական արժէք ներկայացնող բաները, աստղազարդ գիշերուան մը երկնքին պէս կը գեղեցկանան։ Տգեղ հոգիներուն համար գեղեցկութիւնը անհանդուրժելի է, բայց ճակատագրին յաղթահարող հոգիի մը համար խորին խորհուրդն է։

Մարդուն կեանքը մեծ բան մը չէ, արտաքնապէս գիտուած, եւ բաղդատած բնութեան ույժերուն։ Գերին կը պաշտէ, ժամանակը, ճակատագիրը, Մահը, վասնզի անոնք աւելի մեծ են քան որեւէ իրականութիւն՝ որ իր մէջ կը գտնէ եւ որովհետեւ բոլոր իր մտածումները կը բղխին անոնցմէ։

Այդ մեծ իրողութիւններուն մասին մտածել, ինքնին մեծութիւն մըն է արդէն։ Այսպիսի մտածումներ մեզ կ'ազատագրեն։ Այնուհետէ արեւելեան հպատակութեամբ չենք խոնարհիր անոնց անխուսափելի ներկայութեան առջեւ, բայց զանոնք կը լուծենք մեր մէջ, եւ մեր էութիւններուն մէկ մասը կ'ընենք։ Մեր անձին փոքրիկ հաճոյքներուն համար կռիւն ու պայքարը լքել, առժամանակեայ տենչանքներուն կապանքներէն դուրս գալ, եւ վերջապէս յաւիտենական արժէքներու համար տագնապիլ եւ այդպէս ազատագրուիլ կը նշանակէ, եւ ահաւասիկ այս միայն ազատ մարդուն պաշտամունքը կը յատկանշէ։

Բոլոր մարդերուն հետ անքակտելիօրէն կապուած է մենէ իւրաքանչիւրս՝ վասնզի, բոլորս ալ հասարակաց ճակատագիր մը կը բաժնենք հաւասարապէս։ Ազատ մարդը նոր տեսիլք մը կը տեսնէ իր առջեւ, իր իրա-

digitised by A.R.A.R.@

քանչիւր արարքին մէջ սիրոյ լոյսն է որ կը շողայ։ Մարդուն կեանքը, գիշերին մէջէն քալել մըն է, շրջապատուած թշնամիներով. կը քալէ ցաւով և հեծութեամբ, նպատակի մը՝ որուն քիչեր և ընտրեալներ միայն կրնան հասնիլ։

Հոն՝ բարձացուած կատարին վրայ չէ տրուած մեզի երկարօրէն յամենալ։ Մի տա մի, բոլոր մեր ընթացակից բարեկամները կ'անհետանան մեր տեսողութենէն, ձերբակալուելով ամենազօր մահուան լուռ իշխանութենէն։ Շատ կարճ միջոց մը միայն կրնանք օգնել անոնց և այդ կարճ ժամանակին մէջ կ'որոշուի անոնց դժբախտութիւնը կամ երջանկութիւնը։ Մեր պարտականութիւնը թող ըլլայ լուսաւորել անոնց ճամբան, թեթեւցնել անոնց տառապանքին բեռը, քաջալերել և յուսադրել երբ քաջութիւնն ու յոյսը տակաւ կը հեռանան անոնցմէ. և վերջապէս հաւատք ներշնչել անոնց, երբ կը պարպուին հաւատքէ։ Մի կշռէք և մի չափէք անոնց արժէքները ու թերիները, մտածեցէք անոնց կարիքներուն և ցաւերուն մասին։ Մի մոռնաք որ տառապակիցներ ենք բոլորս ալ, նոյն մթութեան մէջ. մթութիւն մը՝ որ միայն մեր Տիրոջ սիրովը կը լուսաւորուի, այլապէս մենք նոյն մեծ ողբերգութեան դերակատարներն ենք միայն։

Այսօր կրնանք մեր ամենասիրելի էակը կորսնցնել, վաղը սակայն, մենք պիտի անցնինք մահուան դռնէն, մեզի կը մնայ ուրեմն զիրար սիրել, վերջին վարագոյրին իջնելէն առաջ։ Սիրել վեհ և մեծ այն մտածումները որոնք կ'ազնուացնեն մեր կեանքը, մեր պզտիկ օրերը։

# Ս. ՅԱԿՈԲԻ



# ՆԵՐՍԷՆ

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Երուսաղէմ, 11 Օգոստս 1956

Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւոր

Արքայական Պալատ

Ամման

Ձերդ Վեհափառութեան գահակալութեան բարեբաստիկ տարեդարձի առիթով, կը ներկայացնենք մեր հաւատարմութիւնն ու նուիրումը Ձերդ Վեհափառութեան հանդէպ եւ կ'աղօթենք որ Ամենակալը շնորհէ Ձերդ Վեհափառութեան երկար կեանք եւ երջանկութիւն, եւ բարգաւաճութիւն Հաշիմական թագաւորութեան:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Տեղապահ Հայոց Պատրիարքութեան

---

Արքունիք Ամմանի, 16 Օգոստս 195[illegible]

Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարքական Տեղապահ

Երուսաղէմ

Շնորհակալութիւն Ձեր անկեղծ շնորհաւորութեան համար մեր գահակալութեան տարեդարձին առիթով:

ԱԼ.-ՀԻՒՍԷՅՆ

digitised by A.R.A.R.@

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 1 Յուլիս. — Ս. Եղիայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. ժամարարն էր Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան։

— Վաղուան նախատօնակին ի Ս. Հրեշտակապետ նախագահեց Գեր. Տ. Պարգև Եպս. Վրթանէսեան։

● Բշ. 2 Յուլիս. — Ս. Կուսանացն Հռիփսիմեանց: Զատուկեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ. ժամարարն էր Հայֆայի և շրջակայից Հոգևոր Հովիւ Հոգ. Տ. Շահան Արեղայ Թիլաճեան։

● Ուր. 6 Յուլիս. — Վաղուան նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ. Հանդիսապետն էր Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան։

● Շբ. 7 Յուլիս. — Ս. Գր. Լուսաւորչի ելն ի վիրապէն տօնին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ. ժամարարն էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գալպաքճեան։

— Վաղուան հանդիսաւոր նախատօնը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ. Հանդիսապետն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ ժամերգութեան ընթացքին ուրար կրելու արտօնութիւն տուաւ Ժառ. Վարժարանի քառամեայ ընթացքը բոլորած 6՝ ինչպէս նաև Ամերիկայէն, քահանայութեան պատրաստուելու համար ժամանած 3 սաներուն։ Ըստ սովորութեան, նախատօնակէն ետք երգուեցաւ «Տէր ողորմեա»։

● Կիր. 8 Յուլիս. — Տօն Կաթ. Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին մէջ. Պատարագեց Գեր. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Ինթայեան և քարոզեց՝ բնաբան ունենալով «Եկայք, շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ». Քարոզէն ետք, Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեանի նախագահութեամբ, կատարուեցաւ Հայրապետական մաղթանք։

● Կիր. 15 Յուլիս. — Բարեկ. Ս. Լուսաւորչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. Պատարագեց Հոգ. Տ. Կարիւն Վրդ. Մանուէլեան. Քարոզեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան, անդրադառնալով երէկուայ տօնելի սուրբին՝ Մեծն Ներսէսի կեանքին ու գործունէութեան վրայ և Ս. Պատարագէն ետք նախագահեց Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեանի մահուան տարելիցին առթիւ կատարուած հոգեհանգստեան հանդիսաւոր կարգին։

● Ուր. 20 Յուլիս. — Վաղուան հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ. Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան։

● Շբ. 21 Յուլիս. — Գիւտ Նշխարաց Ս. Գրիգոր Լուսաւորչին: Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ. ժամարարն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

● Կիր. 22 Յուլիս. — Այսօր մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ Մայր Տաճարին մէջ, Ս. Աթոռոյ մեծանուն բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի մահուան տարելիցին առթիւ. Պատարագեց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան. Քարոզեց Գեր. Տ. Տիրան Արքեպս. Ներսոյեան, անդրադառնալով հանգուցեալ Բարերարի կեանքին ու գործունէութեան մասին. Ս. Պատարագէն ետք, Գեր. Տեղապահ Ս. Հայրը նախագահեց հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտամունքին։

● Դշ. 25 Յուլիս. — Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ. Հանդիսապետն էր Գեր. Տ. Տիրան Արքեպիսկ. Ներսոյեան։

● Եշ. 26 Յուլիս. — Ս. Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ (Տօն Ազգային): Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ Ս. Պատարագը մատոյց Ս. Թարգմանչաց Վարժարանի առժ. Տեսուչը՝ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան և քարոզեց՝ «Որք զարգարեցին տնօրինաբար զիմաստս անեղին» բնաբանով։

● Շբ. 28 Յուլիս. — Վաղուան նախատօնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ. Հանդիսապետն էր Գեր. Տ. Պարգև Եպս. Վրթանէսեան։

● Կիր. 29 Յուլիս. — Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. Պատարագեց Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան և քարոզեց քրիստոնէական երեք մեծ առաքինութիւններուն՝ Հաւատքի, Յոյսի և Սիրոյ մասին։

● Ուր. 3 Օգոստ. — Մայր Տաճարին մէջ, վաղուան նախատօնակին նախագահեց՝ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան։

● Շբ. 4 Օգոստ. — Ս. Երկոտասան Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի Երեքտասաներորդ Առաքելոյն: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ. Պատարագեց Հոգ. Տ. Գէորգ Արղ. Նազարեան։

● Կիր. 5 Օգոստ. — Բարեկ. Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

● Ուր. 10 Օգոստ. — Վաղուան նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Պարգև Եպս. Վրթանէսեանի։

● Շբ. 11 Օգոստ. — Յիշատակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին. Պատարագիչն էր Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան։

— Վարդավառի հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տեղապահ Սրբազանը. Ապա կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւն։

— Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի և Հսկման արարողութիւններուն նախագահեց Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան։

● Կիր. 12 Օգոստ. — ՎԱՐԴԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեառն): Օրուան հանդիսաւոր Ս.

digitised by A.R.A.R.@

Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գեր. Տեղապահ Ս. Հայրը և կատարեց քահանայական ձեռնադրութիւնը Յովսէփ Սրկ. Մամուրի և Նազար Սրկ. Մարգարեանի, վերակոչելով զանոնք Տ. Յովսէփ և Տ. Մամբրէ կուսակրօն աբեղաներ։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան»։ Հանդիսապետն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան։ Ապա պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որմէ յետոյ կատարուեցաւ նորընծաներուն վեղարի տուչութեան կարգը՝ նախագահութեամբ Գեր. Տեղապահ Սրբազան Հօր։

● Բշ. 13 Օգոստ. — Յիշատակ մեռելոց։ Սուրբ Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեանի նախագահութեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատր. Հօր շիրմին վրայ, ինչպէս նաև հին կրատան ու Զամթաղի գերեզմանավայրերուն մէջ։

● Կիր. 19 Օգոստ. — Բարեկ. Ս. Աստուածածնի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Պատարագեց Հոգ. Տ. Գէորգ Աբղ. Նազարեան։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեանի նախագահութեամբ կատարուեցաւ «Խաղողօրհնէք»։

● Ուր. 24 Օգոստ. — Վաղուան նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան։ Ապա կատարուեցաւ սարկաւագական կոչման արարողութիւն։

● Շբ. 25 Օգոստ. — Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի։ Ս. Պատարագը ի Ս. Էջմիածին մատոյց Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարաճեան, որուն ընթացքին, Գեր. Տ. Հայկազուն Եպս. կատարեց 9 սարկաւագներու ձեռնադրութիւնը (Մանրամասնութիւնները «Սիոն»ի յաջորդ թիւով)։

— Վերափոխման մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ։ Հանդիսապետն էր Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փոլատեան։

— Գեր. Սրբազանը նախագահեց նաև իրիկնազէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ընկեացէք»ի և Հսկման արարողութիւններուն։

● Կիր. 26 Օգոստ. — ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ Հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարին մէջ մատոյց Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փոլատեան և քարոզեց, բնաբան ունենալով օրուան ճաշու Ընթերցուածէն «Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի և ժառանգ Աստուծոյ» (Գաղ. Դ. 7)։

— Կէսօրէ վերջ, Գեր. Սրբազանը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին։ Ապա պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ։ Հանդիսապետն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան։

● Բշ. 27 Օգոստ. — Յիշատակ մեռելոց։ Սուրբ Պատարագը ի Ս. Գլխադիր մատոյց Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բալիկեան։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա Տաճարի գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատր. Հօր շիրմին վրայ, ինչպէս նաև հին կրատան ու Զամթաղի գերեզմանավայրերուն մէջ։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Բշ. 2 Յուլիս. — Երեկոյեան, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ մօտ ամիսէ մը ի վեր Հնդկաստան կը գտնուէր, վերադարձաւ Ս. Աթոռ։

● Դշ. 4 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Միացեալ Նահանգաց անկախութեան 179րդ տարեդարձին առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տեղապահ Ս. Հայրը, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Դշ. 10 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Սէուտ Արաբիոյ Հիւպատոսարանին մէջ, մեկնող Հիւպատոս Շէյխ Մոհամմէտ Սըտգի էլ Մանսուրի կողմէ ի պատիւ նորընտիր Հիւպատոս Շէյխ Ալի էլ Սաֆիրի տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան և Տիար Կարապետ Յակոբեան։

● Դշ. 11 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Քաղաքիս Իսլամ և Քրիստոնեայ Բարեսիրական կազմակերպութեանց կողմէ, ի պատիւ Սէուտական Արաբիոյ մեկնող և նորընտիր Հիւպատոսներուն, Al-Zahra պանդոկին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Պարգև Եպս. Վրթանէսեան և Տիար Կարապետ Յակոբեան։

● Շբ. 14 Յուլիս. — Կէսօրին, Ֆրանսական Հիւպատոսարանի մէջ, Ֆրանսայի ազգային տօնին առթիւ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան և Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան։

● Դշ. 17 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի հովանաւորութեամբ, Cinema Al-Hambraի մէջ, Միջին Արևելքի Արաբական Բժշկական 2րդ Համագումարի բացման հանդէսին ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան և Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարաճեան։

— Կէսօրէ վերջ, Orient Houseի սրահներուն մէջ, Քաղաքապետարանի կողմէ, ի պատիւ Արաբական Բժշկական Համագումարի անդամներուն տրուած թէյասեղանին ներկայ եղան Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Դշ. 18 Յուլիս. — Կէսօրէ առաջ, Իսլամաց Գուրպան պայրամի առթիւ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, շնորհաւորական այցելութիւն տուաւ Քաղաքի Մոհաֆըզին, Ոստիկանապետին, Միւֆթիին, և Եգիպտական ու Սէուտի Արաբական Հիւպատոսներուն։

— Նոյն առեն, Գեր. Տ. Հմայեակ Ծ. Վրդ.

digitised by A.R.A.R.@

ինթայեան արձակուրդով մեկնեցաւ Պոլիս և վերադարձաւ Դշ. 22 Օգոստոսի երեկոյեան։

— Կէսօրէ վերջ, Սպանիոյ ազգային տօնին առթիւ, Սպանիական Հիւպատոսարանի մէջ տըրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Շբ. 21 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Պելճիքայի անկախութեան 117րդ տարեդարձին առթիւ, Պելճիքական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան։

— Երեկոյեան, Ս. Ուխտիս Միաբաններէն Գեր. Տ. Գարեգին Ծ. Վրդ. Գազանճեան, որ 5 տարիներէ ի վեր կը գտնուէր Պոլիս, ժամանեց Ս. Աթոռ և շաբաթ մը ետք արձակուրդով մեկնեցաւ Եւրոպա։

● Բշ. 23 Յուլիս. — Կէսօրէ վերջ, Եթովպիոյ Ն. Վ. Հայլէ Սելասիէ Կայսեր ծննդեան 64րդ տարեդարձին առթիւ, Եթովպական Հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Դշ. 1 Օգոստ. — Կէսօրէ վերջ, Al-Zahra պանդոկին մէջ, Քաղաքիս Ոստիկանապետին մեկնման առիթով տրուած թէյասեղանին ներկայ եղան Գեր. Տեղապահ Ս. Հայրը և Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան։

● Եշ. 2 Օգոստ. — Կէսօրին, Սէուտի Արաբական Նորընտիր Հիւպատոսը իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● Եշ. 9 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Գեր. Տեղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեանի և Տիար Կ. Հինդլեանի, փոխ-այցելութիւն տուաւ Սէուտական Արաբիոյ Նորընտիր Հիւպատոսին։

● Շբ. 11 Օգոստ. — Իրիկուան ժամը 6ին, Հռոմի Ֆրանչիսկեանց Միաբանութեան Ընդհ. Մեծաւոր՝ Père Augustine Sepinski, ընկերակցութեամբ Ֆրանչիսկեան Հայրերու, այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Տեղապահ Ս. Հօր և Միաբանութեան անդամներուն կողմէ։

● Կիր. 19 Օգոստ. — Կէսօրէ վերջ, Ֆրանչիսկեաններու վանքին մէջ, ի պատիւ Հռոմի Ֆրանչիսկեանց Մեծաւորին տրուած թէյասեղանին ներկայ եղան Գեր. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդլեան։

● Բշ. 20 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Չինչինեան մեկնեցաւ Սուրիա-Լիբանան, ժառ. Վարժարանի 1956-57 դպրոցական տարեշրջանի համար նոր սաներ արձանագրելու։

● Դշ. 21 Օգոստ. — Երեկոյեան, Անթիլիասի Դպրեվանուց Վերատեսուչ Գեր. Տ. Դերենիկ Եպս. Փոլատեան ժամանեց Ս. Աթոռ։

## ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍ

### ԺԱՌԱՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի 1955-1956 տարեշրջանի Ամավերջի Մրցանակաբաշխութեան Հանդէսը տեղի ունեցաւ 5 Յուլիս, Հինգշաբթի երեկոյեան ժամը 7-9.30, Վարժարանի հանդիսասրահին մէջ, ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և հրաւիրեալներու ստուար բազմութեան։ Հանդէսին կը նախագահէր Գեր. Տեղապահի Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհաճեան։

Միաբանութեան սրահ մտած պահուն, ժառ. Սաներ սկսան երգել «Միրտ ի սիրտ» վարժարանի քայլերգը, որմէ ետք Տեսուչ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան ըրաւ հակիրճ բացման խօսքը։ Ապա շուրջ երեք ժամերու տևողութեամբ իրագործուեցաւ լաւ բաւականին հոծ ու կոկիկ յայտագիր մը, բաղկացած երկու մասերէ։

Առաջին մասը կը բաղկանար ժառ. սաներու կողմէ կատարուած արտասանութիւններէ (Հայերէն Գրաբար և Աշխարհաբար, Անգլիերէն, Արաբերէն և Ֆրանսերէն լեզուներով), շարադրութիւններէ, մեներգներէ և խմբերգներէ, զոր կը ղեկավարէր ձեռնհասօրէն վարժարանի երաժշտութեան ուսուցիչ և դպրապետ Տիար Սահակ Գալայճեան։

Շարադրական կտորները զգալիօրէն ի յայտ կը բերէին այն յառաջդիմութիւնը՝ որ Ժառանգաւորաց Վարժարանինն է, շնորհիւ Գեր. Տեսչին և ուսուցչական կազմին՝ որոնք չեն գլանար իրենց կարելին, վարժարանը իր վերելքի ճամբուն մէջ պահելու համար միշտ, ու ժառանգաւորի հոգւոյն մէջ սերմանելու կրօնա-եկեղեցական սիրոյն քով ի վեր նաև սէր՝ դէպի մայրենի լեզուն ու մշակոյթը։

Եղան երեք բանախօսութիւններ, Բարեշնորհ Սարկաւագներու կողմէ։ Բարեշ. Արմենակ Սրկ. Շիրվանեան, իր սահուն լեզուով ներկայացուց Հայց. Եկեղեցւոյ դաւանանքին ու խորհուրդներուն շուրջ իր ստացած լայն ծանօթութիւնները։

Երկրորդ մասը, հինգ վայրկեան դադարէ մը ետք, սկսաւ ժառ. սաներու կողմէ երգուած Ս. Աթոռոյ քայլերգով «Օրհնեցէք զՏէր»։ Ապա Գեր. Տեսուչ Ս. Հայրը կարդաց վարժարանի միամեայ գործունէութեան տեղեկագիրը, ուր անցնող տարւոյ մասին գոհունակութեամբ արտայայտուելէ ետք, շեշտեց նոր ուժերու պէտքը ուսուցչական կազմին մէջ, որպէսզի Վարժարանը յառաջիկային ա՛լ աւելի յառաջդիմէ ու վերագտնէ նախորդ տասնամեակներու իր բոլորած արդիւնաւէտ ընթացքը։

Ուսումնական և մարզական հիւղերու մէջ յաջող աշակերտներու գիրքերով ու բաժակ-մէտալներով պարգևատրուելէ ետք, Նախագահ Ս. Հայրը ըրաւ փակման խօսքը, յորդորելով ժառանգաւորներուն ըլլալ ուշիմ ու պարկեշտ ուսանողները այս յարկին՝ լաւ օրերու ու իրենց կեանքերուն մէջ նոր նուաճումներու տեսիլքով գօտեպինդ. Ըլլալու համար մէյ մէկ ժրաջան պա-
հակները այս Հաստատութեան։

Միաբերան երգուած Հայր մերէն ետք, հանդիսականները արձակուեցան Նախագահ Սրբազանին «Պահպանիչ»ով և օրհնութեամբ։

digitised by A.R.A.R.@

## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

### ԱՄՄԱՆԻ ՀԷԹՈՒՄԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ամմանի Հէթումեան Վարժարանի Ամավերջի Հանդէսը տեղի ունեցաւ 8 Յուլիսի Կիրակի առաւօտուն, Ամմանի Օրտոն Սինեմային մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Տ. Եղիշէ Արք. Տէրտէրեանի։

Հանդէսը բացաւ դպրութիւն Նոր Հոգեւոր Հովիւ և վարժարանի տեսուչ՝ Հոգ. Տ. Վազգէն Աբղ. Դըգըրըլեան, որմէ ետք, շուրջ երեք ժամ տեւողութեամբ, վարժարանի աշակերտութիւնը կատարեց խմբերգներ, մեներգներ, արտասանութիւններ, եւայլն, որոնք ի յայտ կը բերէին ուսանողութեան զգալի յառաջդիմութիւնը կրթական և բարոյական մարզերու մէջ։

Հանդէսի աւարտին, Մանկապարտէզի 27 և Նախակրթարանի 17 երկսեռ ընթացաւարտները ստացան իրենց վկայականները Գեր. Տեղապահ Սրբազանէն, որ մրցանակներու բաշխումէն ետք տուաւ իր պատգամը շրջանաւարտներուն ու փակեց հանդէսը կէսօրին, «Պահպանիչ»ով և Տէրունական աղօթքի երգեցողութեամբ։

---

## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

### Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

15 Յուլիս Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3.30-6, տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի Ամավերջի Հանդէսը, ժառանգաւորաց Վարժարանի բակի հինաւուրց մայրիի շուքին ներքև հաստատուած շարժական բեմին վրայ։ Հանդէսին կը նախագահէր Գեր. Տեղապահ Ս. Հայրը։ Ներկայ էին Գեր. Սրբազաններ, Հոգ. Հայրեր և ժողովուրդի ստուար բազմութիւն։

Մանկապարտէզի փոքրիկները յաջողութեամբ կատարեցին արտասանութիւններ, հայկական պարեր ու փոքրիկ ներկայացումներ։ Մակին դասարանի 48 երկսեռ աշակերտները ստացան վկայականներ, յաջորդ տարեշրջանին անցնելու համար Նախակրթարանի բաժինը։

Իսկ Նախակրթարանի ընթացաւարտ դասարանի, ինչպէս նաև վարժարանի Երկրորդական բաժնի ուսանողները կատարեցին խմբերգներ ու հայերէն, արաբերէն, անգլիերէն ու ֆրանսերէն լեզուներով արտասանութիւններ, ինչպէս նաև շրջանաւարտներէն մին կարդաց խնամուած ուղերձ մը, բոլորն ալ յայտարար նշաններ զգրոցի կրթական ոգիի յառաջդիմութեան և ուսուցչական կազմին տարուած մը կրթանուէր աշխատանքին։

Հոգ. Տեսուչի տարեկան տեղեկագրի ընթերցումէն ետք, Նախակրթարանի 19 երկսեռ շրջանաւարտները ստացան իրենց վկայականները Գեր. Տեղապահ Սրբազանէն, որ «Պահպանիչ»ով օրհնեց զանոնք ու փակեց հանդէսը։

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԲԵՂԱՆԵՐՈՒ

11 Օգոստոս, Շաբաթ, Վարդավառի հանգստաւոր Նախատօնակէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Քահանայական կոչման սրտագրաւ արարողութիւնը, Ս. Աթոռոյս Սարկաւագներէն Բար. Տիր. Յովսէփ Սրկ. Մամուրի և Բար. Տիր. Նազար Սրկ. Մարգարեանի. Անոնք՝ առաջնորդութեամբ Հոգ. Տ. Տ. Յակոբ և Մաշտոց Վարդապետներու, ծնկաչոք յառաջացան Տաճարի դռնէն մինչև Աւագ Խորան, ուր խարտաւիլակ Գեր. Տ. Հայկազուն Եպս. զանոնք ներկայացուց Ձեռնադրիչ Տեղապահ Սրբազանին. Ապա, պատշաճ աղօթքներէ ետք, ընծայեալները հրաժարեցան հերետիկոսներու դաւէն և ուխտեցին հաւատարմօրէն աշակերտիլ Ս. Եկեղեցւոյ ուղղափառ հայրապետներուն, ու արտասանեցին Հայց. Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան հանգանակը։

Յաջորդ օր, 12 Օգոստոս, պատարագիչն էր Գեր. Տեղապահ Ս. Հայրը, որ ճաշու Դիրքէն առաջ բազմեցաւ Ս. Սեղանին առջև, մինչ ընծայեալները ծնկաչոք բարձրացան Աւագ Սեղան ու ներկայացան ձեռնադրիչ Սրբազանին։ Խարտաւիլակն էր Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան, իրեն աընթերակայ ունենալով Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեանն ու Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բալըլեանը։ Յուզիչ էր պահը, երբ ընծայեալները Աւագ Սեղանի բեմէն դարձան դէպի ժողովուրդ ձեռամբարձ, ինչպէս աշխարհէ իրենց հրաժարման, մինչ դպրաց դասը կ՚երգէր «Աստուածային և երկնաւոր շնորհ ....»։ Ապա, ձեռնադրիչ Սրբազանը անոնց վզին շուրջ բոլորեց իրենց թեւէն կախ ուրարը՝ ինչպէս Յիսուսի քաղցր լուծին, ու յաջորդաբար տուաւ իրենց քահանայական զգեստաւորման բոլոր մասերը, սաղաւարտ, փիլոն, վակաս, գօտի, շուրջառ, եւայլն, տրուչութեան ուրոյն աղօթքներով։ Կը գոցուի վարագոյրը, դպիրներ կ՚երգեն Նորընծաներուն առաջին խորհուրդ խորինը, մինչ անոնք քահանայական լրիւ զգեստաւորումով կ՚երևին Աւագ Սեղանի ճախակողմը։ Սեղան կը բերուի Ս. Միւռոնի ապաւէնին, կ՚երգուի «Առաքելոյ Աղաւնոյ» շարականը։ Օծումի առենն է, ամենէն գրաւիչ պահը արարողութեան։ Ձեռնադրիչ Սրբազանը մի առ մի կ՚օծէ նորընծաներու ճակատն ու զոյգ ձեռքերը Ս. Միւռոնով։ Օծման նուիրական պահուն Յովսէփ Սարկաւագ կը վերակոչուի Տ. Յովսէփ Աբեղայ, իսկ Նազար Սարկաւագ՝ Տ. Մամրէ Աբեղայ: Ապա Տեղապահ Սրբազանը կու տայ իրենց Ս. Պատարագի օկինը, տալով իշխանութիւն մատակարարելու Հաղորդութեան աստուածային խորհուրդը։ Ձեռնադրութիւնը վերջացած է։ Սարկաւագը կը ձայնէ «Ողջոյն տուք միմեանց», ու Տեղապահ Սրբազանը կը համբուրէ իր ձեռնասուններուն օծեալ ճակատը։ Նոյնը կ՚ընէ նաև եկեղեցական դասը, իսկ ժողովուրդը Ս. Պատարագէն ետք, երբ անոնք դասին մէջ լռելեայն կը վերծանէին իրենց առջև բացուած Աւետարանները։

digitised by A.R.A.R.@

կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Տեղապահ Սրբազան Հայրը կատարեց վեղարի տուչութիւնը նորընծաներուն։ Պատշաճ ընթերցումներէ և աղօթքներէ ետք, Սրբազանը հանեց սարկաւագական գլխարկը անոնց գլուխէն ու պատկառազարդեց զանոնք կուսակրօնութեան խորհրդանիշը եղող վեղարով։ Տաճարը լեցնող բազմութիւնը զարմեալ ապրեցաւ հոգեւոր երանութեան պահեր։ Ապա նորընծաները ուղղուեցան Ս. Յարութեան Տաճար, ուր պիտի անցնեն իրենց քառասունքի ապաշխարութեան օրերը, ուսանելով Ս. Պատարագի կարգերը։ Այս շրջանին իրենց ուսուցիչն ու վարժիչն է Հոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիկեան։

Կուտանք իրենց համառօտ կենսագրութիւնը։

**Հոգ. Տ. Յովսէփ Արք. Մամուր** ծնած է Աղեքսանդրիա, 1907ին։ Նախակրթութիւնը ստանալէ ետք տեղւոյն Պօղոսեան վարժարանին մէջ յաճախած է Անգլիական դպրոց ու ապա իր ուսումը կատարելագործած է Անգլիա։ Հմուտ է եւրոպական կարգ մը լեզուներու, ինչպէս նաև Արաբերէնի։ Կրօնաւորելու փափաքը զգալով իր մէջ, 1950ին եկած է Երուսաղէմ և նոյն տարին ստացած Ուրարակրութեան աստիճան։ Ժամանակ մը ծառայած է Ս. Յարութեան Տաճարին մէջ, ապա ընդունուած է Ս. Աթոռոյս Դիւանատունը, որպէս դիւանադպիր հայերէն թղթակցութեանց։ 1954 Օգոստ. 15ին, Տեղապահ Սրբազանէն ձեռնադրուած է Սարկաւագ։

**Հոգ. Տ. Մամբրէ Արք. Մարգարեան** ծնած է Կեսարիա, 1912ին։ 1918ին, որբանալով, մտած է Ատանայի և ապա Բարեգործականի որբանոցները, ուր մնացած է մինչև 1928։ Առեն մը աշխատած է Պէյրութի Ֆրանսական օդակայանին մէջ։ Զբաղած է նաև դերձակութեամբ։ 1950ին եկած է Երուսաղէմ և ընդունուած է Ս. Աթոռոյս ծառայութեան մէջ որպէս աշխատաւոր Միաբան։ 1951ին ստացած է Ուրարակրութեան աստիճան։ Ժամանակ մը ծառայած է ի Բեթղեհէմ և ի Ս. Յակոբ՝ որպէս օգնական լուսարարի։ Սարկաւագ ձեռնադրուած է Տեղապահ Սրբազանէն, 15 Օգոստոս 1954ին։

Սիոն, յանուն Տեղապահ Ս. Հօր, կը մաղթէ որ նորընծաները ըլլան «Մշակ առանց ամօթոյ», ի փառս Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ։

---

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Գատ. Տնօրէն Ժողովոյ որոշումով, Տիար Լեւոն Աւագեանը, որ երկար տարիներէ ի վեր ծառայած է Ս. Տեղւոյս մէջ, գոհացուցիչ իր զարգացմամբ և ծառայութեամբ, յարմար նկատուեցաւ ձեռնադրուելու քահանայ, ի պէտս Ս. Տեղեաց ժամարարութեան։

Շբ. Ապրիլ 7ին, Բեթղեհէմի մեր Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ մէջ, Տիար Լեւոն ստացաւ դպրութեան և Սարկաւագութեան աստիճանները, Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեանէ։

Իսկ Ապրիլ 16ի կէսօրէ վերջ, նոյն Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Լեւոն Սրկ.ի քահանայական կոչման արարողութիւնը։ Յաջորդ օրը, Գշ. 17 Ապրիլին, ի ժամ Ս. Պատարագի և ի ներկայութեան կոկիկ բազմութեան մը, Գեր. Տ. Հայկազուն Եպս. կատարեց յիշեալին քահանայական ձեռնադրութիւնը, օծման պահուն վերակոչելով զայն Տ. Գրիգոր Քահանայ։ Խարտաւիլակն էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Դապարաճեան։

Նորընծայ Տ. Գրիգոր Քհյ. Աւագեան ծնած է 1912ին Պուրկազ (Պուլկարիա)։ Յաճախած է Վառնայի Ազգային Միսաքեան Նախակրթարանը և աւարտած անոր ընթացքը։ 1929-30 աշակերտած է Ս. Աթոռոյս Ժառ. Վարժարանին։ Ապա երկար տարիներ ծառայած է Տնօրինական Սրբավայրերու մէջ և հմտացած է ժամապաշտական արարողութեանց։

Տէր Գրիգոր պիտի ծառայէ Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տաճարին մէջ որպէս ժամարար։

---

## ՀԱՆԳԻՍՏ ԹՐՖԱՆՏԱ ՄԱՅՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Շաբաթ, 4 Օգոստոսի լուսաբացին, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Աթոռոյս Մայրապետներէն Թրֆանտա Սարգիսեան, որ տարիէ մը ի վեր անհանգիստ վիճակ մը ունէր։

Հանգուցեալը ծնած է Զէյթուն, 1883ին։ Արարատեան որբանոցի «Մայրիկ»ը եղած է 4 տարիներ։ 1922ին եկած է Երուսաղէմ և ծառայած է Ս. Աթոռոյս մատակարարութեան հիւղին մէջ որպէս տնտեսուհի։ 1938ին կ'ընդունուի Ս. Ուխտիս Մայրապետաց շարքէն ներս։

Թաղման կարգը կատարուեցաւ նոյն օրը կէսօրէ առաջ ժամը 11ին, Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեանի և ի ներկայութեան բովանդակ Միաբանութեան։ Մարմինը ամփոփուեցաւ Զամ-Թաղի գերեզմանատան մէջ։

Տէրը թող յաւիտենական հանգիստ պարգևէ իր հոգիին։

digitised by A.R.A.R.@

# ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութիւնը խորին շնորհակալութեամբ ստացած է Ժառանգ. Սաներու բարերարներէն հետեւեալ գումարները:

Լոնտոնէն Տէր եւ Տիկին Փեթրակ Իզմիրլեան իր սանին 1956ի տարեվճարը 50 Սթերլին

Ամերիկայէն Տիար Ալեքս Մանուկեան՝ կը վճարէ իր սանին 1956ի տարեվճարը 500 Տոլար

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| » | Դատերբ Վարդանայ | » | » | 1956ի | » | 400 | » |
| » | Գրիգոր եւ Արաքսի Կարապետեան | | » | 1955ի | » | 125 | » |
| » | Ժան Միրաք | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Արմէն Սուլթանեան | » | » | 1955ի | » | 100 | » |
| » | Գէորգ Խորիկեան | » | » | 1955ի | » | 125 | » |
| » | Ճէյմս Կապրիէլ | » | » | 1955ի | » | 500 | » |
| » | Կիւրճեան Եղբարք | » | » | 1955ի | » | 500 | » |
| » | Պրուքլինի Տիկնց. Բարես. Միութ. | » | » | 1955ի | » | 200 | » |
| » | Ալպէրթ Մարտիրոսեան | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Հէտիցեան Եղբայրներ | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Ալեքս Մանուկեան | » | » | 1955ի | » | 500 | » |
| » | Խորէն Անսպիկեան | » | » | 1956ի | » | 250 | » |
| » | Հայկ Գաւուգճեան | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Էտվըրտ Մարտիկեան | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Օննիկ Թապիպեան | » | » | 1956ի | » | 125 | » |
| » | Քարլ Պաճատուրեան | » | » | 1956ի | » | 125 | » |
| » | Մկրտիչ Սէլվեան | » | » | 1956ի | » | 125 | » |
| » | Տիկ. Բերուզ Պապայեան | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Քերովբէ Պտուկեան | » | » | 1956ի | » | 250 | » |
| » | Փաստրմաճեան Եղբարք | » | » | 1956ի | » | 250 | » |
| » | Խաչիկ Շիրոյեան | » | » | 1956ի | » | 250 | » |
| » | Խորէն Խոլլիկեան | » | » | 1955ի | » | 500 | » |
| » | Բիթըր Ադամեան | » | » | 1956ի | » | 500 | » |
| » | Քլիվլէնտի Հայ Գաղութ | » | » | 1956ի | » | 500 | » |
| Ռիչըրտ Սարաֆեանի բարերարի վճարումին մնացորդը | | | | 1955ի | » | 115 | » |

Ընդհ. Գումար 8940 Տոլար

Այս առթիւ, Տեսչութիւնս Տնօրինական Ս. Տեղեաց մէջ կը մաղթէ իր բարերարներուն երկար եւ առողջ կեանք, եւ կ'աղօթէ որ Տէրը հատուցանէ իրենց «մէկին ընդ երեսուն, մէկին ընդ վաթսուն եւ մէկին ընդ հարիւր», ըստ Աւետարանական բանին:

Օրհնութեամբ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊՍ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

تصدرها – بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول – صاحب النيافة الاسقف هايكازون أبراهميان
يوليو – أغسطس ١٩٥٦ تطبع في مطبعة دير الارمن – القدس العدد ٧ – ٨

Proprietor – His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor – Bishop Haïgazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@

## «ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՏԷՐ-ԶՕՐ – Հեղինակ՝ Աղէտէն Վերապրողներ: Նուէր «Լրաքեր»էն:
JOURNEY THROUGH SOVIET ARMENIA – Marietta Shaginyan. Նուէր ըստ նախորդին:
CATECHISM OF THE ARMENIAN APOSTOLIC HOLY CHURCH – Father Bedros Kassardjian (donor).
Լեւոն Ճէրահեան կը նուիրէ ԳՐԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑԻ 1955 եւ 1956 տարիները:
ՆՈՐ ԵՐԳԵՐ – Օրուս 5: Վազգէն Զագմագճեան (Նուիրատու):
ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ – Ց. Պարոնեան: Հրատ. եւ նուէր Սամի Կարօ Գրա-
ԱՂՔԱՏԻՆ ՊԱՏԻՒԸ – Ա. Ալթունեան: Նուէր «Մշակ» Տպարանէն: [տան:
ՇԻՐԱԿ ԵՐԳԱՐԱՆ – Բ. Տպագրթ.: Նուէր Կ. Հաննէսեանէ:
ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ – Վեր. Ց. Մանուշակեան (Նուիրատու): [Նոյն:
ՄԱՐԴՈՑՄԷ ՁԱՅՆՈՒԻՆՔ ԹԷ ՄԵՂՔԵՐԷՆ ՀՐԱԺԱՐԻՆՔ – Հեղինակ եւ նուէր ըստ վեր-
ԺԱՄԱՆԱԿԸ ԱՐԱՐՁԻՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԼՐՏԵՍՆ Է – Հեղինակ եւ նուէր ըստ վերնոյն:
ՀԱՅԵՐԸ – Ուալդըր Քոլարզ: Կը նուիրէ ոմն:
ՅՈՒՇԱՐՁԱՆ ԽՕՋԱԼԱՏՑԻՆԵՐՈՒ: Կը նուիրէ Վահէ Հայկ, Ֆրէզնօ:
WILL AT LONG LAST THE SILENT SPHINX SPEAK? C. M. Ward.
ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ – Գ. Տարի (1956): Կարօ Գէորգեան (Նուիրատու):
ՀԱՅԱՍՏԱՆ 1955 – Հրատ. եւ նուէր «Այգ» օրաթերթի:
RUSSIA IN THE SHADOWS – H. G. Wells. Նուէր Սիմոն Ղարիպեանէ:
ԴԱՇՆԱԻՈՐԵԱԼ ՔԱՌԱՁԱՅՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ: Կոմիտաս Վրդ.:
Նուէր Պէյօղլուի Դպրաց Դասէն, Իսթանպոլ:
ՆԱՐԵԿ Աշխարհաբար (Դ. Տպ.) – Աշխ. Թրգմ. Թ. Ե. Գ.: Նուէր Ս. Աթոռոյ Տպարանէն:
ՕՐԱՑՈՅՑ 1956 Ս. Աթոռոյս Երուսաղէմի – Նուէր ըստ նախորդին:
ՕՐԱՑՈՅՑ 1955 Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ: Նուէր Սեդրաք Լափաճեանէ:
ՕՐԱՑՈՅՑ 1956 » » » : Նուէր Արտաւազդ Վրդ.է:
ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՒՈՅ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳԵՐ (Մեքենագրուած): Նուէր
Թորգոմ Վրդ. Մանուկեանէ:
ԵՐԳԵՐ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՒՈՅ: Հրատ. Թորգոմ Վրդ. Մանուկեան
ՄԱՅՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ – Ատրինէ Տատրեան (Նուիրատու): [(Նուիրատու):
ՁԱՐԹԻԿ ՀՕՐՔՈՒՐԻՆ ՏՈՒՆԸ – Բիէս 2 արար: Ատրինէ Տատրեան եւ Բագրատ Թէւ-
եան: Նուէր «Պարտէզ»էն, Իսթանպոլ:
ՄԹԻՆ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ – Վազգէն Շուշանեան: Հրատ. եւ նուէր Գ. Սեւան Գրատան:
Ա. ՆԻԿՈԼԸ ՈՂՋ . . . : Նուէր «Ցուսաբեր»էն:
ՎԱՐԴԱՆԱՆՔ – Բ. Կ. Ժամկոչեան (Նուիրատու):
ԱՆԱՆՈՒՆ ՏՂԱՆ (Է. Էվըրէթ-Կրին) եւ ՈՋ ՈՔ ԿԸ ՍԻՐԷ ԶԻՍ (Օ. Ֆ. Ուալթօն): Թարգ-
մանեցին Ա. Բ. Ժամկոչեան եւ Ա. Ա. Թոփուզեան (Նուիրատուներ):
ԵՐԳԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ՁԱՅՆԱՊՆԱԿՆԵՐՈՒ (Գ. Տպ.): Հրատ. եւ նուէր Վանլեան եղբարց:
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ – Գէորգ Դարֆի: Նուէր «Ալիք»էն:
ՎԻԿՏՈՐԻԱ – Կնուտ Համսուն: Թրգմ. Խ. Զաւէն: Նուէր ըստ նախորդին:
ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ – Արձակ Էջեր (Բ. Հատոր): Հրատ. եւ նուէր «Էտվան»ի:
ԴԱՐ ՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (1850–1950): Մինաս Թէօլէօլեան: Հրաա. եւ նուէր «Ցուսա-
ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ – Սիմոն Վրացեան (Նուիրատու): [բեր»ի:
A HISTORY OF THE ECUMENICAL MOVEMENT 1517–1948. Edited by Ruth Rouse &
Stephen Charles Neil. Presented by the Disciples of Christ, London.
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ (Բ. Հատոր): Արշակ Ալպօյաճեան (Նւրա.):
ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ – Անդրանիկ Ծառուկեան: Մատենաշար եւ նուէր
«Համազգային» Ընկերութեան:

(Շարունակելի)

digitised by A.R.A.R.@

# Յ. Օշական
# Համապատկեր




Մամլոյ տակ է «Համապատկեր»ի Դ. Հատորը
Այս գիրքով ամբողջացած կ'ըլլան Յ. Օշականի «Համապատկեր»ի հինգ հատորները, որոնց սպառումով կարելի կ'ըլլայ յաջորդներուն հրատարակութիւնը:

digitised by A.R.A.R.@